ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆ



ԱԿԱՄԱ ԵՐԳԻԾԱԲԱՆՆԵՐ

ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱԿԱՄԱ ԵՐԳԻՉԱԲԱՆՆԵՐ

Նկարիչ
ԳԵՈՐԳԻ ՅԱՐԱԼՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
«ԳԻՐ ԳՐՈՅ»
1993

ԳՄԴ 82.3 Հ—6
Ս 259

«Գիր գրոց» հրատ. գլխավոր խմբագիր՝
բանասիրական գիտությունների թեկնածու
ՎԱՀԱԳՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Սարգսյան Մ. Դ.
Ակամա երգիծաբաններ: Երգիծական մանրապատումներ.— Եր.: Գիր գրոց, 1993.— 153 էջ, նկ.:

Երգիծական մանրապատումների հերոսները հանրահայտ մարդիկ են՝ գրողներ, արվեստագետներ, քաղաքական գործիչներ, որ ընթերցողին ներկայանում են հաճախ պարզ ու զավեշտական, ուրախ ու կենսասեր, հաճախ՝ խոր ու իմաստուն, իրենց ինքնատիպ խառնվածքի թևավոր տարերքի մեջ: Հեղինակի գրչի տակ կյանքից առնված պատումները մի որոշ չափով գեղարվեստականանում են, հարստացնելով կենսախինդ, ուրախ օրվա բազմագույն խճանկարը:

470208025
Ս————————93 (7)
830(01)93
© Սարգսյան Մ. Դ., 1993:
ISBN 5—8079—0868—6

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Ակամա երգիծաբաններ» ժողովածուն մեր ձեռքի տակ եղած նյութի առավել փոքր մասն է: Կարծում ենք ընթերցողը ճիշտ կընկալի գրքի արժանիքը, քանզի այստեղ երթևեկող հերոսները ոչ միայն իրական դեմքեր են, այլև մշակույթի երևելի ներկայացուցիչներ, որոնց խոսք ու զրույցը չեն առնչվում էժանագին սենսացիաներին: Նրանց սրամիտ խոսքն ու շողշողուն հումորը հեռու են զազրախոսությունից և հաճախ հասնում են թևավոր խոսքի:

Վաղուց էր հասունացել մտահղացումը, սակայն շատ էին նկատառումները. ամենից առաջ՝ պահպանել վավերականությունը, զերծ մնալ անհարկի գրողական միջամտությունից և, միևնույն ժամանակ, թույլ չտալ մշակույթի ներկայացուցիչների նկատմամբ վիրավորական արտահայտություններ, վուլգար ու հայհոյախառն սրամտություններ: Հավատարիմ մնալով այս սկզբունքին, ցանկանում ենք կրկնել ըմբռնումով վերաբերվելու, վերջերս այնքան չարչրկված արտահայտությունը: Այսքան:

ՀԵՂԻՆԱԿ

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԴԵՐ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1954 թվականն է: Աշուն: Հայաստանում ընթանում է գրողների միության 3-րդ համագումարը: Ժամանել են հյուրեր համարյա բոլոր հանրապետություններից, Մոսկվայից: Մոսկվայի պատվիրակությունը գլխավորում է Կոնստանտին Սիմոնովը: Հաշվետու-զեկուցումից հետո (Գուրգեն Բորյան), ձայնը տրվում է Կոնս. Սիմոնովին, որի ելույթը, ինչպես պարզվում է, սովորական ելույթ չէ, այլ մոսկովյան էշելոնի գաղափարական մեկնակետը, որը վշտացնում է գրական ավագանուն իր անողոք հարցադրումներով և էլ ավելի սուր եզրակացություններով: Պարզվում է, որ խորհրդահայ գրողները հեռացել են գրականության զարգացման սոցիալիստական ռեալիզմի մայրուղուց և, փոխանակ խորհրդային կյանքն արտացոլելու, տուրք են տալիս պատմական թեմատիկային: Զախջախիչ խոսքեր են ասվում Դեր. Դեմիրճյանի «Վարդանանք», Ստ. Զորյանի «Պապ թագավոր» վեպերի, Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ», Խաչիկ Դաշտենցի «Տիգրան մեծ» դրամաների, Վիգեն Խեչումյանի «Զվարթնոց» գրքի, Ռաֆայել Արամյանի Կոմիտասին նվիրված պատմվածքների հասցեին:

Ընդմիջմանը Ռաֆայել Արամյանը, Խաչիկ Դաշտենցը, Վիգեն Խեչումյանը հավաքվել են Ավ. Իսահակյանի և Դեր. Դեմիրճյանի շուրջ և հորդորում են Դեմիրճյանին ելույթ ունենալ և պաշտպանել հայ գրականությունը սիմոնովյան հարձակումներից:

— Միայն դուք կարող եք այդ անել, վարպե՛տ, —դիմում են Դեմիրճյանին:

Իսկ Դեմիրճյանը ցանկանում է ջահելներին թշել, որ չխաղան, առանց այն էլ իր լարված ջղերի հետ, բայց ո՞ւմ ես ասում: Տղաները կպել ու չեն պոկվում Դեմիրճյանից: Իսկ Իսահակյանը լսում է ու ժպտում: Վերջում, երբ խնդրատուներն հանում են համը, գործին միջամտում է Իսահակյանը.

— Իմացեք, տղանե՛ր, այսօր Դեմիրճյանը ելույթ չի ունենալու, հանգիստ թողեք նրան: Նսեմ իմացեք, Դեմիրճյանի մեջ ապրում են երկու քա-



ջեր· Քաջ Վարդանը և Քաջ Նազարը: Այսօր Քաջ Նազարի օրն է, վաղը՝ Քաջ Վարդանի: Վաղը Դեր· Դեմիրճյանը ելույթ կունենա...

Եվ իրոք, հաջորդ օրը Դեմիրճյանը ելույթ է ունենում, այն էլ ի՜նչ ելույթ.. Եվ մարգարեանում է Իսահակյանը...

Ավ. ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Շրջապատել ենք մեծ բանաստեղծին: Կլանում ենք նրա յուրաքանչյուր բառը, յուրաքանչյուր խոսքը: Իսկ նա սիրում է մեր՝ երիտասարդներիս շրջապատը: Հարցնում է՝ որտե՞ղ ենք ծնվել, ովքե՞ր են մեր արմատները, քնի՞կ ենք, թե՞ գաղթական:

— Օրինակ դու, տղա ջան, որտեղացի ես...

— Զանգեզուրցի եմ...

— Դո՛ւ...

— Շիրակցի եմ...

— Դո՛ւ...

— Ղարաբաղից...

— Դո՛ւ...

— Ջավախքից...

Եվ այսպես բոլորին, մեկիկ-մեկիկ: Հարցեր, բայց ոչ անկետային, այլ՝ Իսահակյանական: Բոլորին ասելու, խորհուրդ տալու, ինչպես ասում է՝ ազգնուտակը իմանալու պահանջ ունի մեր վարպետը: Նայում է ինձ.

— Ջավախքից ես, էս մեկն էլ Շիրակից է: Երգի, հեքիաթի և բանաստեղծության աշխարհից եք, իսկ ղարաբաղցիք ու մյուսները մեր երգն ու բանաստեղծությունը պահպանող մարտիկներն են, սասունցիք ու մշեցիք մեր ծուռ դավիթներն են, ֆիդայիները, նախիջևանցիները՝ մեր գողթան երգերն ու առասպելները հորինողները: Այսպես է հայոց աշխարհը, ամեն գավառը մի աշխարհ, իր բնորոշ բառ ու բանով, արհեստներով ու արվեստներով...

Հետո լռում է: Խորհում է կզակը ցուպին հենած:

— Այ, կարո՞ղ եք ասել, ով է մեր մեծագույն բանաստեղծը,— և նայում է քննախույզ ժպիտով:

— Դո՛ւք...,— միաբերան ասում ենք բոլորս:

Իսահակյանի հայացքում կասկած կա: Երևի համաձայն չէ:

— Լավ բան եք ասում,— ժպտում է,— եթե ես հավատամ: Իհարկե, քաղաքավարությունը և ծերուկիս չվշտացնելու ցանկությունն է խոսում ձեր գնահատականի մեջ, այլապես կասեիք, որ մեր մեծագույնը Օհանեսն է, Թումանյանը, որ նրա երգ ու բանաստեղծություններով, ասք ու առասպելով, նրա հայկականությամբ է լցված հայ աշխարհը: Նրա անմահությունն անգամ գընալով պետք է զորանա, մինչ շատերի աստղերը կխավարեն ժամանակի անողոքությունից, նրա աստղը գնալով պիտի մեծանա, հզորանա արեգակի նման...

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ ԵՎ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Հիսունական թվականների կեսերն էին: ԽՍՄԿԿ 20-րդ համագումարից հետո սկսվել էր անհատի պաշտամունքի սուր քննադատությունը և ստալինյան բռնապետության զոհերի ռեաբիլիտացիան: Եղիշե Չարենցի բարի անունը, որ անողոք ժամանակաշրջանն անգամ անզոր եղավ ստվերել, արդեն վերադառնում էր ժողովրդին, որպեսզի նրա հետ ապրեր իր անմահությունը: Կենտկոմում կազմվում էր նրա ժողովածուն: Հանրապետությունը պատրաստվում էր նշելու իր մեծ զավակի 60-ամյակը: Ժողովածուն կազմելիս առաջացավ նրբին մի հարց: Ինչպես վարվել Եղիշե Չարենցի «Էլեգիա գրված Վենետիկում» պոեմի հետ, ուր հեղինակը քննադատում էր Ավետիք Իսահակյանին, նրա հին և, այսպես կոչված, մանր-բուրժուական հայացքները: Որոշվեց ձեռնպահ մնալ այս գործից, որպեսզի ցավ չպատճառվեր 80-ամյա մեր դասականին:

Այս լուրը հասել էր Ավ. Իսահակյանին, որի վերաբերմունքը պոեմը ժողովածուից հանելու փաստին բավական բուռն եղավ: Մի օր Կենտկոմի աշխատողներս լսեցինք, որ Վարպետը դուրս է եկել գրողների միությունից և գալիս է Կենտկոմ: Լուրը արագ հասավ Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Թովմասյանին, որը բանաստեղծին դիմավորեց հիմնարկի շքամուտքի առջև և ուղեկցեց դեպի իր ընդունարանը: Հանդիպումը բանաստեղծի հետ տևեց մեկ ժամ, որից հետո Ավ. Իսահակյանին մեքենան տարավ գրողների տուն, իսկ մեզ՝ մշակույթի բաժնի աշխատողներիս, հրավիրեցին առաջին քարտուղարի մոտ:

— Մեծ մարդ է Վարպետը,— խոսեց Սուրեն Թովմասյանը,— նա խոր վիրավորանք է ապրում, որ Չարենցի ժողովածուից հանվել է «Էլեգիա գրված Վենետիկում» ստեղծագործությունը: Նա ասաց, որ միանգամայն ճիշտ է Չարենցը իր գնահատականներում. «Եթե չարենցյան ժողովածուից այդ գործը հանվի, դուք ինձ՝ ութսունամյա ծերուկիս, բարոյական մեծ հարված հասցրած կլինեք, խնդրում եմ «Էլեգիան...» վերադարձրեք ժողովածու»: Ես կարծում եմ,— այնուհետև ասաց Սուրեն Թովմասյանը,— մենք իրավունք չունենք նեղացնելու Վարպետին և հարկավոր է անհապաղ վերականգնել «Էլեգիան...»:

Քարտուղարն այնուհետև կարդաց մի երկտող, որ նրան հուշել էր բանաստեղծը.

Ապրեի, տեսնեի Անին ազատված,
Մեռնեի, չտեսնեի Սևանը ցամաքած...

— Բանաստեղծն այնքան էր հուզված, որ Սևանի անունը տալուն պես, լցվեցին աչքերը: Եվ ես նրան խոստացա՝ ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները Սևանի փրկության համար...

Այսպես ավարտվեց իսահակյանական միսիան՝ հաղթանակով:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ
ԱԽԱԼՑԽԱՅՈՒՄ

Վարպետը 1940 թվականի ամռանը եղավ Ախալցխայում: Այցելեց նաև գյուղերը: Ամառային գյուղատնտեսական աշխատանքների եռուն շրջանն էր և հասկանալի է, որ կոլտնտեսականները գտնվում էին հանդերում և այգիներում: Գյուղերից մեկում հանդիպումը բանաստեղծի հետ կայանում է դաշտում, սաղարթախիտ ծառի տակ: Հանդիպմանը մասնակցում է ողջ գյուղը: Բանաստեղծի երկրպագուները պարզապես հարցախեղդ են անում սիրելի գրողին: Եվ ահա տարօրինակ հարց է տալիս մի գեղջկուհի.

— Վարպե՛տ,— ասել է նա,— ինչո՞ւ 1905 թվականին դուք ընկաք Հոռոմսիմի գիրկը...

Պայթել է ծիծաղը: Վարպետն անմիջապես կռահել է, որ խոսքը վերաբերում է հոռետեսություն բառին և գեղջկուհին հարց է տվել ինչ որ մեկի թելադրանքով, որ պետք է հասկանալ այսպես. ինչո՞ւ դուք 1905 թվականին ընկաք հոռետեսության գիրկը: Եվ բանաստեղծը պատասխանել է իրեն հատուկ հումորով.

— Ի՜նչ արած, հարգելիս, քո գիրկն ընկնել չհաջողվեց, ես էլ ստիպված ընկա Հոռոմսիմի գիրկը...

ԲԺՇԿԻ ՄՈՏ

Զգիտեմ վավերական փաստ է, եղելություն, թե ժողովրդական ստեղծագործություն, սակայն միշտ պատմվում է՝ առաջացնելով լսողների բարի ծիծաղը: Դերենիկ Դեմիրճյանը մի քանի անգամ, նույնիսկ անառիթ, գլուխ է գովել Իսահակյանի մոտ՝ իր չթառամող առնականության, իր սիրային արկածների մասին, շարժելով կենսասեր Վարպետի նախանձը, որի վերահաս ծերությունն արդեն զսպանակելիս է եղել բանաստեղծի սիրային բռնկումներն ու եռանդը: Եվ բանաստեղծը ճարահատյալ դիմել է բժշկին, խնդրելով վերականգնել ձեռքից գնացած իր առնականությունը: Բժիշկն օրորել է գլուխը թերահավատորեն.

— Ուշ է, Վարպետ, ո՜ւշ է...

— Ինչո՞ւ Դեր. Դեմիրճյանի համար ուշ չէ, չէ որ մենք հասակակիցներ ենք, բայց նա տակավին ջահել է, կայտառ...

— Ո՞վ է ասում,— հարցնում է բժիշկը:

— Ինքը, ինքն է ասում...

—Դու էլ ասա,— ժպտում է բժիշկը:

ԿԵՐ, ՏՂԱ ՋԱՆ

Իսահակյանի տան վրա ՊԱԿ-ը դրել էր իր գործակալը, որ հետևի ելումուտ անողներին և ի՜նչ իմանաս, թե էլ ինչ է հետաքրքրել այդ սարսափելի հիմնարկությանը: Բայց այս դեպքը կատարվել է 1955-ին, բանաստեղծի ծննդյան 80-ամյակի օրերին: Ավ. Իսահակյանի օջախում հյուրընկալվում են սիրուքահայ գործիչներ, գրողներ: Այգում ծխում են խորոված ու քյաբաբը: Մաղում է աշնանային սառն ու մանր անձրևը: Իսկ ՊԱԿ-ի աշխատակիցը փողոցի անկյունում կանգնած հսկում է ելումուտ անողներին, աշխատելով բաց չթողնել ոչ մեկին, այնպես որ հավքն իր թևով, օձն իր պորտով անկարող է առանց իրեն մատնելու թափանցել մեծ բանաստեղծի բնակարանը: Ահա այդ պահին էլ կատարվում է մի զարմանալի երևույթ, որի համար էլ, ասում են, հիմնարկի բծախնդիր ղեկավարները ստիպված են եղել հանել իրենց դիտորդ գործակալին: Բացվում է Վարպետի տան շքամուտքի դուռը և խորոված ը լավաշի մեջ փաթաթած, Վարպետը դուրս է գալիս և ուղղվում դեպի գործակալը: Մոտենում է և մեկնում խորոված ը լրտեսին.

— Վերցրու, տղա՛ս, տեսնում եմ այս ցուրտ ու թաց օրով չարչարվում ես, մի՛ քաշվիր, վերցրու՛...

ԿԻՆ ԵՎ ՏՂԱՄԱՐԴ

Երևանում և աշխարհում նշվում է Իսահակյանի ծննդյան 80-ամյակը: Մի օր Արաքսի Էդիլյանն ինձ հայտնում է, որ ինքը կցանկանար իր տանը, հյուրերի թվում տեսնել նաև ինձ: Եվ կցանկանայի՞ արդյոք ես ներկա լինել Վարպետի ընդունելությանը:

— Իհարկե,— խանդավառվում եմ ես: Ով չի ցանկանա մի ամբողջ երեկո անցկացնել Ավ. Իսահակյանի հետ...

Ես այն ժամանակ աշխատում էի ՀԿԿ Կենտկոմում, կուլտուրայի բաժնում: Այնտեղ էր աշխատում նաև Արաքսի Էդիլյանը, զարգացած և լայն հետաքրքրությունների տեր մի կին, որ աշխատում էր որպես մեքենագրուհի-աղագրուհի և վայելում էր Իսահակյանների ընտանիքի բարեկամությունն ու հարգանքը:

Հյուրերն արդեն հավաքվել էին, երբ երևաց բանաստեղծն իր տիկնոջ հետ: Նա քննախույզ հայացքով չափեց սեղանի շուրջ բոլորած մարդկանց և առանց ձևականությունների քայլեց դեպի երիտասարդների թևը: Տարեց կանայք աղմկեցին.

— Վարպե՛տ, դուք դավանանում եք ավագանուն, ինչո՞ւ եք լքում մեզ...

— Գիտեք ինչու,— մեղավորի նման ժպտաց բանաստեղծը,— ձեզ մոտ եթե նստեմ, մեր երե-

կոն կկորցնի իր փայլն ու ուրախությունը: Տարեց մարդիկ ենք, պիտի խոսենք մեր հիվանդություններից, արյան ճնշումից, սրտային երևույթներից, մեջքի ցավերից և այլն, և քեֆի սեղանը վերածենք պոլիկլինիկայի, իսկ ջահելների երգն ուրիշ է, սիրահարություն, բանաստեղծություն, աղջիկներ... Մի խոսքով, նրանց հետ լավ է, հաճելի...

Տարեցները նեղացած խաղացին, երիտասարդներն ուրախացան և սեղանն սկսեց, ինչպես ասում են, աշխատել: Իմ կողքին նստած էր սեղանի թագուհին, գեղեցիկ մի աղջիկ, որը սիրահարվածի հայացքով նայում էր Վարպետին: Ճշմարտությունը պահանջում է ասել, որ Վարպետը և՛ս «տեսել էր» սիրունին և հիացմունքից լուսավորվել էին նրա ծերունական աչքերը: Աղջիկն անպայման ցանկանում էր հարցեր տալ բանաստեղծին, ունկնդրել նրան.

— Վարպետ, կարելի՞ է ձեզ մի հարց տալ...

— Իհարկե, կարելի է, սիրուն ջան,— գյումրեցու շեշտված ակցենտով պատասխանեց Վարպետը:

— Ուզում եմ իմանալ, ինչո՞ւ է հասարակությունը ներում կամ աչք փակում տղամարդու անառակության նկատմամբ և չի ներում, անարգանքի սյունին է գամում կնոջ նույն արարքը...

Իսահակյանը ժպտաց.

— Ասեմ, աղջիկ ջան, եթե տղամարդը անառակություն է անում (լավ է սիրահարություն ասել), կնշանակե, իր տան բաց պատուհանից թքում է դուրս: Եթե նույնն անում է կինը, կնշանակե՝ տան բաց պատուհանից թքում են ներս...

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎՈՒՄԸ

Քիչ հետո սիրունիկը տվեց երկրորդ հարցը.

— Վարպետ, ի՞նչ է երջանկությունը...

— Երբ ջահել էի, ասում էի՝ երջանկությունը սիրելու մեջ է, դարձա հասակավոր, ասում էի՝ երջանկությունը ջահելության մեջ է, հիմա, երբ հիվանդ եմ, ամոթ չլինի ասելը՝ չեմ կարողանում մոգել, ասում եմ՝ երջանկությունը մոգելու մեջ է...

Ավելորդ է ասել, որ այս բանաձևումը ծափ ու ծիծաղի հրավառություն առաջացրեց ունկնդիրների մեջ...

ԶՐՈՒՅՑ

Ավետիք Իսահակյանն ու Գուրգեն Բորյանը հանգիստ զրուցում էին, այսինքն, գրողների միության նախագահն ու առաջին քարտուղարը: Այցելությանս նպատակը չեմ հիշում: Քիչ անց, կարծեմ Գուրգեն Բորյանն ասաց, որ Գևորգ Աբովը հիվանդ է, ուղեգիր է խնդրել, հարկավոր

է օգնել մարդուն: Հետո, իմիջիայլոց, չասելու նման, ասաց.

— Վարպետ, դուք գիտե՞ք, որ Գևորգ Աբովն այնքան էլ բարյացակամ չէ ձեր նկատմամբ...

Վարպետը լարվեց: Գուրգեն Բորյանի դեմքով ստվեր անցավ: Բայց արդեն ուշ էր և արգելակելն էլ միտք չուներ:

— Իսկ ի՞նչն է բանը...

— Ախր նա ժամանակ առաջ մտել է Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի մոտ մի անմարդկային առաջարկով, թե՝ ժամանակը չէ արդյոք Իսահակյանին մեկուսացնելու: Նրա տունը դարձել է դաշնակցականների հավաքատեղի, որոնք թափանցում են Սփյուռքից և զանազան հակասովետական թափթփուկների ժողովարան...

— Իսկ Գրիգոր Հարությունյանն ի՞նչ է պատասխանել...

— Նեղացել է, անպատվել, ասելով, որ նման հիմարություններ անել և նույնիսկ ասել ոչ ոքի թույլ չի տա, որ Իսահակյանը համաշխարհային անուն է, մեր ժողովրդի պարծանքը, ինչպես կարելի է դիպչել մի մարդու, որ մարմնավորում է Հայաստանը, քայլող Հայաստան է...

— Լա՛վ է, լա՛վ, նույնիսկ օրթոդոքս կոմունիստը պաշտպանում է իմ ազատությունը,— ծիծաղեց Իսահակյանը և հետո մտախոհ,— որքան հիշում եմ ես Գևորգ Աբովին լավություն չեմ

արել, ինչո՞ւ է նա փորձել ինձ վատություն անել, անհասկանալի է...

— Վատություն լավությա՞ն դիմաց...,— զարմացա ես:

— Այո՛, երիտասարդ, կյանքի օրենքն է այդպիսին: Լավությունը չի կարող անպատիժ մնալ: Բայց այս պարագային կարծես չի գործել այս ճշմարտությունը...

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԸ՝ ՊԱՐՏԱՏԵՐ

Դեր. Դեմիրճյանն իմ հայրենակիցն էր: Գիտեր, որ բանաստեղծություններ եմ գրում, բայց ոչ մի անգամ չխրախուսեց, հետաքրքրություն չցուցաբերեց և չկարդաց իմ չափածոն: Ես էլ չէի մղվում նրա կարծիքն իմանալու, կռահելով, որ դրանից բան դուրս չի գա, որովհետև նա մի քանի անգամ կրկնել էր, որ.

— Եթե կարող ես արձակ գործեր ստեղծել, ստեղծիր, չես կարող՝ թարկ տուր...

Սա իմիջայլոց, բայց իմ հազվադեպ այցելություններին իրենց տուն, չնայած ոչ այնքան հյուրընկալ բնավորությանը, սիրում էր խոսք բանալ հայրենի Զավախքից, մանավանդ Ախալքալաքի հնաբնակներից, որոնց ես լավ չգիտեի: Հիշում էր քաղաքի ու քաղաքամերձ տեղանուններ և երբ լրացնում էի իր իմացածը՝ ոգևորվում էր ու փոխվում: Զգում էի, որ հուզվում է, կարո-

տում իր ծննդավայրը, ուր չէր եղել ավելի քան չորս տասնամյակ: Եվ մեղավորը սրտի ասթմատիկ հիվանդությունն էր և ծննդավայրի բարձրագահ լինելը:

Հիշում եմ նրան ասացի, որ հարկավոր է գոնե մի անգամ լինել Ախալքալաքում, ախր նեղանում են մեր հայրենակիցները: Սաստիկ նեղացավ. «Ի՞նչ է, չե՞ս հասկանում, որ իմ այս սրտով այն բարձր աշխարհում չեմ կարող մի օր իսկ ապրել, կգնամ պապերիս մոտ»: Բայց օրեր անց ասաց, որ երկար մտածել է Ջավախք գնալու մասին. «Կանենք այսպես. կնստենք գնացք և կգնանք Թիֆլիս: Մի շաբաթ կմնանք, կկլիմայափոխվենք: Այնուհետև կգնանք Ախալցխա: Կկլիմայափոխվենք: Կլիմայափոխությունը մեր ճանապարհորդության կարևորագույն էլեմենտն է: Մի շաբաթ էլ կմնանք Ախալցխայում: Հետո կնստենք ավտոբուսն ու կբարձրանանք Ջավախք: Երեկոյան կհանդիպենք հասարակության հետ, իսկ մյուս առավոտյան՝ պուկ, Լենինականով դեպի Երևան»: Հետո ոգևորված՝ լավ եմ մտածել, չէ՞...

— Բայց քիչ չէ՞ մեկ երեկոն...,— անմտորեն ջուր եմ լցնում նրա ոգևորության վրա:

— Նույնիսկ շատ է, ասող-խոսողը սիրտս է, ես չեմ,— ավարտում է նա:

Բայց ես ցանկանում եմ պատմել ևս մի դեպք նրա կյանքից, ուր երևում է նրա բնավորությունը,

հարդկային նրա որակը, որ բավական հակասական է ժամանակակիցների հուշերում:

Հիսունական թվականների սկզբներն էին: Մեր գրողներից երկուսը մի օր դիմեցին ինձ միջնորդել Դեմիրճյանին, որ իրենց 1000-ական ռուբլի փող տա պարտքով, արդեն մարդկանց դռները թակող նոր տարուն պատշաճորեն դիմավորելու համար: Դեմիրճյանի խստակյաց բնավորությունը և նրա նկատմամբ իմ ծայրահեղ պատկառանքը թույլ չտվին ինձ դիմելու նման համարձակության և ես մերժեցի տղաներին: Սակայն պարզվեց, որ նրանք ձեռք քաշողը չէին, մանավանդ նրանց լեզվի առջև նահանջեց իմ համառությունը: Եվ մենք քայլեցինք դեպի գրողի տուն: Ճանապարհին, տղաներին ասացի, որ Դեմիրճյանի զրույցների սիրած թեման հայրենասիրությունն է, և եթե խոսելու իրավունք ու հնարավորություն ստեղծվի, խոսեն այդ թեմայով: Սրտադող սեղմեցի դռան զանգի կոճակը: Դուռը բացեց ինքը՝ Վարպետը, գրկած իր սիրելի կատուներին: Հաղացքում հայտնվեցին հարցականներ: Ինչո՞ւ ենք եկել: Սակայն մի կողմ քաշվեց և ճանապարհ տվեց մտնելու: Մտանք: Դեմիրճյանը երևաց, որ տրամադրված էր խոսելու: Այստեղ իր լեզվով ու պատմամիմացությամբ «փայլեց» Ս.-ն, որն այնպիսի մի հայրենասիրական բուքուբորան սարքեց, որ Դեմիրճյանը դժվար է ասել, վախեցա՞վ, թե զգուշացավ: Նրա հայացքը մեխվեց ինձ վրա: «Ինչե՞ր է խոսում, չլինի հանկարծ...»: Ես նշա-

նացի հասկացրի, որ խոտակիցներս անվնաս մարդիկ են: Բայց քիչ անց հոգնած Դեմիրճյանն ինքը վերջակետ դրեց խոսքուզրույցին.

— Լավ, դե ասեք, ինչո՞ւ եք եկել...

Ս.-ն պինդ հուպ տվեց ոտքս, իբր թե՝ խոսի՛ր...

— Վարպե՛տ, տղաները եկել են փող խնդրելու, նոր տարին մարդավարի անցկացնելու համար: Պարտքով են ուզում...

Դեմիրճյանի քթարմատը կնճռոտվեց.

— Փող, փող... Լա՛վ, եղավ, գնացեք...

Դրսում երկար քննարկեցինք նրա «Լա՛վ, գնացեք» բառերը: Փաստորեն դուրս արեց մեզ: Պետք է ենթադրել, որ «լավ»-ը հուսատու բառ էր, իսկ «գնացեք»-ը վռնդելու լիցք ուներ իր մեջ: Ընդհանուր եզրակացության չեկած՝ բաժանվեցինք: «Այդ էլ քո հայրենակիցը...», շպրտեցին երեսիս:

Հաջորդ օրը գնացի աշխատանքի: Ականջս ձայնի էր, տեսնես Դեմիրճյանը կտա՞ տղաներին իր համարյա խոստացած փողը: Ցերեկվա ժամը մոտ երկուսին, զանգ եղավ: Վերցրի՝ Ս.-ն էր.

— Եղա՛վ, եղա՛վ, Մկրտիչ, փողն ստացանք...

— Ե՞րբ, ինչպե՞ս...

— Պարզվում է՝ ծերուկն առձեռն փող չի ունեցել: Այսօր առավոտյան գնացել է խնայդրամարկղ, հանել հարկավոր գումարը, ծրարել և հանձնել գրողների միության գործերի վարիչին՝ Հեղինե Շիրազյանին, և խնդրել, որ հանձնի մեզ: Նա էլ մեզ զանգահարեց, կանչեց միություն և հանձնեց ծրարները: Այսքա՛ն...

Անցան օրեր: Մի օր Հ. Ս.-ը եկավ ինձ մոտ.

— Արի գնանք Դեմիրճյանի մոտ...

— Ինչո՞ւ...— տագնապեցի ես:— Չլինի նորից դրամ խնդրելու:

— Գնանք, ուզում եմ պարտքս մարել...

— Գնանք,— արագ համաձայնվեցի ես:

Դեմիրճյանն այս անգամ մեզ դիմավորեց դռան առաջ: Հասկացանք, որ չի ցանկանում ընդունել, երևի զբաղված է:

— Ինչո՞ւ եք եկել..., —հարցրեց չոր:

— Եկել եմ պարտքս տալու,— խոսեց Հ.-ն:

— Ի՞նչ պարտք,— հարցրեց գրողը:

— Դե, այն հազար ռուբլին...

— Հա՛,— ծոր տվեց Դեմիրճյանը,— լսիր, դու երեխաներ ունե՞ս...

— Ունեմ,— ասաց:

— Այդ փողը տար և երեխաներիդ համար շոր, կոշիկ առ...— Եվ հետո ժպտալով,— այ տղա, ինձ ո՞վ է պարտքը վերադարձրել, որ բերել ես, գնացե՛ք, գնացե՛ք....

ՄԵԾԵՐԻ ԿՌԻՎԸ

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ մեր մեծերը՝ Ավետիք Իսահակյանը և Դերենիկ Դեմիրճյանը, փնտրում էին որևէ միջոց անքնության դեմ, բացի բժշկական հաբերից, որ ծերուկներն այնքան էին խմել, որ զզվել էին: Ի՞նչ կարելի է անել, ի՞նչ միջոցներով կարելի է փրկվել անքնությունից հրեշից: Եվ մի անգամ Դեմիրճյանը պարզորոշ կերպով ասաց Իսահակյանին.

— Ավո, ես արդեն քնում եմ, քնելու ժամանակավոր դարմանը գտել եմ:

— Ցա՜, ինչ ես ասում,— վառվեց Վարպետի հետաքրքրությունը,— ինչո՞վ, ինչպե՞ս...

— Մեր արձակագիր Ս...ն մի ծավալուն վեպ է գրել, ամեն երեկո գալիս է ընթերցելու, որպեսզի իմանա իմ կարծիքն ու դիտողությունները: Շնորհակալ եմ, կարդում է միալար, քնեցնող ձայնով: Նա կարդում է, ես քնում եմ: Եվ այնքան խոր, որ նույնիսկ գնալը չեմ զգում: Արդեն երկու շաբաթ է քնում եմ: Ասել եմ, որ յուրաքանչյուր անգամ ընթերցելիս նկատի ունենա, որ ես շուտ եմ հոգնում և մեծ հատվածներ չընթերցի: Այսպիսով երկարաձգում եմ քնելուս ժամանակը...

— Դերո, ինչպես անենք, **որ ես էլ օգտվեմ** այդ դեղամիջոցից,— հարցնում է Իսահակյանը,— գուցե իրեն ասես, **որ այնքան ես** գովել իր վեպն ինձ մոտ, որ **վառել ես իմ հետաքրքրու-**

թյունը, ես էլ ցանկություն ունեմ լսելու նրա վեպի ընթերցանությունը...

— Մինչև լրիվ չընթերցի ինձ մոտ, ես այդ բանը անել չեմ կարող...

— Իսկ որքա՞ն ժամանակ է հարկավոր, որ վեպի ընթերցումն ավարտի...

— Առնվազն մեկ ամիս, Ավո...

— Չէ, ես այդքան սպասել չեմ կարող, դու

մի երկու շաբաթ, որ ընդմիջում անես, ես երկու շաբաթ կքնեմ և ջղերս մի քիչ կարգի կբերեմ...

— Չէ, Ավո, ուզած-չուզած պիտի սպասես, այդ միջոցում ես բավական չափով կկազդուրվեմ, կհանգստանամ, հետո դու կսկսես քո բուժումը...

— Լսիր, տո թաժա մեռել, տո իբլիս (սատանա), էդպես է՞ քո ընկերությունը,— ասում է Իսահակյանը, բարձրացնելով գավազանը:

— Ամա՜ն, վարպետներն իրար ծեծում են,— բղավում է գործերի կառավարիչ Հեղինե Շիրազյանը և ընդունարան են վազում երկու-երեք հոգի, Ռաֆայել Արամյանն էլ նրանց հետ:

Իհարկե, ծեծ կամ քաշքշուկ չէր եղել և, ըստ Ռաֆայել Արամյանի տեղեկատվության, 80-ամյա ծերունիները հնում և փնչում էին վիրավորանքից: Մարդկանց, մանավանդ երիտասարդ գրողների ներկայությունը, ստիպում էր նրանց զինաթափվել, մի կողմ դնել գավազանները:

Անցան ամիսներ, խնդրո առարկան՝ Ս...ի գիրքը լույս տեսավ և անմիջապես հետևեց Դեր. Դեմիրճյանի դրական հոդվածը, որը գրական աշխարհն ընդունեց թերահավատորեն: Նույնիսկ ես ամոթս ի բուն, հարցրի նրան.

— Ընկեր Դեմիրճյան, այդ գիրքը չարժեր քո խրախուսանքին:

Ժպտաց դեմիրճյանական մարմրող խորամանկ ժպիտով.

— Գիտե՜մ, գիտե՜մ, բայց ե՛ս, ե՛ս... պարտքերս մարեցի...

Վ. ԱՆԱՆՅԱՆԸ՝ ԶՐՈՒՅՑԸՆԿԵՐ

Հիանալի զրուցընկեր է: Համով, հոտով մարդ: Կարող ես օրերով լսել ու չհոգնել: Նա և Հրաչյա Քոչարը Լուսակերտում հարևանությամբ կառուցել են ամառանոցներ և այնտեղ են անցկացնում և՛ ամառը, և՛ ձմեռը: Ամառանոցներում հաճախ եմ լինում նաև ես: Նստել ենք Վախթանգ Անանյանի հետ այգում, սեղանի շուրջ, զրուցում և ճաշակում ենք այգու տանձն ու խնձորը և այլ բարիքներ: Քանի անգամ փորձեց մեջտեղ բերել իր իսկ քաշած օղին, սակայն ես չթողեցի, որովհետև գիտեի, որ հիվանդ է և ինքը չի խմում, իսկ ես առանց բաժակակցի կյանքումս սովորություն չունեմ բերանս խմիչք առնելու: Իսկ հիմա, սիրելի Վախթանգը խոսում է. ժողովրդական բառ ու բանը, խոսքի փայլատակումները ասես թափվում են ոչ թե նրա բերանից, այլ առատության եղջյուրից: Հետո նայում է ինձ և ժպտում:

— Հիմա պիտի ասես, էս Վախթանգը, որ էսքան սուտուղորթ խառնում է իրար, տեսնես ասածներից որն է ճիշտ և որը՝ սուտ: Այ տղա, որ ասեմ ճիշտն ու սուտը ես էլ չեմ ջոկում, հավատա, ասածներիս մեջ հնարածը, հնարովին շատ է, բայց էնքան եմ պատմել, որ դժվարանում եմ ասել, որն է հնարածը, որը՝ իրական: Հա, էն էլ ասեմ, որ ամենամեծ ստախոսները մեկ որսորդներն են, մեկ՝ ֆրոնտավիկները և

մեկ էլ՝ ճարդի խաղացողները։— Հետո ճայելով աչքերիս,— վահ, տնաշեն, ինչու ինձ չես ասում, թե ստախոսների մեջ ամենամեծ ստախոսը դու ես, Վախթանգ, որովհետև և՛ որսորդ ես, և՛ ֆրոնտավիկ, և՛ ճարդիստ։ Ասա, է, վախիլ մի...

Ծիծաղում է։ Ես ճայում եմ վերև՝ Քոչարի ամառանոցն է ու մենատունը, ներքևում՝ Անանյանինը.

— Սիրելի Վախթանգ,— ասում եմ,— ինձ թվում է Հր. Քոչարի տարածքն ավելի հարմար դիրք ունի շրջապատի նկատմամբ, գուցե ճիշտ կիլներ, եթե դու ընտրեիր վերևինը...

— Քոչարը ուրիշ սկզբունքով մոտեցավ այս հարցին։ Գնաց, կանգնեց այս տարածության կենտրոնում և ասաց. «Վախթանգ, էս վերևի մասը ինձ, ներքևինը՝ քեզ։ Հիմա ընտրի՛ր. ո՞րն ես ուզում...»։

Ու ծիծաղում է։

ՀՈՎՀ. ԾԻՐԱԶ ԵՎ ՀՐԱՉՅԱ ՔՈՉԱՐ

40-ական թվականների վերջերն են։ Լսում ենք, որ Հովհ. Ծիրազը հիվանդ է, այն էլ ծանր, մենենգիտով, որից փրկվելը դժվար է։ Ես ու Վահագն Կարենցը գնում ենք հիվանդին տեսության։ Մեր աչքերից արցունք է քամում հիվանդի վիճակը։ Մոմագույն, սրված դեմք, կորած մազ ու մորուքի մեջ։ Գրողների միությունում ևս խու-

ճապի մեջ են: Անմիջապես բժիշկներ են ուղարկվում, կոնսուլիումներ են կազմակերպվում, օգնություն է կազմակերպվում:

Պատմում է Հրաչյա Քոչարը.

— Երեկոյան, մի քանի հոգով գնացինք բանաստեղծին տեսության: Անհնար է պատմել ինչ տեսանք. Շիրազի վիճակն անհույս էր թվում: Բանաստեղծին սրսկեցին, քիչ անց բացվեցին

նրա աչքերը, որ պղտոր էին, խամրած... Կամաց-կամաց պարզվեց նրա հայացքը, նույնիսկ փորձեց ժպտալ, չկարողացավ: Թեքվեցի նրա վրա.

— Ինչպե՞ս ես, Շիրա՛զ,— հարցրի:

— Լավ չեմ, Քոչա՛ր,— հանկարծ չարաճճիորեն փայլեցին աչքերը,— լավ չեմ, մահվան ուրվականը գլխիս կսավառնե...

* * *

— Հետո, ես գնացի Գյումրի (Լենինական), երկու շաբաթից ավելի Գյումրվա իմ բարեկամների մոտ էի, ամեն օր զանգահարում էի գրողների միություն: Գիտեի, որ Շիրազն արդեն ապաքինվում է:— Շարունակում է Քոչարը,— վերադարձիս երեկոյան տեսա նրան կենտրոնական պողոտայում: Նայեց, տեսավ, բայց չբարևվեց նույնիսկ.

— Շիրազ,— մոտեցա,— ինչու չես բարևում, չէ որ հիվանդ ժամանակ ինձ փրկարար էիր կոչում, հիմա փրկարարիդ բարևի անգամ չես արժանացնում:

— Հա՛, Քոչա՛ր, չպիտի քեզ բարևեմ: Գիտես, թե չգիտե՞մ ինչու էիր ինձ փրկում: Քո լավությունդ գոմեշի լավություն է ճնճղուկին...

— Ինչե՞ր ես խոսում, այ տղա, ի՞նչ ճնճղուկ, ի՞նչ գոմեշ...

— Լսե՛, լսե՛, ճնճղուկը էլեկտրական լարին կդիպչի ու կիսամեռ կընկնի գետնին, կմնա: Էն կողմից գոմեշը կուգա և ճնճղուկի վրա կթրքե: Տաք թրիքը կյանք կուտա ճնճղուկին, որ կսաղանա, կթպրտա, բայց կատուն կուգա, հափ-լափ կենե ու կուտե... Հիմի ըսա, գոմեշի էրածը լավություն է՞ր, ըսե... Ծո, ես որ մեռնեի, Քոչար, ո՞ւմ պիտի ճնշեիր ու հալածեիր, ո՞ւմ պիտի ձեռ առնեիր... Հը՞ը... Ես էդ չգիտեի, չէի հասկընա, հըմը ինձի Բաբկեն Կարապետյանը հասկըցուց...

ՇԻՐԱԶԸ ԵՎ ՆՈՒՆԻԿԸ

Պատմում էր Հրաչյա Քոչարը.

— Մի անգամ մեր տանը խոսում էինք դեսից-դենից, հետո խոսք գնաց Շիրազի որբ ու դժվար մանկությունից, ես դրվագներ պատմեցի նրա քաղցած և թափառիկ կյանքից, ջուր վաճառելուց, գողություն անելուց և այլն: Իմ պատմությունը պատճառ դարձավ կրտսեր աղջկաս՝ Նունիկի արտասվելուն: Հաջորդ օրը հանդիպեցի Շիրազին և պատմեցի Նունիկի լացի մասին.

— Դու պատճառ դարձար, Հովհաննես, որ Նունիկը ամբողջ օրը արտասվեր և գիշերը վատ քներ...

— Հա՛, Քոչա՛ր, Նունիկը լավ սիրտ ունի, երևում է մորն է քաշել...

* * *

Երեկոյան Շիրազը եկավ մեր տուն: Առանց բարևելու ներս մտավ.

— Ո՞ւր է Նունիկը, ո՞ւր է...

— Քնած է, Շիրազ, հրեն դիվանի վրա...

Շիրազը թեքվեց դիվանին.

— Ել, արթնացիր, Նունիկ ջան, արթնացիր,— իսկ երբ երեխան աչքերը բացեց,— Նունիկ ջան, դու որ իմ պիճի (փոքր) տարիքիս համար կուլաս, ինչի հասուն տարիքիս համար չես լա, որ քո պաշտոնյա հերդ, գրողների միությանը քարտուղար հերդ, ընձի Քրիստոսի պես կչարչարե, կճնշե ու կհալածե...

Այդքանն ասաց ու գնաց:

ԿՈՒՍՔԱՂԿՈՄԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սողոմոն Սողոմոնյանը 50-ական թվականների առաջին կեսին զբաղեցնում էր Երևանի կուսքաղկոմի քարտուղարի պաշտոնը՝ գաղափարական հարցերի գծով: Հայաստանի խորհրդայնացման 30-ամյակի կապակցությամբ, Նորքի բարձունքում Քանաքեռից Երևան իջնող ճանապարհին, բարձրացվել էր Ստալինի մոնումենտալ քանդակը՝ հսկայածավալ ու հրաշալի

կոթող, որի բացումը տեղի պիտի ունենար 1950 թվականի նոյեմբերի 30-ին: Բացումից երկու օր առաջ քաղկոմի քարտուղարի մոտ է հրավիրվում գրողների միության քարտուղար Հրաչյա Քոչարը, որը ընկերական սերտ հարաբերությունների մեջ է եղել Սողոմոն Սողոմոնյանի հետ: Ընկերը՝ ընկեր, գործը՝ գործ: Քոչարը գնում է քաղաքային կոմիտե՝ Սողոմոնյանի մոտ: Երկու ժամից ավելի սպասելուց հետո, վերջապես Սողոմոնյանն ընդունում է նրան: Երկու ընկերների հանդիպումը լինում է խիստ պաշտոնական: Քաղկոմի քարտուղարը Հր. Քոչարին ասում է, որ նրան՝ Քոչարին մեծ բախտ է վիճակվել, հանրապետության առաջավոր բանվորի և կոլտնտեսականի հետ մեկտեղ բացելու մեծ առաջնորդի՝ Ստալինի արձան-մոնումենտը:

— Գնահատի՛ր, ընկեր Քոչար,— ասում է Սողոմոնյանը,— այն մեծ վստահությունը, որ կուսակցությունը տածում է քո նկատմամբ, ամեն մարդու, նույնիսկ ամեն գրողի նման բախտ չի վիճակվում...

— Հասկանալի է,— ասում է Քոչարը:

— Բայց, սիրելի Քոչար,— շարունակում է Սողոմոնյանը,— կանցնի հինգ-տաս տարի և մարդիկ փողոցում մատով ցույց կտան քեզ և կասեն. ահա այն սրիկան, որ բացեց այն մեծ սրիկայի արձանը...

Ժամանակ անց Հր. Քոչարը պատմում էր Սողոմոնյանի ներկայությամբ.

— Դուք չեք կարող պատկերացնել, թե ինչ կատարվեց Սողոմոնի վերջին խոսքերից հետո: Ինձ թվաց, թե ուր որ է քաղկոմի շենքը կփլվի գլխիս, որ ինձ քաղկոմ են կանչել դատաստանելու: Մի կերպ ինձ հավաքեցի.

— Ի՞նչ է քո արածը, ընկեր Սողոմոնյան, պրովոկացիա, թե կովի մարտահրավեր...

Իսկ այդ անաստվածը բեղի տակ ժպտում էր.

— Ինչպես կուզես համարիր, ուզում ես գնա նույնիսկ ՊԱԿ-ի պետի մոտ և զեկուցիր լսածիդ մասին, միևնույն է, ինձ կհավատան, որովհետև համարում են իրենցը, իսկ քեզ չեն հավատա, պա՞րզ է...— Ու ծիծաղում է անիրավը...

ԾՈ, ԷԴԻԿ ԸՆՁՆԵՆ ԽԵԼԱՌ Է

Ձնալած որոշ «հեռատես» մարդկանց հորդորներին, թե Ծիրազին Թիֆլիս՝ Սայաթ-Նովյան վարդատոնին տանելը կարող է «գլխացավանք» դառնալ, ես բանի տեղ չդրի և երեք տարի անընդմեջ նրան ընդգրկում էի Թիֆլիս մեկնող պատվիրակության կազմում: Իսկ Ծիրազը ոչ միայն գլխացավանք չէր դառնում, այլ զարդարում էր մեր պատվիրակությունը: Նրա ելույթները քիչ է պատկերավոր ասելը՝ իմաստուն էին, թաթախված հայ-վրացական բարեկամությամբ: Էլ չեմ խոսում նրա ժողովրդականությունից, որ, երբ

երևում էր՝ Թիֆլիսի հայ և վրացի հասարակությունը ալիքվում էր ծովի նման:

Իր ելույթի հաջողությանը եթե կասկածեր.

— Հլը ընձի ըսա, վրացիներն ընձնեն լավ կամ ընձի չափ մեծության բանաստեղծ ունի՞ն...

— Քեզնից լավ, դժվար թե ունենան, բայց քեզ պես բանաստեղծ ունեն...

— Յա՜ ...էդ ո՞ր մեկն է, ըսա...

— Իոսեբ Նոնեշվիլին... Չգիտեմ, քեզնից մեծ

է, թե փոքր, բայց քեզ նման ժողովրդական է, վրացիների սիրելին, այնպես որ, սիրելի Ծիրազ, պատրաստվիր նրա հետ մեջլիս մտնելու...

— Լավ կըսես, Մկրտիչ, դու ընձի համոզե, որ էն ընձնեն մեծ բանաստեղծ է, որ կատաղեմ, նախանձեմ ու ինքս ինձի և հետո նրան գերազանցեմ...

Իսկապես, մեջլիսը կայացավ: Ծիրազն իսկապես իր մրցակից ընկերոջը հաղթեց: Ինքն էլ դա զգաց ժողովրդի անզուսպ ցնծությունից: Երեխայի նման ուրախացավ.

— Սազ, որ ունենար, պտի ինձի տար, չէ՜... Հաղթե՞լ եմ...

Հետո կատարվեց ավելի հետաքրքիր միջադեպ: Իջնում էինք ամբիոնից, ժողովուրդը բացեց կենդանի միջանցք, որով քայլեցինք դեպի մեքենաները: Սուրբ Գևորգի պարսպի դռանը անակնկալ կերպով հայտնվեց կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովը և խոնարհվեց Ծիրազին: Համբուրեց բանաստեղծի աջը: Նայեցի՝ Ծիրազի աչքերը հուզմունքից թաց էին: Հետո մեքենայի մեջ երկար լռությունից հետո խոսեց.

— Ծո, էդ Փարաջանովն ընձի պես հանճարեղ է, բայց ընձնեն ավելի խելառ է...

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆ

Մի առիթով մարշալներ Բաղրամյանն ու Բաբաջանյանը գտնվում էին Հայաստանում: Զորավարները շրջեցին հանրապետությունում, հանդիպումներ ունեցան աշխատավորության հետ, եղան պատմա-մշակութային վայրերում, բնության անկրկնելի գեղեցկություններին գերված շրջեցին լեռնաշխարհում:

Մի հանդիպման ժամանակ, որ տեղի էր ունենում Համ. Բաբաջանյանի բարեկամներից մեկի հարկի տակ, զրույցի ընթացքում, մարշալը հարցրեց մեզ, սեղանի մասնակիցներին.

— Կցանկանայի իմանալ, հայ զորավարներից ո՞վ է ձեր ընտրյալը, ձեր կուռքը...

— Անդրանիկը,— անվարան պատասխանեցինք մենք:

Մարշալի հարցմանը նման պատասխան տալը այնքան էլ հեշտ չէր մեզ և ոչ էլ այնքան հաճելի մարշալի համար: Այդպես էինք մտածում մենք, բայց այդպես չէր խորհում Բաբաջանյանը:

Մի քիչ մտորելուց հետո նա պատասխանեց.

— Պատկերացրեք, զորավարի իմ իդեալը ևս Անդրանիկն է, նա խելահեղորեն քաջ էր, իսկական ռազմիկ և կարողացավ այնքան դժվարին ժամանակներում անմնացորդ կերպով ծառայել իր ժողովրդին: Սա ինքնին նրա երջանկությունն էր, սակայն հայկական չլուծվող հարցը դարձավ նրա դժբախտությունը:

Ես պետք է անկեղծորեն խոստովանեմ, որ մի տեսակ մեղավորության զգացում ունեմ իմ ժողովրդի առջև, եթե կուզեք դժբախտության զգացում, որ չկարողացա ծառայել նրան, միաժամանակ, երջանիկ եմ, որ առիթ չեղավ ծառայելու...

ՄԱՐԻԵՏԱ ՇԱՀԻՆՅԱՆԸ ԵՎ ԵՐԿՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

Դժվար բնավորություն ունի: Այդ է պատճառը, որ նրանից զգուշանում են նույնիսկ երկրի ամենազոր ղեկավարները: Սկսվում է գրողների միության պլենումը նվիրված ԽՍՀՄ գրողների միության ստեղծման 50-ամյակին:

Ուր որ է կմտնեն ղեկավարները և պլենումը կսկսվի: Նախագահությունն արդեն լցվել է պատվիրակությունների ղեկավարներով, բայց այստեղ ինչ-որ անհանգստություն կա: Հետո պետք է իմանանք, որ 90-ամյա Մարիետա Շահինյանը սրախաղմամբ ագրեսիա է կատարել, գրավել և նստել է Միխ. Սուսլովի աթոռին: Անհանգստությունը երևի գնալով աճագնանում է: Հաշված րոպեներ են մնացել պլենումի սկսվելուն: Բայց Մարիետա Սերգեևնան անհողդողդ համառությամբ նստել է տեղում: Մեր պատվիրակությունը նստել է նախագահական մասից հեռու, իսկ, ինչ-

պես հետո պարզվեց նախագահությունում և առաջին կարգերում նստողները ականատես են եղել յուրահատուկ մի ներկայացման, որ հետո երկար ժամանակ պիտի պատմվի, ծիծաղի և զվարճախոսության նյութ դառնալով ունկնդիրների համար:

Քաղբյուրոն ամբողջ կազմով մտնում է բեմ: Լսվում են քծնանքի ծափեր: Շահինյանն ամուր նստած է տեղում: Գ. Մարկովը պատրաստվում է պլենումը հայտարարել բացված: Բանակցում է Շահինյանի հետ ինքը, նորին մեծություն Սուսլովը: Նրանք խոսում են իրար հետ, Շահինյանը բարձրանում է տեղից և շորորալով գնում իրեն հասանելիք տեղամասը: Նրան օգնում են և նա նստում է: Ընդմիջմանը իմացանք նաև Շահինյանի և Սուսլովի խոսակցության մանրամասները.

— Դուք իմ տեղն եք զբաղեցրել, Մարիետա Սերգեևնա...

— Այդ դո՞ւք եք Միխայիլ Ալեքսանդրովիչ, լավ վեր կկենամ, դուք իմ հոդվածը կարդացե՞լ եք «Վոպրոսի իստորիի» ամսագրում...

— Ամսագիրը սեղանիս է, պետք է ընթերցեմ, անպայմա՛ն...

— Օ, ես գիտեմ, դուք չափազանց ծույլ եք (вы большой лентяй), բայց կարդացեք, այն ձեզ համար հետաքրքիր ու օգտակար կլինի...

***

Ն. Ս. Խրուշչովի ժամանակներն էին: Կուսակցության լիդերն իր ամառանոցում հանդիպում է կազմակերպում մտավորականության հետ: Իր կարճատև ելույթում Խրուշչովը խոսում է որոշ ձեռքբերումների մասին, սակայն նրան բավական կտրուկ ձևով ընդմիջում է Շահինյանը.

— Դուք ճիշտ չեք ասում, Հայաստանում միս ու կարագ չկա...

— Այստեղ է Հայաստանի Կոմկուսի երկրորդ քարտուղարը, Մարիետա Սերգեևնա, թող նա ասի... Ձայնը տանք նրան:

Հասկանալի է, որ Հրաչյա Մարգարյանը պետք է հաստատեր գլխավոր քարտուղարի խոսքը, մի բան, որ առաջացնում է արձակագրուհու անհուն զայրույթն ու անտակտությունը, նրան բնորոշ հատկություններ, որոնց մտերիմները վերաբերում էին ներողամտությամբ, իսկ մյուսները՝ նեղանալով.

— Նա ձեզ քծնում է, ես նոր եմ վերադարձել Հայաստանից և լավ գիտեմ վիճակը:

— Մարիետա Սերգեևնա, մենք ձեզ հարգում ենք, բայց անտակտություն թույլ չենք տա...

— Անտակտության դեմ անտակտությամբ չեն պայքարի, դուք էլ ինձ եք վիրավորում...,— հետևում է արձակագրուհու պատասխանը:

— Դուք խանգարում եք խորհրդակցությանը:

Այսօր ձեր կեցվածքն անհանդուրժելի է, նկատի ունեցեք...

— Որպեսզի նման էքսցեսներ չլինեն, չպետք է ստել...

— Եթե դուք, Մարիետա Սերգեևնա, շարու-

նակեք ձեզ նման ձևով պահել, անկարգության և անտակտության համար, ես ձեզ դուրս կհրավիրեմ...

— Հայերը մի ասացվածք ունեն. շունն անգամ հյուրի վրա չի հաչում...

Ն. Ս. Խրուշչովի համբերությունը սպառվում է և նա խորհրդակցության դահլիճից հեռացնում է արձակագրությունն:

ԱՐՄԱՆ ԿՈԹԻԿՅԱՆԻ ՏԱՐԱԿՈՒՍԱՆՔԸ

Կրեմլում շրջագայում է տուրիստների խումբը: Շատ են ճշանավոր հուշարձանները, իսկ շքեղությունը աչք է շոյում: Տուրիստների խմբին միանում են երկու հայեր, որոնցից մեկը՝ Արման Կոթիկյանը, որը քիչ-միչ խոսում է ռուսերեն, կարող է հարցերը տալ ռուսերեն: Խումբը մոտենում է արքա թնդանոթին (Царь пушка): Հետևվում է Արմանի հարցը.

— Ո՞վ է եղել և ո՞ւմ ժամանակ է ստեղծվել այս թնդանոթը:

Գիդը պատասխանում է՝ այսինչ դարում այսինչ թագավորի օրոք:

— Լավ է, լա՛վ,— խոսում է Արմանը,— ուրեմն, ոչ խորհրդային օրոք...

— Ո՞վ է եղել և ո՞ւմ ժամանակ է ստեղծվել այս զանգ արքան (Царь колокол):

Գիդը պատասխանում է:

— Լավ է, լա՛վ,— հրճվում է Արմանը,— ուրեմն ոչ խորհրդային ժամանակաշրջանում...

Իսկ հարցերը շարունակվում են, ե՞րբ և ո՞վ է կառուցել Կրեմլը, այնուհետև Գումը և այլն և այլն: Պատասխանը մեկն է՝ կառուցել է այսինչ արքան, այսինչ դարում: Եվ ոգևորված Արման Կոթիկյանը յուրաքանչյուր պատասխանից ավելի է ոգևորվում.

— Լավ է, լա՛վ, ուրեմն, ոչ խորհրդային ժամանակաշրջանում...

Եվ հետո շրջվում է դեպի շփոթված գիդը.

— Եթե այդպես է, ուրեմն ինչո՞ւ համար էր ձեր այս հեղափոխությունը...

ԱՐՄԱՆ ԿՈԹԻԿՅԱՆԸ ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑ Է ԴԱՌՆՈՒՄ

Խմբագրում էի նրա «Ակոսներում» բանաստեղծությունների գիրքը: Դիտմամբ ձգձգում էի գրքի խմբագրությունը, որովհետև սիրում էի այդ սրախոս, երեխայի նման մաքուր մարդուն: Ուզում էի հաճախ գար և մեր պրոզայիկ օրը լցնել իր շողշողուն զրույցներով:

Այդ օրը աչքերում խորամանկ ժպիտ կար, զգացի, որ հերթական սրախոսության է պատրաստվում.

— Լեզվիդ տակ թաքնված ինչ որ բան կա, ընկեր Կոթիկյան...

— Ինչ իմացար...— զարմանք խաղաց նա:— Բայց ես, իրոք, այսօր այուրպրիզ ունեմ քեզի համար, սիրելիդ իմ Մկրտիչ: Դու գիտե՞ս, որ ես նամակ եմ գրել Նիկիտա Խրուշչովին...

— Նամա՞կ, միթե...,— զարմանալու հերթն իմն էր:

— Այո՛, նամա՛կ, գրել եմ, ընկեր Խրուշչով, չեմ կրնա դարուս մեծագործություններեն անմասն մնալ և ձեզի պիտի խնդրեմ ինձի տիեզերագնաց դարձնել, բայց մեկ պայմանով, երբ տիեզերանավն անցնելու ըլլա Անկարայի վրայեն, ինձի թույլատրվի վերեն կեղտոտել...

ՀՈՆՈՐԱՐԸ

Վերջացել են «Տժվժիկ» կինոնկարի նկարահանումները և հոնորարային վճարման համար երկար հերթ է գոյացել «Հայֆիլմ» ստուդիայի գանձարկղի մոտ: Հոնորար ստանալու հերթը հասնում է Արման Կոթիկյանին: Ստանում է բավականին պատկառելի մի գումար, շարժելով մասնավորապես բանվորների նախանձը.

— Վա՜յ, ընկեր Կոթիկյան, համա թե լիող ստացաք, մի ամբողջ վագոն...

— Այո, տղաներ, չզարմանաք, հավասարության հարց կա՝ Խորհրդային Միությունը բանվորների գերիշխանության երկիր է: Է՛, իշխանությունը ձեզի, թող դրամն էլ մերն ըլլա...

ԿՈԹԻԿՅԱՆԻ ՀԱՂԹԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԸ

Ոմն թուրք կին գրող հեղինակել է «Ֆոսֆորային Ջեվրիե» վերնագրով մի գիրք, որ թարգմանվել և հրատարկվել է Մոսկվայում, որի մասին Հրաչյա Քոչարն ու Արման Կոթիկյանը գրել են գրախոսություն, հեղինակին ներկայացրել զորավոր ու անկասելի մեղադրանքներ, հակահայկական մտածողության համար, որով ներծծված է ամբողջ վեպը: Ցանկանում են տպագրել հոդվածը ռուսերեն, որպեսզի մոսկովյան հրատարակիչներն իմանան իրենց արարքի վնասակարությունը: Տարել են «Կոմունիստ» թերթի խմբագրություն, բայց խմբագիր Սիրցևը հրաժարվում է նման հոդված տպագրել, այն էլ Մոսկվայի հրատարակչության դեմ և նրանք եկել են ՀԿԿ Կենտկոմ իրենց որոնած արդարությունը գտնելու հույսով: Կուլտուրայի բաժնի վարիչը լսում է Հր. Քոչարին և Արման Կոթիկյանին և խոստանում գտնել հարցի լուծումը: Կենտկոմից հանձնարարվում է ինձ, իսկ «Կոմունիստ» թերթից՝ արվեստի և գրականության խմբագրության վարիչ Սերգո Բարսեղյանին՝ ընթերցել խնդրո առարկա գիրքը և ապա հավաքվել կենտկոմում վճռելու հոդվածի տպագրության նպատակահարմարության հարցը:

Տաս-տասներկու օր անց հավաքվում ենք վերստին բաժնի վարիչի մոտ քննարկելու վերոհիշյալ հարցը: Խոսում եմ ես, վստահեցնում ներկաներին, որ իրոք, մոսկովյան «Ինոստրանայա լիտերատուրա» հրատարակչությունը կատարել է սկզբունքային սխալ, ռուս ընթերցողին հանձնելով թուրք արձակագրի «Ֆոսֆորային Ջեվրիե» հակահայկական այդ թխվածքը: Ինձ հետ համաձայն չէ «Կոմունիստ» թերթի ներկայացուցիչ Սերգո Բարսեղյանը, որը հակահայկական ոչինչ չի գտնում այդ վեպում: Ս. Բարսեղյանի կարծիքը զայրացնում է Արման Կոթիկյանին.

— Դուք կատարում եք Սիրցևի պատվերը, դուք ճիշտ չեք... Գրքի արատավորությունը երևում է հեռու-հեռվից... Գոնե մի քիչ ազգային

արժանապատվություն ունեցեք, ընկեր Բարսեղյան...

Սակայն Բարսեղյանն անսասան է.

— Մի բամբասեք, ընկեր Կոթիկյան, նայեցեք որքան սիրով ու ջերմությամբ են պոռնիկները դիմում պոռնկատան հայ տիրուհուն. «մեծ մայրիկ», «սիրելի մայրիկ» և այլն:

Արման Կոթիկյանը դառնում է բաժնի վարիչին.

— Խնդրում եմ թույլ տվեք մեկ հարց տալ ընկեր Բարսեղյանին...

— Տվեք, տվեք,— լինում է պատասխանը:

— Ընկեր Բարսեղյան, ասացեք առանց ստելու, դուք երբևէ եղե՞լ եք բոզանոցում...

Բարսեղյանը կարմրում է հուզմունքից և վախից: Հին կոմունիստը կուչ է գալիս, ասես գլխին ռումբ է պայթում.

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ...

— Այդպես ալ գիտեի, իսկ ես, սիրելիս, հաճախել եմ, այն էլ բազմաթի՜վ անգամներ, բայց այս պարագայում իմ հաճախած ըլլալս դրական նշանակություն ունի, քո հաճախած չըլլալը՝ բացասական, որովհետև գիտեմ, որ բոզանոցի տիրուհուն «սիրելի մայրիկ», «մեծ մայրիկ» ասելը հեռու է իսկական իմաստից և կնշանակե բոզերու մայրիկ, ավելի մեծ բոզ... Պա՜րզ է, ընկեր Բարսեղյան...

Եվ հաղթական նայում է կարկամած Սերգո Բարսեղյանին:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿ ԱՐՄԱՆ ԿՈԹԻԿՅԱՆ

Ես ուշադրությամբ նայում եմ, ուսումնասիրում լեգենդար հայդուկ, զորավար Անդրանիկին վերաբերող փաստաթղթերը, վավերաթղթերը, լուսանկարները և հանկարծ կատարում եմ տիեզերական հայտնագործություն՝ Լիոնի մի թերթում, որի անունը մոռացել եմ, 1927 թվականի համարներից մեկում տպագրվել է Անդրանիկի ամուսնական պսակադրության ամբողջ նկարագրությունը, որ տեղի է ունեցել Լիոնի հայոց առաքելական եկեղեցում: Նկարագրությունը հարստացված է լուսանկարներով: Եվ ահա, հայտնագործությունը թերթի երրորդ էջում: Ելույթների մեջ առանձին վերնագրի տակ տպագրված է, որ երիտասարդ դաշնակցականների կողմից ողջույնի խոսքով նորապսակներին դիմել է Արման Կոթիկյանը: Ողջունել է զորավարին, ամուսնության առթիվ, չի զլացել նաև քննադատել նրան՝ ՀՅԴ-ից հեռանալու համար: Մտածեցի թերթը ցույց տալ նորահայտ դաշնակցականին և նրա հոգու հետ խաղալ: Ինձ շատ էր հետաքրքրում Արման Կոթիկյանի ռեակցիան: Ժամանակներն այնքան էլ ջերմ չէին: Կվախենա՞ Արմանը, թե բանի տեղ չի դնի դաշնակցականի իր դիմակը պատռած տեսնելով:

Եկավ իմ աշխատասենյակը, զարմացավ իմ ասածն ընդունելությունից: Զննող հայացքով նայում էր: Մոտեցավ.

— Քեզի հետ գեշ բան մը պատահա՞ծ է, ճիշտ է...

Ուշացումով ասեմ, որ Արմանը սովորաբար խոսում էր արևելահայերենով, իսկ հուզված պահերին խառնում էր նաև արևմտահայերենը: Ուշ պատասխանեցի նրան.

— Այո՛, գեշություն մը եկել է վրաս քո պատճառով...

Խեղճ մարդ, զարմանքից քարացավ: Հետո երևի հավաքեց ինքնիրեն.

— Կատակ կընես, ջանըմ, իմ պատճառով ինչո՞ւ պիտի գեշություն գա վրադ...

— Ահա՛, խնդրեմ...— ասացի ես դարակից դուրս քաշելով Լիոնի թերթը,— նայի՛ր, տե՛ս, թե ով ես եղել և մենք չենք իմացել, թե դու ով ես...

Երկար ուսումնասիրում էր թերթը, մի քանի անգամ վերընթերցեց իր ելույթը և թերթը դրեց իմ առջև.

— Այս բանի պատճառով հարկ է, որ ես մը-տահոգվիմ, դուն մտահոգվելու ոչինչ չունիս...

— Բա մեր ընկերությունը, ախր քո էությունը ինչո՞ւ ես թաքցրել ինձանից...

— Իմ երիտդաշնակցության անդամ ըլլալս, ի՞նչ կապ ունի իմ էությունը թաքցնելու հետ: Հետո, ինչո՞ւ պիտի գայի քու մոտդ և քեզի համար բացահայտեի հեռու, երիտասարդ օրերուս խենթությունները... Դու ինձի ճիշտ հասկըցի, երիտասարդ ժամանակդ չե՞ս սիրահարվել աղ-

ջըկա, որից հետո հեռացել ես, ասենք նրա անբարո վարքի կամ գեշ բնավորության պատճառով: Հետո, սիրելի Մկրտիչ, ես ինչո՞ւ պիտի քեզի զեկուցեի այս փաստը: Հուսով եմ, որ դու ոչ դատախազ ես, ոչ էլ կապ ունես գաղտնի ոստիկանական ծառայության հետ...

Կեցցես, Կոթիկյան, իրեն պահում է հերոսի պես, գոնե, Աստծուն փառք, որ ինձ գործակալի կամ մատնիչի տեղ չդրեց: Ես երկար լռում էի, նորից խոսեց ինքը.

— Մի բան ըսեմ, չնեղանաս,— նայում է աչքերիս մեջ,— որտեղի՞ց է այդ թերթը քու մոտ ընկել...

— Անդրանիկին նվիրված ժողովածուի վավերաթղթերից է...

— Շատ աղեկ, կարո՞ղ է պատահել, որ այդ թերթը հանկարծ կորչի, անէանա...

— Շատ հնարավոր է,— ասում եմ,— եթե գողանաս...

Բայց այս ուր է մղվում Արմանը, չլինի՞, թե ցանկանում է թերթը վերցնել և ոչ այնքան անվտանգ այս փաստաթուղթը ոչնչացնել, ծածկելով իր անցյալ «մեղքերը», ավելի ճիշտ՝ հետքերը:

— Ախպար,— արևմտահայերենին օգնության է կանչում նա,— թող այդ վավերաթղթերում մեկը ալ պակաս ըլլա, հավատա, որ դրանով ոչ

Անդրանիկի հերոսությունը կպակսի, ոչ ալ կենսագրությունը կխաթարվի...

— Իսկ ազնվությո՛ւնը, որ ինձ հավատալով բերել եմ այս փաստաթղթերը, եթե ես ոչնչացնեմ թեկուզ միայն մեկը, իմ ազնվությունը չի՞ խաթարվի...

— Ճիշտ կըսես, բայց այդ մեկը հանկարծ իմ դատավճիռս չդառնա...

— Լսիր, ընկեր Արման, դո՛ւ, դո՛ւ ասացիր, որ ես ոչ դատախազ եմ, ոչ էլ կապ ունեմ գաղտնի ոստիկանության հետ, էլ ինչո՞ւ պիտի այս թերթը քեզ համար դատավճիռ դառնա: Ճիշտն ասած, երբ դու քաջաբար, առանց վախի ընդունեցիր թերթի հայտնվելը, ես ուզում էի համբուրել ճակատդ, բայց երբ դու ինձ մղում ես հանցագործության, այդ արդեն բանի նման, չէ, չէ, ընկեր Արման, պղտոր ես երևում աչքիս... Դու վախենալու բան չունես...

— Ճիշտ կըսես, ջանը՛մ,— արագ վերակառուցվեց Արմանը,— էշը կերել ենք՝ պոչին ենք խողվում: 37 թիվն անցել ենք, 65-ից ենք վախենում...

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՂ ԻՇՈՒԿԸ

— Տեսե՛ք, տեսե՛ք, ի՞նչ հրաշք է, ի՞նչ անմեղություն...

Զգարմանաք, խոսքը նորածին իշուկի մասին է, որ ամենաբարձր և ամենաթանկ «Մեժդունառոդնիի» վագոն է բերել Վահրամ Փափազյանը: Գնում ենք Մոսկվա: Հայկական արվեստի ու գրականության տասնօրյակի մասնակիցներ ենք, իսկ մեծանուն դերասանն ավելի հեռու՝ Լենինգրադ է գնում և նվեր է տանում իր թոռանը՝ իշուկը, որ պապի կարծիքով, ամենալավ նվերը կլինի թոռան համար: Ես չեմ կարող նկարագրել, թե ինչե՞ր քաշեց Փափազյանն իշուկի պատճառով: Միայն հանրաճանաչ դերասանի մեծ հեղինակությունն և նրա նկատմամբ եղած սերն ու պատկառանքը հնարավորություն տվեցին առանց էքսցեսների ու քաշքշուկի բարձր հասարակության հետ հավասար իրավունք նվաճել իշուկի համար:

Փափազյանը պիտի խաղար Օթելլո: Նա ցանկանում էր վերջնականապես ճշտել ներկայացման օրը, որոշ հանգամանքներ. իշուկն արագ տանել Լենինգրադ և վերադառնալ: Իսկ առաջին օրը իշուկը փորձանք ու փորձություն դարձավ նրա համար: «Լենինգրադ» շքեղաշուք հյուրանոցի վարչությունը անհողդողդ ու անպատշաճ վերաբերմունքով այնպես վիրավորեց դերասանին, որ վերջինս, որի համար խորթ չէր, ինչ մարդկային է, նույնիսկ փողոցային լուտանքներ ու հայհոյանքներ թափեց իր և իր իշուկի հեղինակությունը վիրավորողների գլխին: Գործը հասավ մինչև միլիցիա, մինչև ԽՍՀՄ մշակույթի նախարարի միջամտությանը: Որոշվեց, որ առաջին գիշերն իշուկը կանցկացնի համարի լողարանում, իսկ հաջորդ օրը ինքնաթիռով, Փափազյանի ուղեկցությամբ, կթռչի Լենինգրադ և ողջ կյանքը կապրի Փափազյանի ընտանեկան ամառանոցում, որպես նրա լիիրավ անդամներից մեկը: Ես մտա Փափազյանի համարը այն պահին, երբ դերասանը և իշուկը նստել էին երեկոյան ընթրիքի, երկուսն էլ հատակին: Ընդ որում, Փափազյանը ծալապատիկ նստած գորգին, ծամում էր ինչ-որ, իսկ ավանակիկը կաթով լի շշի ծծակից ախորժակով ծծում էր կաթը: Փափազյանը հրճվանքից փայլում և ստեպ-ստեպ համբուրում էր նրա սիրունիկ, կաթոտ դունչը:

— Հրա՞շք է, անգի՜ն է, այս ինչ գեղեցկություն է,— ասաց ինձ,— հնար չկա, այնպիսի մի

միջոց չկա՞, որ այս սքանչելի էակը էշ չդառնա և մնա քուռակ...— Եվ հետո,— գիտե՞ս, այս արարածը նաև մաքրակենցաղ է, հակում չունի չորս կողմը կեղտոտելու... Այս իշուկը ճիշտ է, ես պիտի նվիրեմ թոռանս որպես խաղալիք, բայց հավատացած եմ, որ նրա նկատմամբ տածած սիրով ու գութով թոռնիկս ավելի կմարդանա։ Մի խոսքով, նման սքանչելի և անօգնական կենդանին կօգնի մարդուն՝ խիղճ ու գութ ունենալու, իսկ խիղճ ու գութ ունեցողին՝ սրբանալու, այո՛, այո՛, սրբանալու...

Հաջորդ օրը իշուկը և նրան ուղեկցող անձինք թռան Լենինգրադ։

ԻՆՔՆԱՆԿԱՐԸ

Բացվել էր ժամանակակից նկարիչների ցուցահանդեսը։ Ցուցասրահում ասեղ գցելու տեղ չկար։ Մեր նկարիչների փայլուն ստեղծագործությունները պարզապես շլացնում էին հանդիսականներին։ Սակայն կատարվեց արտակարգ մի բան, որ ըստ Կենտկոմի բաժնի վարիչ Ռոբերտ Խաչատրյանի՝ քիչ մնաց փչացներ տպավորությունը, իսկ ըստ իս՝ գեղեցկացրել էր գոնե մի պահ ցուցահանդեսը և կենդանի շունչ ու բովանդակություն հաղորդել նրան, որի սրահներից մեկում, աչքից հեռու, համեստ մի անկյունում կախված էր Երվանդ Քոչարի նկարը, որն

այսօր կոչվում է «Դոն Կիխոտ», իսկ այն ժամանակ (50-ական թ.թ.) անվանված էր «Ինքնանկար»: Նկարում Սերվանտեսի ծեծված, ջարդված, վիրակապված հերոսն էր, որի ճակատագրի և հեղինակի միջև նմանությունն ակնհայտ էր: Քոչարը տեսանելի թիրախ էր բոլոր ստալինականների, բոլոր արվեստի թշնամիների համար: Հանկարծ հանդիսատեսների ստվար մի խումբ ոչ թե քայլեց, այլ նետվեց դեպի «Ինքնանկարը», որը չվրիպեց Ռոբերտ Խաչատրյանի ամենատես հայացքից: Մինչ մարդիկ խռնվել և հիացմունքով նայում էին Քոչարի ինքնանկարին, հնչեց հրամանը՝ անմիջապես հանել այս շառլատանությունը...

Նկարը հանվեց և մեկ-երկու ժամից հետո վերստին զբաղեցրեց իր նախկին տեղը՝ «Դոն Կիխոտ» վերամկրտումով...

Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՖՈՐՄԱԼԻԶՄԻ

50-ական թվականների սկզբներին, ՀԿԿ Կենտկոմը քննարկում կազմակերպեց, իբր թե արևմուտքից ներթափանցած խորթ հոսանքներն ու ազդեցությունը դիմագրավելու և բուրժուական արվեստի «ռեցիդիվները» խորհրդահայ նկարիչների ստեղծագործություններում ջախջախելու նպատակով: Սուր, անհաշտ և անզիջում քանավեճ ծավալվեց, ուր հայհոյանքն ու քաղաքական մեղադրանքը փոխարինում էին խելոք, տեսականորեն հագեցած խոսակցությանը: Մթնոլորտը անմարդկային էր: Բայց այդ բանավեճից իմ հիշողության մեջ տպվել է այն փոխհրաձգությունը, որ տեղի ունեցավ երկու խոշոր արվեստագետների՝ Երվանդ Քոչարի և Արա Սարգսյանի միջև, երբ վերջինս Երվանդ Քոչարին մեղադրեց ֆորմալիզմի մեջ, որ այն ժամանակվա չափանիշով լուրջ մեղադրանք էր: Հասկանալի է, որ նման մեղադրանքը մարսելն անհնար էր: Պետք էր կամ լռելյայն կուլ տալ անմարսելի այդ հաբը կամ ունենալ մեծ, կրկնում եմ մեծ արիություն և քաջություն, ոչ միայն ընդունելու այդ մեղադրանքը, այլև հանդես գալու ֆորմալիզմի պաշտպանությամբ, մի բան, որ արեց Երվանդ Քոչարը:

— Այո, ես ֆորմալիստ եմ և հպարտ եմ, որ իմ ընդդիմախոսները ճանաչում և ընդունում են այդ փաստը: Ինչպես կարող է նկարիչը կամ քանդակագործը չլինել ֆորմալիստ, իր ստեղծագործությունը չդնել համապատասխան գեղեցիկ ձևի մեջ, այսինքն՝ իր հղացումը, բովանդակությունը չդարձնել արվեստ: Գիտնական չեմ, որ զերծ մնամ ձևին երկրպագելուց, որ կավը, քարը, գույնը թողնեմ իրենց նախնական անձև, անմշակ վիճակում: Տաղանդավոր արվեստագետը չի կարող ֆորմալիստ չլինել... Արվեստագետին ֆորմալիստ կոչելը անեծք չէ, այլ՝ գովեստ, թող

այս իմանան նրանք, ովքեր ավելի կաթոլիկ են, քան Հռոմի պապը...

Երվանդ Քոչարին, ինչպես ասում են, խիստ քննադատեցին, բայց նա իր խոսքն արդեն ասել էր...

ԱՎԱՐՏՎԵՑ ԹԵԹԵՎ ԿՍՄԹՈՑՈՎ

1959 թվականի մարտի վերջն է: Նոր եմ ստանձնել «Գրական թերթի» խմբագրի պաշտոնը, երբ մի օր հանկարծ գրողների միության ողջ ղեկավարությունը հրավիրվում է Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Թովմասյանի մոտ, որը մեզ ընդունում է ընդգծված չորությամբ և չարությամբ: Նստել ենք և սպասում ենք նրա խոսքին, Թովմասյանը կարդում է Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղար, չգիտեմ Բայրամովի, թե նման ազգանվան տեր մեկ ուրիշի պաշտոնական գրությունը, որի մեջ նշվում է, որ Հայաստանի գրողների միության օրգան «Գրական թերթը» չի նպաստում մեր երկու ժողովուրդների բարեկամությանը և իր այսինչ համարում վարկաբեկիչ ակնարկ է տպագրել ադրբեջանական ժողովրդի ազգային հերոս, սրբություն արբոցներից մեկի՝ Ղաչաղ Նաբու մասին: Պահանջվում է քննության առնել այս հարցը:

Լռություն: Անկարող ենք որևէ բան ասել:

— Ի՞նչ կարող եք ասել, ընկեր գրողներ...

Տեսնում եք նացիոնալիզմը մինչև որ կարող է տանել նրանց, ովքեր կոչված են ինտերնացիոնալիզմի դրոշակակիրներ լինելու...

Մոռացա ասել, որ ակնարկի հեղինակը Ռաֆայել Արամյանն է, որ իր ակնարկում մեկ-երկու պարբերությամբ կանգ է առել Մեղրու շրջանի դարասկզբի հոգևորներին, նշելով, որ Ղաչաղ Նաբի անհավոր թալանչին ու մարդասպանը պարբերաբար թալանել և ասպատակել է շրջանի հայ գյուղերը, գողանալով անասուններ, անպատիվ անելով հարսներին և աղջիկներին, որը ոտքի է հանել հայ գյուղացիներին, որոնք ջարդել և Մեղրուց դուրս, Արաքսի մյուս ափն են հալածել ավազակներին: Այսքա՛նը: Ուրիշ ոչինչ: Հիմա խոսքը մերն է, պետք է պաշտպանվե՞նք, թե՝ նախահարձակ լինենք:

— Ես կարծում եմ,— խոսում է Էդվարդ Թոփչյանը,— այս գրության մեջ խախտվել է սուբորդինացիայի հարցը: Առաջին քարտուղարին հասցեագրված նամակը կամ պաշտոնական գրությունը պետք է ստորագրեր առաջին, ոչ թե երկրորդ քարտուղարը...

— Այդ ի՞նչ բարեկամություն է, որ պետք է խախտվի թերթի երկու պարբերությամբ...— խոսում է մեկ ուրիշը:

— Ինչո՞ւ են ադրբեջանական ղեկավարները կարծում, թե իրենց ազգային հերոսը նաև մեր հերոսն է: Ղաչաղ Նաբի նշանակում է ավազակ Նաբի, մեր թերթն էլ նույնն է ասել, ոչ ավելին...

— Ազգային հերոս դառնում են, մեկ այլ ազգի հերն անիծելով: Օրինակ, Լենկ Թեմուր մարդակերը ուզբեկ ժողովրդի հերոսն ու սրբությունն է, բայց մեր կամ ռուս ու վրաց ժողովուրդների դահիճը: Մենք և ամբողջ աշխարհը հայհոյում և անիծում ենք նրան և ոչ ոք չի մտածում, որ դրանից տուժում են իրենց եղբայրական, բարեկամական հարաբերությունները ուզբեկ ժողովրդի հետ...

Բոլոր ելույթ ունեցողների հետ կարծեք համաձայն է Սուրեն Թովմասյանը, սակայն նա այն կարծիքն ունի, որ հարկավոր է կարգին դաս տալ չափն անցած գրողներին, այլապես նրանք կարող են շատ հեռու գնալ, նացիոնալիզմը կարող է ուտել մեր ձեռքբերումները...

— Գնացեք և ուրբաթ եկեք բյուրոյի նիստի: Հնարավոր է, որ ոմանք հրաժեշտ տան իրենց պաշտոնին և կուսակցական տոմսին...

Տխուր, տրտում վերադառնում ենք գրողների միություն և դռանը հանդիպում թարգմանիչ, բանաստեղծ Վրույր Բալասանին: Նրա հարցին, թե՝ ինչո՞ւ ենք տխուր, պատմում ենք եղելությունը: Նա ծիծաղում է: Հրավիրում գրադարան, հանում գրադարակից Մաքսիմ Գորկու համապատասխան հատորը, բացում «Կովկասի ավազակները» ակնարկը և կարդում, որ Կովկասի ասպետական հակումներ ունեցող ավազակներին բոլորովին նման չէր Ղաչաղ Նաբին, որը ստոր ու վտանգավոր մարդ էր, շան պես ապրեց և սատկեց

շան նման: Նա աչք ուներ իր ընկերներից մեկի գեղեցկուհի կնոջ վրա: Կազմակերպեց գործն այնպես, որ դժվար առաջադրանք տրվի ընկերոջը: Իսկ ինքը մտավ նրա կնոջ մոտ:

— Ես քեզ սիրում եմ,— ասաց կնոջը:

— Ես սիրում եմ իմ ամուսնուն,— ասաց կինը:

— Ես կսպանեմ քո ամուսնուն և դու կլինես իմը,— ասաց Նաբին:

— Ես կսպանեմ ինձ և կմիանամ իմ ամուսնուն,— ասաց կինը:

Բայց Նաբին չլսեց կնոջ թախանձանքները, ուժով տիրեց նրան և հեռացավ: Իսկ երբ վերադարձավ ամուսինը, կինը նրան չթողեց տուն՝ իր մոտ:

— Ես անպատված եմ Նաբիի կողմից,— ասաց նա,— կինը մի ամուսին պետք է ունենա: Գնա, և եթե կարող ես, փրկիր քո և քո կնոջ պատիվը:

Եվ ամուսինը գնաց և սպանեց իր սրիկա ընկերոջը: Գլուխը գլորեց իր կնոջ ոտքերի տակ և իրավունք ստացավ մտնելու նրա մոտ:

— Այդ ինչո՞ւ ադրբեջանական իշխանությունները չեն բողոքում Գորկու այս ակնարկի դեմ, որ ամեն տարի միլիոնավոր տպաքանակով վերահրատարակվում է անընդմեջ վերահրատարակվող Մ. Գորկու հատորներում, իսկ հայկական թերթի մի երկու պարբերությունը, որ տպագրված է մի քանի հազար տպաքանակով,

նման արձագանք է ստանում նրանց կողմից:

Եկավ ուրբաթը և մենք, զինված Մաքսիմ Գորկու հատորով, մտանք Կենտկոմ: Երևի բյուրոյի նիստերի դահլիճում, մենք դատապարտյալի տեսք չունեինք, որ նկատվեց Սուրեն Թովմասյանի կողմից.

— Երջանիկ դեմքեր ունեք, չլինի՞ հարսանիք եք եկել,— հեգնեց:

— Ոչ էլ դատարան ենք եկել,— սրամտեց մերոնցից մեկը:

— Ծիծաղում է նա, ով վերջում է ծիծաղում,— խոսքի տակ չմնաց Կենտկոմի առաջին քարտուղարը:

Իսկ բյուրոյում, երբ ընթերցվեց Մ. Գորկու ակնարկի վերոհիշյալ մասը, եղանակն անմիջապես փոխվեց: Նախ, մի փոքր լռություն տիրեց, ապա հորդեցին ելույթներ հակառակ ծայրից: Ի պաշտպանություն թերթի ելույթ ունեցան շատերը: Գևորգ Հայրյանը, Կենտկոմի ագիտացիայի ու պրոպագանդայի բաժնի վարիչը, ուղղակի ջարդ ու փշուր արեց «Սովետ Էրմանիստանի» թերթի խմբագիր Զաֆար Վելիբեկովին, թերթում «Մամուլի տեսություն» խորագրի տակ, քննադատելու և անլուր հայհոյանքներ ու լուտանքներ թափելու համար՝ «Գրական թերթի» հասցեին: Սուրեն Թովմասյանը ևս իջեցրեց իր քննադատության տոնուսը.

— Գնացեք և ձեզ արժանի կարգին գործով զբաղվեք, գործ չունեք Ղաչաղ Նաբիների հետ...

ԳԻՐՔԸ ՓՐԿՎԵՑ

«Հայաստան» հրատարակչությունը պատրաստվում է հրատարակելու Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը: Իմիջիայլոց, մի զարմանալի տրամաբանությամբ այդ հրաշալի գիրքը չի թարգմանվել միայն թուրքերեն, ռուսերեն և... հայերեն: Խոսքն, իհարկե, մեծ լեզուների մասին է: Արդեն գրքի թարգմանության վրա աշխատում է Պարույր Միքայելյանը, հրատարակչական պլանը ծանուցել է, որ 1964 թվականին լույս է տեսնելու այդ գիրքը: Սակայն կատարվում է մի տհաճ երևույթ. Լիբանանցի հայ կոմունիստներից ՀԿԿ Կենտկոմն ստանում է մի հորինովի ճղճիմ նամակ, որի հեղինակները գտնում են, որ գրքի տպագրությունը սկզբունքային սխալ կլինի, քանի որ վեպի հերոսը՝ Բագրատյանը, դաշնակցական է: Մեզ՝ հրատարակչության տնօրեն Մխիթար Դավթյանին և ինձ՝ գլխավոր խմբագրիս, կանչում են Կենտրոնական Կոմիտե, անպայման «մշակելու» քաղաքական կուրության և գրքի տպագրությունը կանխելու նպատակով: Մեծ, միայն մեծ ճիգով ու ջանքով է հաջողվում համոզել պատասխանատու աշխատողին, որ Բագրատյանը դաշնակցական չէ, որ նա ապրել և մահացել է Երևանում, որ թաղված է Շահումյանի գերեզմանատանը: Երերում է ղեկավարի կարծիքը և ես ստիպ-

ված դիմում եմ վերջին միջոցին, պատմում եմ անեկդոտ, որն արդեն գինաթափող դեր է խաղում, գրքի տպագրությունը փրկելով.

— Թուրքիայում ապրելիս է եղել մի արյունարբու և անորսալի գող, Հասան անունով, որի վնասազերծման հարցով զբաղվում է նույնիսկ սուլթանը: Մեծ գլխագին են խոստանում բռնողին: Իսկ պայմանն այսպիսին է. գողին պիտի բռնել, կախել սուլթանի պալատի առջև, որ վերջինս հավաստիանա ու վճարի այդ հսկայական գլխագինը: Ի վերջո, հաջողվում է որսալ ավազակին: Բայց կախել չի հաջողվում, որովհետև գողի վիզն ավելի հաստ է, քան գլուխը և կախաղանի օճառած պարանը չի կարողանում սեղմել վիզը և դատապարտյալն ընկնում է օդակից ներքև, չի հաջողվում կախել: Ի՞նչ անել: Մեկն ասում է, որ հեռվում նստած փինաչու անունը նույնպես Հասան է, եկեք սրան ազատ արձակենք և կախենք հնակարկատ Հասանին, նրա վիզը բարակ է, օդակից ներքև չի ընկնի: Այդպես էլ անում են: Գող Հասանին ասում են՝ Հասան, դու գնա, փինաչի Հասանին կանչում են՝ Հասան, դու արի: Եվ առոք-փառոք կախում: Սուլթանը նայում է, տեսնում կախված Հասանին և կատարում իր խոստումը: Այստեղ էլ ավարտվում է և այս պատմությունը:

— Առակս գինչ ցուցանե,— հարցնում է ղեկավար ընկերը:

— Դուք այս սուրբ գիրքը հրատարակելու

հասար արգելքներ մի հարուցեք, իսկ Աստված մի արասցե, եթե անգամ հրատարակվելուց հետո ձեզ մեղադրեն, որն իմ կարծիքով բացառվում է, ապա պատժեցեք ինձ. Հասանի վիզը բարակ է՝ հեշտությամբ կարելի է կախել... Միայն թե գիրքը լույս տեսնի...

Նահանջեց...

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂՎԱԾՔ Հայաստանի գրողների միության կուսակազմակերպության 195.. թվականի սեպտեմբերի 18-ի դռնփակ ժողովի արձանագրությունից:

Նախագահում է կուսբյուրոյի քարտուղար Հարությունն Մկրտչյանը:

Քարտուղար՝ Վահագն Կարենց:

Հարություն Մկրտչյան.— Անցնենք օրակարգի վերջին հարցին: Ազատ Վշտունուն կուսակցության մեջ ամբողջ ստաժով վերականգնելու մասին: Ասեմ, ասեմ, կուսբյուրոն լսեց այս հարցը և ամբողջ ստաժով ընկեր Ազատ Վշտունուն վերականգնեց կուսակցության մեջ: Ազատ Վշտունին մեր այն բանաստեղծներից է, որ քայլում է կյանքի հետ, գրում արդիական այնպիսի գործեր, որոնք հետո դառնում են դասական արժեքներ...

Տեղից.— Մի քիչ ցած իջիր, դասակա՞ն...

Հարություն Մկրտչյան.— Լավ, չեք ցանկա-

նում, դասականությունը ծալեցինք: Ախր, ընկեր Վշտունին ստալինյան ռեպրեսիաների զոհ է...

Տեղից.— Զոհ չէ, Հարություն, տուժած է, զոհ լիներ, հիմա Թոխմախում կլիներ...

Հարություն Մկրտչյան.— Իմ կարծիքով զոհ ու տուժած մի բան են, հարկավոր չէ մանրանալ...

Տեղից (նույն ձայնը).— Ո՞վ է տեսել, որ մեռածն ու ողջը մի բան լինեն, այ Քսպե...

Հարություն Մկրտչյան.— Դե, որ այդպես է, եկեք իրեն հարցնենք. Ազատ, դու զոհ չե՞ս...

Ազատ Վշտունի (արտասվելով բարձրանում է տեղից).— Զոհ չեմ, բա ի՞նչ զահրումար եմ...

Տեղից.— Ա՛յ ընկեր Ազատ Վշտունի, լավ մտածիր, գուցե տուժա՞ծ ես...

Ազատ Վշտունի (ավելի բարձր արտասվելով),— Տուժած չեմ, բա ի՞նչ զահրումար եմ...

Հարություն Մկրտչյան.— Ընկերներ, եկեք չտանջենք մարդուն, Ազատ Վշտունին հուզված է... Ուրեմն, ասացինք, որ Ազատ Վշտունուն առանց ընդմիջման ամբողջ ստաժով, բյուրոն վերականգնեց: Հիմա խոսքը կուսժողովինն է: Հարկավոր են ելույթներ, առնվազն երեք ելույթ, գործը վերադասին ուղարկելու համար... Ո՞վ է ուզում առաջինը ելույթ ունենալ, խնդրեմ, ընկեր Սիրաս...

Հմայակ Սիրաս.— Մեր սիրելի Ազատ Վշտունին կարգին մարդ է, երբ նրան հեռացրին կուսակցությունից, մենք համաձայն չէինք Կենտկոմի այդ որոշմանը, և, ի նշան մեր անհամաձայնության, գնացինք ընկեր Ազատենց տուն և կերանք թթով տոլմա...

Նաիրի Զարյան (տեղից ցատկելով).— Նեղողություն, ներողություն, կարևորագույն դետալները չպետք է մոռանալ, Սիրա՛ս, եթե չես մոռացել, մենք այնտեղ կերանք ոչ միայն թթով տոլմա, այլև գառան մսով խորոված...

Հմայակ Սիրաս.— Նաիրին միանգամայն ճիշտ է, ինչպես միշտ՝ սկզբունքային: Վերջացնեմ, ընկերնե՛ր, ուրեմն, հաշվի առնելով վերոհիշյալը, առաջարկում եմ՝ հաստատել կուսբյուրոյի որոշումը, վերականգնել Ազատ Վշտունուն կուսակցության մեջ՝ ամբողջ ստաժով...

Հարություն Մկրտչյան.— Ուրիշ ելույթներ, ընկեր Ղարագուլյան...

Արշ. Ղարագուլյան.— Առաջներում, երբ ինձ ասում էին, որ գրողների միության կուսակազմակերպությունը, դա մարտական մի հզոր դպրոց է, ներեցեք իմ գրչակից ու կուսակից բարեկամներ, կասկածում էի, հիմա հպարտ եմ, որ ես ծերունազարդ դրամատուրգս, այս հզոր դպրոցում ուսանում եմ կուսակցական սկզբունքայնություն...

Տեղից.— Գործից խոսիր, գործից...

Արշ. Ղարագուլյան.— Ես ելույթս ուզում եմ սկսել այնտեղից, ուր վերջացրեց Նաիրի Զարյանը, խոսելով գառան մսով խորոված մասին:

Արդիական հարց է և մտահոգություն: Մեզ մոտ մսի վաճառքը սխալ է կազմակերպվում: Միսը պետք է վաճառել փաթեթավորված, մաքուր, կուլտուրական ձևով, հարկավոր է ընդօրինակել մյուս հանրապետությունների առաջավոր փորձը, միսը փաթաթելով մսի քաշի համաձայն. կես կիլոգրամանոց, մեկ կիլոգրամանոց, երկու կիլոգրամանոց փաթեթներով: Լավ կլինի փաթեթները լինեն ցելոֆանից: Այ, դա կլինի մսի առևտուր... Ես վերջացրի...

Սերո Խանզադյան (տեղից).— Սրան մտիկ արեք, միսը ճարեց, մնաց փաթեթավորելը...

Արշ. Ղարագուլյան.— Ելնելով վերոհիշյալից, առաջարկում եմ՝ վերականգնել:

Տեղից.— Ո՞ր վերոհիշյալից, միսը փաթեթավորելո՞ւց...

Հարություն Մկրտչյան.— Չեք թողնում մարդ իր ասածը հիմնավորի: Մենք կխմբագրենք արձանագրությունը և վերադասին կուղարկենք մշակված, ճշգրտված վարիանտը... Ես կարծում եմ, որ երեք հոգու ելույթը բավական է: Խնդրում եմ քվեարկել, ո՞վ է համաձայն բյուրոյի որոշմանը, թող ձեռք բարձրացնի... (Դահլիճը հոտնկայս ծափահարում է): Շնորհավորում եմ, Ազատ, սիրելիս: Հիմա ձայնը քեզ եմ տալիս:

Ազատ Վշտունի (բարձրանում է արտասավելով, ձեռքին ծխում է կես մետրանոց չիբուխը: Հազիվ է քաշ տալիս ոտքերը).— Ընկերներ, լաց լինելով ճշմարտության չես հասնի: Իմ ամբողջ կյանքը եղել է պայքար սկզբունքի համար: Եվ տուժել եմ այդ իսկ պատճառով: Պատմեմ մի տիպական դեպք իմ կյանքի դրվագներից: Մի տարի ես հանգստանում էի Սևանա կղզում: Մի երեկո դուրս եկա կղզում մաքուր օդ շնչելու և, ինչպես ասում են, ընկա շառի մեջ: Այ, ընկեր կոմունիստներ, մթության մեջ մեկ էլ տեսնեմ, մի կրակ առջևս ընկած գնում է: Ես գնում եմ, նա գնում է: Ես գնում եմ, նա գնում է: Ես ետ եմ դառնում, նա ետ է դառնում: Ես կանգնում եմ, նա կանգնում է: Ես վազում եմ, նա վազում է: Ես վազում եմ, նա վազում է: Ես վազում եմ ու... չքնքի ընկնում եմ լիճը: Լավ է, ընկնում եմ ծանծաղ ափին ու չեմ խեղդվում: Նայում եմ էդ անտեր չիբուխս էլ չկա: Դու մի ասի չիբուխիս կրակն է ինձ վախեցրել: Դե գնա, գնա և սկզբունքային եղիր... (Եվ հեծկլտում է բարձրաձայն):

Հարություն Մկրտչյան.— Ժողովն ավարտելուց առաջ, եկեք մեկ էլ շնորհավորենք մեր ընկերոջն ու վերջացնենք...

«ԱՀՆԻՁՈՐԸ» ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅՈՒՄ

«Գրական թերթի» խմբագիր Մ. Դ. Սարգսյանին «Ահնիձոր» ակնարկի մասին փառաբանող գրախոսություն տպագրելու համար հայտարարել նկատողություն:

ՀՍՍՀ ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ
ՈՐՈՇՈՒՄԻՑ 30.06.61 թ.

Գաղափարական ջարդ է: Զախջախվողներս երկուսով ենք՝ «Սովետական գրականություն» ամսագրի գլխավոր խմբագիր Վազգեն Մնացականյանը, որը տպագրել է Հրանտ Մաթևոսյանի «Ահնիձոր» ակնարկը և ես, որ իմ խմբագրած «Գրական թերթում» պաշտպանել եմ այդ «արատավոր, մեր իրականությունը ծուռ հայելում պատկերող» ակնարկը: Կենտկոմը գտնում է, որ «Գրական թերթը» անպատասխանատվություն է հանդես բերել և սխալ է թույլ տվել, տպագրելով գրախոսություն, «որի մեջ անսանձ փառաբանություն կա քաղաքականապես վնասակար «Ահնիձոր» ակնարկի մասին»: Զարդ ու շռինգ, դատաստան տեսնելու կոչեր, սպառնալիք, մի խոսքով՝ միջնադարյան **ինկվիզիցիա: Ես չեմ ուզում** ներկայացնել բյուրոյի նկարագրությունը, այլ ցանկանում եմ մի քանի շտրիխով ցույց տալ, թե տոտալիտար կայսրությունը ինչպես էր անբարոյականացնում մարդկանց, կեղտոտում մարդկանց հոգիները, նրանցից վերաձևելով քաղաքական

խամաճիկներ, որոնք շարժվում էին լարովի խաղալիքների նման: Ուզում եմ ներկայացնել նրանցից առավել տիպականին: Ելույթ է ունենում ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահը՝ Ծմավոն Առուշանյանը: Ելույթից պարզվում է, որ նա ակնարկը չի կարդացել կամ կարդացածը չի հասկացել և օգտագործում է քաղաքական տերմիններ, որոնց բովանդակությունը ներհակ է իսկական իմաստին: Ցանկանում է ակնարկից մեջբերում կատարել և չի կարողանում ընթերցել ու ջղայնանում է.

— Այս ինչ եք տպագրել, մարդ չի կարողանում ընթերցել...

— Ո՞վ է մեղավոր,— հանկարծ թոչում է բերանից: Հանկարծակի պոռթկում էր: Ճահիճը սկսեց եռալ: «Ահնիձորը» մի պահ մոռացվեց: Գրոհ սկսվեց հանդուգնի վրա.

— Տեսեք, թե ուր, մինչև ուր կարող է իջնել ապաքաղաքական մարդը...

— Պատահական չէ, որ նրա խմբագրած թերթն է պաշտպանել քաղաքական այս պասկվիլը...

— Հեռացնել, Սարգսյանին հեռացնել կուսակցությունից:

— Ազատել աշխատանքից...

— Գրողների միությունը մաքրել նման-ներից...

Զարդեցին, ծեծեցին և «մաքրեցին» գաղափարական աշխատանքի բնագավառը: Հետո,

երբ վերջացավ բյուրոյի նիստը, երբ դուրս եկան երդվյալ ուղղափառները, այլ բան կատարվեց: Ինձ մոտեցան շատերը, նույն մարդիկ, ովքեր քիչ առաջ ինձ ձաղկում էին, ծանակում, պահանջելով դատաստանել, ազատել աշխատանքից, հեռացնել կուսակցությունից, մաքրել գրողների միությունը ինձ նմաններից և սկսեցին փսփսալ ականջիս.

— Ապրես, Սկրտիչ, այդ անգրագետ ջարդարարի հախից լավ եկար...

— Ցնորհավորում եմ, սիրելիս, եթե բոլորը քեզ նման սկզբունքային լինեին...

— Մեր տված նկատողությունը՝ շքանշան Համարիր, ոչ թե պատիժ...

Լսում էի նրանց և չէի զարմանում, չէի հավատում: Եթե նրանք, իրոք, բաժանում էին իմ կարծիքը, էլ ինչո՞ւ բարոյական կոտրանքի ենթարկեցին Վազգեն Մնացականյանին ու ինձ և ոչ թե՝ Ծմավոն Առուշանյանին... Ուրեմն, կոմունիստ դեկավարները հավատավորներ չեն, այլ՝ երկերեսանի պաշտոնավորներ...

ՀԳՄ ԿՈՒՍԺՈՂՈՎՈՒՄ

ՔԱՂՎԱԾՔ
ՀՍ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿՈՒՍԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Կուսբյուրոյի քարտուղար Սերո Խանզադյան.— Հարգելի ժողովականներ, անցնենք վերջին հարցին: Կուսանդամ Գրիգոր Յաղջյանը, որին բոլորս հարգում ենք, որը հրաշալի մարդ է և ընկեր, ընկել է դժբախտ կացության մեջ: Ստիպված եմ քննելու ընկերոջս հարցը, որի հետ կիսել ենք օրի և խորոված, ջան ենք ասել իրար, ջան ենք լսել իրարից և հիմա, դե արի ու նրա հարցը քննիր...

Տեղից.— Խոսիր ըստ էության, ձեր խաշխորոված ընկերության հարցը չի քննվում...

Սերո Խանզադյան.— Համբերեք, կամաց կյալիս եմ, մարդուն հարկավոր է ներկայացնել ըստ էության, հրաշք մարդ է Գր. Յաղջյանը և համարձակ, տնաշենը տասնչորս ամիս կուսանդամավճար չի մուծել: Հերոս պիտի լինել կուսակցության հետ նման խաղեր խաղալու համար: Կուսակցությունը չի ների, մարդու հերը կանիծի: Ըստ կանոնադրության Գրիգորն ավտոմատ կերպով դուրս է մնում կուսակցությունից: Խոսքը մեր մեջ, նա երևի ցանկանում է դուրս գալ կուսակցությունից և, որովհետև ուրիշ մեղքեր չունի, ինքը մեղք է հորինել, որ վտարվի կուսակցու-

թյունից և անդամավճար չմուծի: Բյուրոն լսեց այս հարցն ու որոշեց նրան թողնել կուսակցության մեջ՝ հայտարարելով խիստ նկատողություն: Այժմ խոսքը ձերն է, հարգելի ընկերներ... Հարցեր կա՞ն...

Գարեգին Բեռ.— Ընկեր Խանզադյան, դուք կարծեմ Գրիգոր Յաղջյանի հետ ընկերություն եք անում, այդպես չէ՞...

Սերո Խանզադյան.— Այո, և պարծենում եմ նրա ընկերությամբ, հրաշալի բաժակակից է...

Գարեգին Բեռ.— Բա որ տասնչորս ամիս անդամավճար չէր մուծում, դուք չէի՞ք նախազգուշացնում, որ ձեր ընկերը մուծեր, կատարեր իր կանոնադրական պարտականությունը...

Սերո Խանզադյան.— Ի՞նչ ասեմ, Գարեգին, տղի տեղը նեղ էր, ախր նրա վաստակը փոքր էր: Վերջերս մի պիես է բեմադրել՝ «Գիշերային», թե «Յերեկային հրաշք» վերնագրով: Դարդ էր անում, որ եթե անդամավճարը մուծի, խմելու փող չի մնա, ախր տունը պահելու հոգս էլ կա...

Գարեգին Բեռ.— Որ այդպես է, խնդրում եմ ժողովին. խիստ նկատողություն հայտարարել Գ. Յաղջյանին, իսկ Սերո Խանզադյանին վտարել կուսշարքերից, Գր. Յաղջյանի հետ անդամավճարը մսխելու համար...

Համո Սահյան.— Լսիր, Գարեգին, կուսակցական անդամավճարն ուտել կլինի՞, ախր, կուսակցության փողն ուտողի բկին կկանգնի...

Գարեգին Բեյ.— Ինչի՞ որ, Սերոն շատ լավ էլ կերել է...

Հմայակ Սիրաս.— Ես առաջարկություն ունեմ: Քանի որ Գր. Յաղջյանն ինքնահոժար կերպով ցանկանում է վտարվել կուսակցությունից, ես առաջարկում եմ, որպես պատիժ, նրան թողնել կուսակցության մեջ, իսկ տույժի չափը թող որոշի ժողովը...

Տեղերից.— Սիրա՛ս, դու ուղղափառ կոմունիստ ես, քեզ ի՞նչ պատահեց: Սիրա՛ս, ի՞նչ ես դուրս տալիս, ինչպես թե՝ որպես պատիժ մեղավորին թողնել կուսակցության մեջ: Ի՞նչ է, կուսակցությունը պատժավա՞յր է...

Հմայակ Սիրաս (ձեռքը ճակատին զարկելով).— Իսկապես, որ ինձ ի՞նչ է պատահել... Ես երևի ջերմություն ունեմ, այո, այո, ես ջերմում եմ... Ասածիս համար պատասխանատու չեմ...

Տեղերից.— Զուր բերեք, արագ, արագ, Սիրասը ձեռքից գնում է...

ԻՆՉՊԵՍ ԴԱՐՁԱ ՊԵՆՏԱԳՈՆԻ ԳՈՐԾԱԿԱԼ

Ես աշխատում եմ Հայպետհրատի գլխավոր խմբագիր: Իմ դիմաց նստել էր ծանրամարմին, թրաշած գլխով և պաղ աչքերով մի ծերունի: Չգիտեմ ինչու, մեր խոսակցության ընթացքում, նա ժպտում էր, ավելի ճիշտ ժպտալու փորձ էր անում, որից

նրա դեմքը ստանում էր հարձակողական, ագրեսիվ արտահայտություն: Եվ աչքերն այդ պահերին չարանում էին ավելի: Զարմանալի դեմք էր՝ վանող, չար, քնկոտ, հայացքը՝ եթե չէր ժլպտում, ասես խոսակցին նայում էր դարանից, ակնդետ յուրաքանչյուր խոսքին և շարժմանը, իսկ երբ ժպտում էր, ինչպես ասվեց վերևում, չարացած հարացքն անցնում էր հարձակման, իսկ հետագայում, երբ մեր միջև վեճեր էին բորբքվում, նրա հայացքը նահանջում, ասես կուչ էր գալիս, իսկ լեզուն հայհոյանք, շանտաժ, պարսավանք էր արտավիժում, որի ժամանակ չորս դին հածող աչքերն ասես թաքստոց էին փնտրում, իրենց կոիվը փոխանցելով լեզվին: Նրան տեսնելուն պես, ես հասկացա, որ գործ ունեմ դժվար անձնավորության հետ:

— Երիտասարդ, դուք ինձ գիտե՞ք,— խոսեց խուլ ձայնով:

— Ո՛չ, միայն լսել եմ...

— Եվ ի՞նչ...— նայեց դարանակալ:— Դուք երևի գիտեք, որ ես՝ Գուրգեն Հայկունին,— սեծամտացրեց իր անունը,— 1907 թվականից գտնվում եմ ՍՄԿԿ շարքերում, երկրորդ Ինտերնացիոնալի դեկլարացիայի տակ ստորագրողներից եմ, մեծ ճանապարհ անցած մի սարդ, որը սակայն, ստալինյան բոնապետության զոհերից է...

Ստիպված եմ ընդհատել.

— Դուք վերընդունվե՞լ եք կուսակցության մեջ...

— Այո, բայց այդ ինչ անպատեհ հարց է...

— Ոչինչ,— ասացի,— ինձ թվաց, թե դուք Հայպետհրատի գլխավոր խմբագրությունը շփոթել եք կուսակցական հիմնարկի հետ: Ձեր խոնարհ ծառան կոչված է գրքեր հրատարակելու, այդ իսկ պատճառով էլ ձեր ինքնաքննության գիրը չէ, որ հետաքրքրում է ինձ, այլ ձեր ձեռագիրը, եթե բերել եք հանձնելու...

Գուրգեն Հայկունին իմ դիտողությունն ընդունեց մարտահրավերի նման: Նա բարձրացրեց ձեռքը և թաքցրեց հայացքը.

— Երիտասա՛րդ, իմացե՛ք...

Վերստին ընդհատեցի նրան.

— Իդեպ, իմ ազգանունը Մկրտիչ Սարգսյան է... Ներեցեք հանդգնության, բանի նման չի լինի, եթե միմյանց դիմենք երիտասարդ և ծերունի ածականներով...

— Դուք, ընկեր Սարգսյան, կատարեցիք մի քանի սխալ, այդ թվում նաև քաղաքական, որը կարող է ձեր կարիերայի համար ճակատագրական լինել: Դուք պետք է իմանաք, որ մեր երկրում բոլոր հիմնարկներն էլ կուսակցական են, մինչդեռ հրատարակչությունը, որը պետք է լինի ամենակուսակցականը, դուք դուրս դրեցիք կուսակցությունից: Նման տրամադրության տեր մարդը, կարծում եմ, նման բարձր աթոռ զբաղեցնելու իրավունք չունի: Այս՝ մեկ: Երկրորդը՝

դուք վիրավորեցիք մի մարդու, որին ճանաչել է անգամ Լենինը... Կարծում եմ, հասկանում եք, թե դա ի՞նչ է նշանակում...

— Տվեք ձեր ձեռագիրը: Իդեպ, ես անգործ մարդ չեմ, եթե տեսել եք, ընդունարանում բավական թվով այցելուներ կան: Եվ աստված ձեզ հետ...

Այո, չարությունը Գուրգեն Հայկունու մենաշնորհը չէր: Զարանալու իրավունք ունեի նաև ես: Իսկ Գուրգեն Հայկունին ամեն կերպ աշխատում էր բորբոքել չարությունն իմ մեջ:

— Դուրս է գալիս, որ ինձ վռնդում եք: Իմացե՛ք, ում եք վռնդում, հին կոմունիստին և Լենինի ծանոթին, երկրորդ՝ Ինտերնացիոնալի...

— Լսեցեք, ի սեր Աստծո, վերջ տվեք դեմագոգիային: Ես չգիտեմ, դուք Լենինին ծանոթ եղել եք, թե ոչ, բայց հաստատ գիտեմ, որ նրան ծանոթ են եղել ոչ քիչ թվով ստահակներ, որոնց իր աշխատություններում ձաղկել է առաջնորդը, և, թեև ձեզ չեմ կարող դասել նրանց շարքը, բայց խնդրում եմ, նման մեթոդներով չփորձեք ինձ վախեցնել... Իդեպ, քիչ կրկնեք և՛ ձեր հին կոմունիստ լինելը և՛ երկրորդ Ինտերնացիոնալի կոնգրեսը, դրանցով չի ավելանալու ձեր տաղանդը և չի բարձրանալու ձեր գրքի որակը... Իսկ հիմա գնացեք, ես անգործ չեմ...

— Լա՞վ...— մոռաց Հայկունին,— ես հիմա ձեզ իմ գրքի ձեռագիրը չեմ հանձնի, դուք այն կտապալեք: Համապատասխան հիմնարկից ձեզ

կպարտադրեն գիրքս արտադրություն իջեցնել և նոր միայն դուք կստանաք իմ ձեռագիրը...

— Որպեսզի դուք շատ դեսուդեն չընկնեք, այժմվանից իմացեք, որ ոչ մի համապատասխան հիմնարկ չի կարող առանց գրախոսության և առանց խմբագրելու ձեր ձեռագիրը պարտադրել արտադրություն իջեցնելու, խնդրում եմ, պատիվ ունեմ...

— Գիրքս ձեր գլխի վրայով կիջնի տպարան, ես խոստանում եմ...

— Կարդանք, կտեսնենք...— ասացի ես, դուռը ծածկելով նրա հետևից:

* * *

Մեր ջուրը մի առվով չգնաց: Գուրգեն Հայկունին կատարեց իր խոստումը: Մեր հանդիպումից մեկ օր չէր անցել, երբ ինձ զանգահարեց ՀԿԿ առաջին քարտուղար Յա. Ն. Զարոբյանի օգնականը և իր պետի անունից կարգադրություն անելու պես խնդրեց, որ ես չչարչարեմ հին կոմունիստին և, առանց ձգձգումների ընթացք տամ նրա բանաստեղծությունների գրքին: Ես ասացի, որ ոչինչ չունեմ այդ մարդու նկատմամբ և օրինավորության ասմմանններում կանեմ ամեն ինչ, որ Հայկունու գիրքը, եթե իհարկե, այն արժանի է, լույս աշխարհ գա: Զանգահարությունից ժամ

չանցած եկավ Հայկունին՝ բավական հաստափոր ժողովածուն թևատակին:

— Ձեզ Կենտկոմից զանգահարեցի՞ն...— Բարևից հետո հարցրեց նա:

— Զանգահարեցին...

— Եվ ի՞նչ...

— Ոչի՛նչ, խոստացա առանց ձգձգումների և քաշքշուկների ընթացք տալ ձեր գրքին...

— Ուրի՞շ...

— Ոչինչ, էլ ինչ կարող էի խոստանալ: Ժողովածուն պետք է օրինական ճամփով ընթանա, մինչև գիրք դառնա...

— Կարելի՞ է իմանալ ինչ ճանապարհ է դա,— փորձեց ժպտալ Հայկունին:

— Ինչու չէ: Մենք երկու դրական գրախոսություն ստանալուն պես, ձեր գիրքը կհանձնենք խմբագրին, որից հետո կիջեցնենք արտադրություն...

— Իսկ ո՞ւմ եք տալու..

— Չգիտեմ, չեմ մտածել,— ասացի,— կաշխատեմ տալ հեղինակավոր և օբյեկտիվ մի ընկերոջ...

— Իհարկե, ինձ տեղյակ կպահեք, թե ո՞ւմ...— Նորից ծամածռվեց նրա դեմքը:

— Այդ մեկը չեմ խոստանում, իրավունք չունեմ, ընդհակառակը՝ ձեր գիրքը գրախոսին կը-հանձնենք, հանելով անվանաթերթը, որպեսզի նա չիմանա ում գիրքն է՝ առավել օբյեկտիվ լինելու համար...

— Բայց ես մի՞թե այն մարդն եմ, որ գրողների համար սահմանված օրենքները տարածվեն ինձ վրա...

— Չեմ հասկանում, ի՞նչ եք ցանկանում, հարգարժան ընկեր Հայկունի, մի կողմից դուք ցանկանում եք գեղարվեստական ստեղծագործություն հրատարակել և մյուս կողմից, չեք ցանկանում հրատարակչական օրինականությունը տարածվի ձեր գրքի վրա... Արդյոք կարիք կա՞ նրման հարցի շուրջ ջուր ծեծել...

— Դուք հասկանո՞ւմ եք, կարող են ձեր գրախոսները իմ գիրքը մերժել...

— Ոչ ոքի գիրքը նախօրոք երաշխավորված չէ մերժվելուց: Այդ թվում և ձերը...

— Դուք ինձ ստիպում եք նորից դիմելու Կենտկոմի օգնությանը...

Մեծ պաշարներ չունեցող իմ համբերությունն արդեն սպառվում էր.

— Լսեք, ընկեր Հայկունի, ես ձեզ հայերեն բացատրեցի գիրքը լույս ընծայելու օրինական ճանապարհը, եթե դա ձեզ չի գոհացնում, դիմեք վերադասին, թող Հայկունու համար նոր օրենքներ մշակեն, իսկ ես գործող օրենքները խախտելու որևէ հիմք չեմ տեսնում: Հետո խոնարհաբար խնդրում եմ, չփորձեք ինձ վախեցնել վերադաս հիմնարկների անուններով: Ում ուզում եք, դիմեցեք՝ Կենտկոմին, Աստծուն անգամ, ես օրինականությունը խախտել չեմ կարող և իրավունք էլ չունեմ խախտելու...

Այնուամենայնիվ, գիրքը թողեց սեղանին և գնաց...

Գիրքը գրախոսության տրվեց բանասիրական գիտությունների դոկտոր Արամ Գրիգորյանին, բանիմաց և օբյեկտիվ մի անձնավորության, նախօրոք զգուշացնելով, որ ձգձգումներ չլինեն: Իհարկե, նախօրոք հանելով գրքի անվանաթերթը: Գրախոսությունը անհավոր էր: Երիտասարդ բանաստեղծը (գրախոսը չգիտեր, որ երիտասարդ բանաստեղծը ուր որ է բախելու է 80-ի դուռները) ոչ մի կապ չունի ոչ միայն պոեզիայի հետ, այլև նրան հարկավոր է վերացնել կիսագրագիտությունը: Ապա գրախոսը շրջվել էր մեր դեմ, թե ինչու է հրատարակչությունը նման ձեռագրեր ընդունում, նյութական միջոցներ փչացնում, փոխանակ սկսնակ գրողին զգուշացնելու, որ վերջինս վերացնի անգրագիտությունը և այլն և այլն:

Գուրգեն Հայկունու ձեռագիրը մերժվեց նաև երկրորդ գրախոսի կողմից: Այդ օրերին գրողների միության կուս. ժողովում ելույթ ունեցավ Հայկունին, այն էլ ի՞նչ ելույթ... Գրական աչքի ընկնող դեմքերի գլխին կեղտաջուր թափեց, մեղադրեց հազար ու մի մահացու մեղքերի մեջ: Մեր բանավոր և գրավոր բառարանները, որոնք թեթևացել էին քաղաքական մարդասպան բառերից ու տերմիններից, Հայկունու կեղտակուր բերանը նորից արտավիժեց դրանք: Նաիրի Զարյանը որակվեց քաղաքական խուլիգան, Սիլվա

Կապուտիկյանը՝ պոռնոգրաֆիստ, Հր. Հովհաննիսյանը՝ կալվածատիրական կարգերի ռեստավրատոր, որ մեկն ասել: Պարզվեց, որ (հետագայում) Հայկունու ելույթը հրետանային նախապատրաստություն է եղել, գաղափարական նոր լայնամասշտաբ հարձակման համար գրական մշակների դեմ, նրանց աչքերը վախեցնելու և գրական աշխարհում իր տեղը շանտաժով նվաճելու համար: Իհարկե, գրողները նրան բարոյապես այնպես թակեցին, որ, ինչպես ասում են՝ նա իր եկած ճանապարհը մոռացավ և փախավ ժողովից: Բայց նա բավականաչափ թույն էր կուտակել: Մենք դա զգում էինք: Նրա խայթը մահացու էր լինելու, վարկաբեկիչ, հայ մտավորականության և Հայաստանի համար: Ես վերջնականապես մերժեցի գիրքը: Շանտաժը չօգնեց: Կենտկոմը պահանջեց գրավոր բացատրություն: Ուղարկեցինք: Կենտկոմը չգիտեր իր անելիքը և հապաղում էր: Վախենում էր Հայկունուց: Անկեղծ խոսակցության ընթացքում, մտերիմ մարդկանց շրջանում Յակով Զարոբյանն ասել էր, որ իգուր, շատ իգուր հրատարակիչները շուն կատաղեցրին: Հետո, այնուամենայնիվ, ասել էր, որ Հայկունու հաշոցներին բանի տեղ չպետք է դնել:

Իսկ ինչ հաշոցների մասին էր խոսքը. Հայկունին մի անավոր զրպարտագիր էր ուղարկել Մոսկվա, քաղբյուրոյի քարտուղար Մ. Սուսլովին: Հասցեատիրոջ ընտրությունը պատահական չէր: Զրպարտիչը գիտեր, որ Սուսլովը քաղբյուրոյի

անդամներից ամենակատաղի ստալինյանն էր և հայ ժողովրդի երդվյալ թշնամին, որի ատելությունն այն աստիճանի անթաքույց էր, որ գաղափարական հարցերի մաքրության նախանձախնդիր քարտուղարը նույնիսկ քաղբյուրոյի անդամների ներկայությամբ հայհոյախառն կարծիքներ էր բարբաջում հայերի հասցեին: Այդ զրպարտության մեջ հայ մտավորականությունը մեղադրվում էր նացիոնալիզմի, դաշնակցության վերածնման, հակառուսական մտայնության և հազար ու մի մեղքերի մեջ: Զրպարտչի ճանկերից չէր ազատվել ոչ մի աչքի ընկնող մտավորական, ոչ մի գործիչ: Նրա գրչի տակ Հայաստանը վերածվել էր քաղաքական այլախոհներից կազմված մի տուգանային գումարտակի, որը զբաղված էր խորհրդային կարգերի քայքայումով և կապիտալիզմի ռեստավրացիայով: Իդեպ, Գ. Հայկունու սև գրչի տակ ես առաջին դեմքերից էի, որին կոմունիստական գաղափարներին դավաճանած Հայկոմկուսի ղեկավարությունը օգտագործում է որպես հարվածային ուժ և ըստ անհրաժեշտության անտում է գաղափարական աշխատանքների ամենաթեժ տեղամասերը, մարքսիզմ-լենինիզմը վարկաբեկելու և հին կոմունիստների հետ դատաստան տեսնելու առաջադրանքով: Ես մերժել էի Հայկունու գիրքը և նա ինձ Պենտագոնի ագենտի պաշտոն էր շնորհել: Իսկ Սուսլովի գրասենյակը կից գրությամբ

պահանջում էր քննության առնել նամակը և պատասխանել թե Մոսկվային, թե նամակի հեղինակին՝ Հայկունուն: Ուրեմն, կուսակցական ղեկավար ինստանցիաները պետք է քննությամբ պարզեին, թե ես Պենտագոնի գործակալ էի, թե՝ ոչ: Կենտկոմում վախեցած էին: Իսկ վախեցած մարդիկ կորցնում են նույնիսկ հումորի զգացումը: Հայկունու գրչի տակ ամբողջ հայ մտավորականությունը հանկարծ հայտնվել էր թշնամական լագերում, միայն նրա համար, որ չէր կամենում ճանաչել Հայկունուն որպես հայ կոմկուսի հիմնադիր, չէր ընդունում այդ կիսագրագետ անձնավորության դասական գրող լինելու հանգամանքը և մերժել էր նրա չափածո և արձակ ստեղծագործությունների ժողովածուն: Եվ Կենտկոմը վախեցավ առճակատումից: Իհարկե, առաջին հերթին խոստանալով տպագրել նրա գիրքը: Եվ սկսեց ճնշել ինձ, փորձեց կոտրել իմ համառությունը: Սակայն ապարդյուն: Իհարկե, հետագայում ես շատ եմ տուժելու իմ այդ «մեղքի» պատճառով: Սակայն դա այլ հարց է, խոսակցության առանձին նյութ:

Այդ օրն, առավոտյան ժամը 9-ին, Կենտկոմ հրավիրվեցի Գաղափարական բաժին՝ Ստեփան Վարդանյանի մոտ: Երբ մտա նրա առանձնասենյակը, մյուս հրավիրվածներն արդեն այնտեղ էին և ինձ էին սպասում: Ի զարմանս ինձ այնտեղ, բաժնի վարիչի մոտ տեսա մեր հրատարակչության դիրեկտոր Կարո Վարդանյանին և Գուրգեն Հայկունուն: Վերջինիս տեսքը հաղթական էր, իսկ հրատարակչության տնօրենը՝ վախեցած: Ուրեմն, տաք խոսակցություն էր տեղի ունեցել և, ամենայն հավանականությամբ, Գուրգեն Հայկունու շանտաժը մերված նրա պերճախոսության հետ անկյուն էին մղել Կարո Վարդանյանին: Արագ որոշեցի անելիքս: Զվարթ երանգ հաղորդելով խոսքիս, ողջունեցի.

— Բարև ձեզ, ընկեր Վարդանյաններ...

— Իսկ ինչու չեք բարևում ընկեր Հայկունուն,— անմիջապես ստացա բաժնի վարիչի դիտողությունը:

— Իսկ ինչո՞ւ պետք է բարևեմ հակառակ բևեռում գտնվող իմ քաղաքական-գաղափարական հակառակորդին: Նա 1907 թվականից կոմունիստ, ես՝ Պենտագոնի ագենտ...

Անմիջապես հաջորդեց Ստեփան Վարդանյանի հարցը Հայկունուն, որ զարմանքից այդ պահին չգիտեր ինչ անել.

— Ընկեր Հայկունի, ահա Սարգսյանն այստեղ է, ապացուցեք, որ նա Պենտագոնի ագենտ է...

«Ի՞նչ է ասում, ի՞նչ հարց է դա, ի՞նչ ակնկալիք ունի Հայկունուց բաժնի վարիչը... Եվ ինչպե՞ս, ի՞նչ սատանայական հնարքով կարող է այդ քարթու զրպարտիչը ապացուցել իմ Պենտագոնի ագենտ լինելը»:

Իսկ Հայկունին ուղղվում էր տեղում, վճռական ճակատամարտից առաջ: Հազաց, մաքրեց կոկորդը, ուղղեց փողկապը, նայեց ինձ ատելավառ հայացքով, որ ավելի բորբոքի ատելությունը: «Ուրեմն, սրա աչքին ես կարմիր լաթ եմ, թող գազազի, տեսնենք ինչ ուժով է պոզահարելու»:

— Այո՛,— ծոր տվեց նա,— ես պատահական մարդ չեմ, և դուք պետք է հավատաք կոմունիստի իմ ինտուիցիային: Եթե ես ասում եմ, որ Սարգսյանը Պենտագոնի ագենտ է, ուրեմն, ագենտ է: Ճիշտ է, նա ազատության մեջ է, գլուխպանում ունի խորհրդային անձնագիր և կուստոմս, նույնիսկ ոռճիկ է ստանում **մեզանից**,— նա շեշտեց մեզանից բառը,— սակայն գործում է հօգուտ Պենտագոնի... Իմ կարծիքն անսասան է և բեկման ենթակա չէ... Ես վերջացրի, ընկերներ...

Ստեփան Վարդանյանը նայեց ինձ: Ես ասելու բան չունեի:

— Դուք ասելու բան չունե՞ք...

— Իսկ ես ի՞նչ ասեմ, իբր թե նա ապացուցեց իմ Պենտագոնի ագենտ լինելը, ես էլ պետք է ապացուցեմ իմ անմեղությունը, այսինքն, Պենտագոնի ագենտ չլինելս... Ես նման պարապ, հիմար բաների ժամանակ չունեմ: Ես պարզապես ցանկանում եմ հին կոմունիստ Հայկունուն մեկ, միայն մեկ հարց տալ. եթե ագենտ եմ անգամ, սակայն անվտանգության ծառայություններ-

ը այդ փաստի մասին ոչինչ չգիտեն, ես մերկացված չեմ, նույնիսկ կուսակազմակերպության կողմից, նման պարագայում իմ Պենտագոնի ագենտ լինելը կարող է հաստատել միայն մեկ մարդ...

— Ո՞վ, ո՞վ,— թնդաց Հայկունին:

— Պենտագոնի երևանյան ռեզիդենտը՝ շեֆը,— ասացի հանգիստ,— Պենտագոնի շեֆ ռեզիդենտը, ուրիշ ոչ ոք: Եթե դուք՝ Գուրգեն Հայկունի, այդքան վստահ ու անսասան եք ձեր կարծիքի մեջ, ապա ես՝ Պենտագոնի ագենտս, պաշտոնապես հայտարարում եմ, որ Հայկունին այն ռեզիդենտն է, որ ղեկավարում է իմ հակասովետական լրտեսական գործունեությունը...

Հայկունին ոտքի թռավ.

— Ե՞ս, այդ դուք իմ մասի՞ն եք ասում, ե՛ս, ե՛ս...— խեղդվում էր նա:

— Դերասանություն մի արեք, այս էլ արդեն քանի տարի ղեկավարում եք ինձ, ինչո՞ւ եք զարմանում...

— Ե՛ս... Ե՛ս... Դուք ինձ զրպարտում եք...

— Դեհ, հիմա, ապացուցեք, որ դուք Պենտագոնի ռեզիդենտը չեք Երևանում...

ԻՐԵՆ ՀԱՐՑՐԵՔ

1966 թվականին Գուրգեն Հայկունին կնքեց իր մահկանացուն: Ովքեր ճանաչում էին նրան, գիտեին նրա գրպարտչական գործունեությունը, ովքեր ակամայից դարձել էին նրա գրպարտչական նյութերի ու նամակների հերոսները և ինչ-որ չափով նրանից տուժածները, թեև հրաշալի ու բարեսիրտ մարդիկ, շնորհավորում էին միմյանց հայոց գրպարտչական խմբի երդվյալներից մեկի մահվան առթիվ: Կյանքում առաջին անգամ տեսա, որ մահից հետո կամ լավ, կամ ոչինչ իմաստությունը Հայկունու հասցեով չի գործում:

Հանգուցյալի դագաղն այս անգամ ինչ-ինչ նկատառումներով չդրվեց գրողների միությունում, այլ՝ Արվեստի աշխատողների տանը: Արդեն մոտենում էր հուղարկավորության ժամը, սակայն հուղարկավորներ չկային: Կուսկենտկոմի քարտուղար Ռոբերտ Խաչատրյանը նկատելիորեն հուզված էր ու բորբոքված, շուտ-շուտ մոտենում էր գրողների միության վարչության քարտուղար Հրաչյա Հովհաննիսյանին.

— Ո՞ւր են գրողները, ինչո՞ւ չեն երևում...

Ի պատասխան Հրաչյան թոթվում էր ուսերը՝ ի՞նչ իմանամ...

Իվերջո, հավաքվեցին չորս-հինգ հոգի, Հայկունու խմբից: Կենտկոմի քարտուղարը ստեպ-ստեպ նայում էր ժամացույցին, ստեպ-ստեպ մոտենում Հր. Հովհաննիսյանին՝ նույն հարցումով և

նույն պատասխանը ստանալով՝ գլխիկոր հեռանում: Զգում էի, որ Հրաչյայի համբերությունն արդեն սպառվում է, և հարցումը եթե կրկնվի, կարող է ջղային պայթյուն տեղի ունենալ: Երևաց նույնիսկ փողային ճվաքպիումը, սակայն այդպես էլ չերևացին հուղարկավորները, այսինքն՝ գրողները: Նորից Ռոբերտ Խաչատրյանը մոտեցավ Հրաչյային.

— Ո՞ւր են գրողները, ինչո՞ւ չեն երևում...

Հրաչյան այլևս չհամբերեց: Զույգ ձեռքերը մեկնեց հանգուցյալի կողմը և բարձրաձայն, որ լսելի դարձավ դատարկ դահլիճում, պոռթկաց.

— Ի՞նչ իմանամ, իրե՛ն հարցրեք...

ԱՇՈՏ ԳՐԱՇԻՆ՝ ՀՌԵՏՈՐ

Կարծեմ 50-ական թվականների կեսերին Աղրբեջանում լայնորեն նշվում էր բանաստեղծ Նասիմի հոբելյանը: Հայաստանը ևս իր պատվիրակությունն ուղարկեց Բաքու, որի կազմում էին Գարեգին Սևունցն ու Աշոտ Գրաշին: Հայաստանի գրողների միության անունից ողջույնի խոսք պետք է ասեր բանաստեղծ Աշոտ Գրաշին: Հոբելյանից վերադարձան մեր ներկայացուցիչները և ո՞վ զարմանալի բան... Նրանց հետևից սկսեց տեղալ նամակների հեղեղ, որոնցում իրենց դրժգոհությունն էին հայտնում և՛ ռուսները, և՛ հայերը, և՛ ազրթուրքերը: Փաստը չէր ենթարկվում

որևէ տրամաբանության: Փորձից գիտեի, որ եթե ինչ որ բանից դժգոհ են, ասենք, հայերը, ադըրբեջանցիները պետք է գոհ լինեն: Կամ՝ հակառակը: Ասեմ, որ այդ տարիներին ես աշխատում էի ՀԿԿ Կենտկոմի կուլտուրայի բաժնում, հետևվաբար նամակ-բողոքները, որ ուղարկվում էին Կենտկոմի հասցեով, կենտրոնանում էին մեր բաժնում: Փաստն անհանգստացրեց Կենտկոմի ղեկավարությանը: Բանն ինչ է: Ինձ հանձնարարվեց ստուգել դժգոհության պատճառները: Կենտկոմ հրավիրվեցին Գ. Սևունցն ու Աշ. Գրաշին: Եվ պարզվեց հետևյալը. հոբելյանին հրավիրված Թուրքիայի պատվիրակության ղեկավարը (եթե չեմ սխալվում՝ թուրքական հանրապետության պրոպագանդայի մինիստրը), որին ձայն են տալիս Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Աժանից անմիջապես հետո, մոտենալով ամբիոնին, դիմում է դահլիճին՝ կանչի կարտաշլար (արյունակից եղբայրներ) բառերով, դահլիճն այնպիսի ցնծություն է ապրում, այնպիսի ծափերով և աղմուկով է ընդունում թուրք պատվիրակի ելույթը, որ ասելու բան չէ: Ազրթուրքերն ասես ինչ որ գերբնական ուժերի կողմից մեկեն խելագարվեցին, փոթորկվեցին և երկար ժամանակ չէին դադարում ծափերն ու ոտքերով դահլիճի հատակը ծեծելը և ամենակուրյոզն այն էր, որ թուրքից հետո ձայնն անմիջապես տրվեց հայերի պատվիրակությանը, որից

նիստի նախագահությունը ամենայն հավանականությամբ սպասում էր հակառակ էֆեկտ, այսինքն, հայի ելույթի տապալումը, խայտառակվելը՝ նկարագրում էին մասնակիցները: Բայց, ինչպես ասում են, Աշոտ Գրաշին իրեն չի կորցնում, մի կողմ է դնում գրավոր ելույթը և բանավոր ելույթով կարողանում ստեղծել խանդավառության, նաև ցասման մի մթնոլորտ, որով ուրախանում և, այո՛, այո՛, նեղանում են բոլորը:

— Հարգելի բարեկամներ,— սկսում է Գրաշին,— ասում են 20-րդ դարի մեծ պոետը Մայակովսկին է: Սուտ է, սո՛ւտ... 16-րդ դարի բանաստեղծ Նասիմին ավելի արդիական է, քան 20-րդ դարի Մայակովսկին...— Հավատացնում է հոետորը: Դահլիճը խանդավառվում է, ռուսական պատվիրակությունը՝ նեղանում:— Ես իմ հայ հայրենակիցներին ասում եմ՝ հայեր, գլուխ խոնարհեցեք Նասիմի շիրմին...— Դահլիճի խանդավառության ջերմաստիճանը բարձրանում է, իսկ հայերինը՝ իջնում: «Ուզում ես գլուխ խոնարհել, խոնարհիր քո գլուխը, հայ ժողովրդի գլուխը ինչո՞ւ ես խոնարհում կիսագրագետ աշուղի շիրմին»,— իրենց նամակներում բողոքում են հայերը:— Եվ, հարգելի բարեկամներ,— շարունակում է ոգևորված Գրաշին,— հայկական իմաստուն առածն ասում է՝ թուրքն անիծված է, բայց խոսքը 'օրհնված...— Եվ հոետորի խոսքը խեղդվում է դահլիճի աղմուկի, սուլոցների, բարձրաձայն հնչող վիրավորանքների, ամենի ժխորի մեջ:

— Կարծում եմ, իմ ելույթը ստացվեց սպասվածից շատ ավելի հաջող, ազդեցիկների ջերմաստիճանն իջավ մինուսի...— ծիծաղում էր Գրաշին:

ԿԱՅՍԻՆ ԿՈՒԼԻԵՎԻ ԵԼՈՒՅԹԸ

1967 թվականին Խորհրդային կայսրության ամբողջ տարածքում նշվում էր Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակը: Տոնակատարության ալիքը Երևանից հասավ Սևանի «Ախթամար» ռեստորանը, որտեղ տրվեց ճոխ բանկետ մասնակիցներին: Բանկետի զարդը ասեմ, թե անհանգստությունը, հանդիսացավ Կայսին Կուլիևի ելույթը: Կայսինը ելույթ ունեցավ բանկետի խորտիկներով և խմիչքներով ծանրաբեռնված սեղանին կանգնած: Հռետորն առանց ձևականության հայտարարեց.

— Հայ բարեկամներ, ես մուսուլմաններից առաջինն եմ, որ հայոց այս սրբազան հողը մտել եմ որպես ոչ ագրեսոր, այլ որպես բարեկամ...

Այս խոսքն, ինչպես ասում են, ընդունվեց ոչ միանշանակ, ամենքը չէ, որ համաձայն էին հռետորին: Ամենից ավելի Կայսինից նեղացան Ադրբեջանի պատվիրակները.

— Հիասկացանք, քո ելույթն ում էր ուղղված, Կայսին... Ինչո՞ւ նման սադրիչ ելույթ ունեցար...

— Շատ էլ լավ հասկացաք, որովհետև ես նկատի ունեի հենց ձեզ,— հետևեց հռետորի շիտակ և անթաքույց պատասխանը:

Ադրբեջանական պատվիրակությունը ցուցադրաբար թողեց բանկետի դահլիճը:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆԵ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՅԻ ՃԱՌԸ

1966 թվական, աշուն: Հայաստանի գրողների միության հինգերորդ համագումարի սմբիոնին է վրաց պատվիրակության ղեկավար, լազվավաստակ գրող Կոնստանտինե Գամսախուրդիան.

— Մեր երկու ժողովուրդները նման են իրար, ինչպես նման են մեր պատմությունները, մեր ճակատագրերը, մեր բնությունները: Նույնն են նաև մեր թշնամիները: Ես հին գեղազանց հրատանավոր եմ: Աստված մի արասցե, եթե մեր հին թշնամին հարձակվի հայոց հողի վրա, ես կբարձրանամ ի պաշտպանություն մեր եղբայրների: Մի՛ վախեցեք, չեմ վրիպի...

Եվ այնուհետև.

— Անդրկովկասում ապրում են երեք ժողովուրդներ՝ հայեր, վրացիներ և... հայեր: Ես կրկնում եմ՝ Անդրկովկասում ապրում են երեք ժողովուրդներ՝ վրացիներ, հայեր և... վրացիներ...

Նրա այս խոսքից հետո, ինչպես սպասվում էր, ադրբեջանցիները թողնում են համագումարի դահլիճը:

ԱՄԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԳՈՎՈՒՄ Է ԻՐ ՉՈՒՆԵՑԱԾԸ

Իմ դիմաց նստել է սրախոս և սրամիտ վրացի պոետների խումբը: Մեկը կիսաձայն արտասանում է Իլյա Ճավճավաձեի գործերից, մյուսները ռիթմիկ օրորում են իրենց գլուխները, մերթ ընդ մերթ պոռթկացող հիացմունքով ընդմիջելով արտասանողի միալար ձայնը: Ես մի քիչ հասկանում եմ վրացերեն: Նրանց խանդավառությունն ինձ հասկանալի է: Վրաց դասականներից գուցե և ոչ մեկը այնքան սիրված չէ վրաց մըտավորականության կողմից, որքան Իլյա Ճավճավաձեն, քանզի նրա գործերում առավել արթուն է վրացական ոգին և վրաց ազգային կենսափիլիսոփայությունը: Գնալով ջերմանում է նրանց խոսք ու զրույցը: Իմ լսելիքն սկսում է ճանկռտել վրաց ժողովրդի բացառիկության հանգերգը. «Մեր լեզուն աստծո նվերն է աշխարհին... Պատահական չէ, որ հրեշտակները խոսում են վրացերեն...»: Չէ, այլևս անհնար է լսել նման շաղակրատանք:

— Պատիվցեմուլի մեգոբրեբո (Հարգելի բարեկամներ), եկեք մի քիչ էլ հայերենը գովենք,— ծիծաղում եմ ես,— ճիշտ է, հրեշտակները մեր լեզվով չեն խոսում, բայց մենք հո խոսում ենք...

— Իսկ ձեր ի՞նչը գովենք, վրացերենն արդեն գովել ենք,— ասում է նրանցից մեկը:— Լավ կլինի դուք էլ վկայակոչեք աստծո նոմենկլատուրայի մեջ մտնող փաստեր, որ միասին գովենք...

— Ա՛յ, մեզանում ասում են,— խոսում եմ ես,— որ աստվածային դրախտը Հայաստանում է, նույնիսկ ցույց են տալիս ենթադրյալ վայրը:

Կարճ լռություն է տիրում: Հետո լսվում է զսպված փոթկոց, հետո իմ բարեկամների դեմքերին կարդում եմ քմծիծաղի նստվածքներ: Մի խոսքով, վիրավորեցին: Ինձ սկսում է չարչարել չարության արթնությունը:

— Հը՞, ինչ կասեք, բարեկամներ, Հայաստանը դրախտավայր չէ՞...

— Եկեք Հայաստանը գովենք որքան ցանկանում եք, ասենք ամենալավ խոսքերը նրա հասցեին, սակայն ճիշտ չի լինի քարերի երկիրը դրախտ կոչել:

Վերստին մերժվեց մեր բազմաչարչար «հայկական հարցը»:

— Ի՞նչ ասեմ, բարեկամներ,— խոսում եմ ես,— ամեն ժողովուրդ գովում է իր չունեցածը, ցանկանում է իրականացած տեսնել իր երազանքը: Վրացին՝ իր լեզուն, հայը՝ հող հայրենին...

Հասկացան: Եվ ամբողջ երեկոյի ընթացքում լուռ էին: Դժվար է ասել՝ նեղացել, թե ամաչում էին: Երանի՞ ամաչեին...

ՍՈՒՏԸ ԲՌՆՎԵՑ

Լադո Սուլաքերիձեն լավ բանաստեղծ է: Նա Սևանին նվիրված բանաստեղծական շարք ունի, որը և նրա տաղանդի վկայությունն է, և մեր ընկատմամբ հարգանքի ու սիրո արտահայտությունը: Ծանոթացանք թումանյանական օրերին՝ Ալավերդում: Ես ու նա ապրում էինք հյուրանոցի նույն համարում: Երեկոյան գինարբուքից հետո (մի քիչ չափազանցնում եմ), մենք երկար խոսում էինք մեր ժողովուրդների բախտից ու ճակատագրից, պատմական ճանապարհների նմանությունից և այլն և այլն: Ես նրան ցանկացա հաճելի անակնկալ մատուցել և ասացի.

— Դու գիտես, որ մենք գտնվում ենք հայազգի Զաքարյան սպասալարների նստավայրում...

— Իսկ ովքե՞ր են Զաքարյան սպասալները,— անգիտացավ նա ի զարմանս ինձ:

— Ինչպե՞ս թե,— ասացի,— մի՞թե քեզ հայտնի չեն Մխարգրձելիները՝ Թամարա թագուհու սպարապետները՝ Զաքարե և Իվանե սպասալարները: Նրանց գործունեության մասին հիանալի տեղեկություն են տալիս ձեր «Քարթլիս ցխովրեբան» («Վրաստանի պատմություն») մատյանը և հայ մատենագիրները:

— Ներիր ինձ, բարեկամ, սակայն նման փաստի ես «Քարթլիս ցխովրեբայում» չեմ կարդացել...

— Դու էլ ինձ ներիր, եթե ասեմ, կամ դու, իրոք, չես կարդացել այդ մատյանը կամ ես եմ հնարել աշխարհին հայտնի այդ փաստը...

Լադոն չպատասխանեց, ես էլ այլևս չխոսեցի այդ մասին: Բայց զգում էի, որ նա ստում է, որ չկա որևէ գրագետ կամ կիսագրագետ վրացի, որ չիմանա վրաց մեծ թագուհու զորավար Զաքարեին և նրա եղբորը՝ Իվանեին: Զգիտեմ ինչու, այդ պահին Լադոն նեղացած մարդու տեսք ուներ, չեմ կասկածում, որ նման տեսք կունենա՝ նաև ես: «Ինչպե՞ս բռնել սրա սուտը, ինչպե՞ս...»,— մտմտում էի ես և հանկարծ լուսավորվեց միտքս.

— Իմիջիայլոց, մեր պատմության մեջ կա մի վարկած, թե՝ Զաքարյանները ծագումով քրդեր են...— հարցում չէր, ես խոսում էի հենց այնպես:

Ռեակցիան չուշացավ.

— Ճիշտ է, շատ ճիշտ է, չեմո մեգոբարե (իմ բարեկամ), իհարկե, նրանք քրդեր են...— ասաց և արգելակեց խոսքը: Խայծը կլլեց: «Բռնվեցիր... Այո՛, բռնվեցիր, չեմո մեգոբարե»,— ասացի մըտքումս և ապա բարձրաձայն.

— Ուրեմն, միայն թե հայեր չլինեն... Բա եղավ, Լադո, ախր, դու ասացիր, որ քնավ չես լսել Զաքարյանների մասին, բայց նրանց ազգությունը փոխելուն պես ճանաչեցիր...

Եվ լռեցի: Լուռ էր և նա: Հաջորդ օրը խոսում էինք, սակայն խոովածների նման, առանց իրար նայելու: Մեր հայացքներն ամաչում էին...

ԲԱՔՎԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ՌԵՍՏՈՐԱՆՈՒՄ

1961 թվականի աշունն է, ձմեռնամուտ: Հայ գրողների և արվեստագետների մեր խումբը վերադառնում է Տաշքենդից: Ուզբեկստանում հայկական արվեստի ու գրականության տասնօրյակն ընթանում էր մեծ հաջողությամբ. խանդավառ մտերմությամբ հրաժեշտ տվինք միմյանց՝ հյուրընկալվողներս և հյուրընկալողները: Օդանավը պտույտ է կատարում Բաքվի երկնքում և գնում վայրէջքի: Կարճատև կանգառից հետո կշարունակենք թռիչքը դեպի Երևան: Բայց մեզ դիմավորողներ կան: Ադրբեջանցի մեր գրչակիցները ջերմորեն հանդիպում են մեզ: Նրանք եկել են այեզարդ, ինչպես իրենք են ասում, Ադրբեջանի ամենաինտերնացիոնալիստ բանաստեղծի, Սուլեյման Ռուստամի ղեկավարությամբ, փակել օդանավակայանի ռեստորանը, սեղաններն ամբողջ սպասքավորել, զարդարել խմիչքներով ու խորտիկներով և սպասում են հայ հյուրերին: Սկսվեց եղբայրական ճառերով և կենացներով համեմված մի խնջույք, որը տևեց երևի երեքչորս ժամ, սկսվեց սիրով և վերջացավ կռվով ու աղմուկով: Ո՛չ, ո՛չ, կռիվը մեզ հետ չէր, այլ... Բայց չշտապենք, պատմենք հերթով:

Սեղանը պաշտոնապես թամադա չունի, թամադան մեր հյուրընկալն էր, Սուլեյման Ռուստամը, որ խիստ սրտառուչ ճառ է արտասանում հայ

և ադրբեջանցի ժողովուրդների դարավոր բարեկամության մասին, այնքան սրտառուչ ու հոգեցունց, որ արցունքոտվում են աչքերը: Մեր պատվիրակության ղեկավար Էդուարդ Թոփչյանը Վրույր Բալասանին ասում է, որ բաժակ բարձրացնի ադրբեջանական ժողովրդի կենացը.

— Հարգելի բարեկամներ,— ասում է նա,— ես բաժակ եմ բարձրացնում թուրք ժողովրդի և թուրքական գրականության կենացը...

Ծափահարում են: Սակայն ծափերի մեջ անգամ լսելի է դառնում ոչ հեռվում նստած Էդ. Թոփչյանի տագնապալից ձայնը.

— Այդ ինչ արիր, այ տղա, ի՞նչ թուրք, ի՞նչ բան...

Պարույր Սևակի կողքին նստել է նրա մոսկովյան, Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի դասընկերը, որի անունը չեմ հիշում: Նա հասկանում է հայերեն և առանց ձևականության շրջվում դեպի Էդուարդ Թոփչյանը.

— Միանգամայն ճիշտ է հոռետորը, ընկեր Թոփչյան, մենք թուրքեր ենք, իսկական արյունով ու պատմությամբ...

Իսկ ծափերը շարունակվում են: Տանտերերը հուզված են, շոյված, նրանց է վերադարձվում իրենց իսկական անունը: Մինչ այդ պահը ամեն ինչ ընթանում էր պատշաճության սահմաններում, խաղաղ ու հանգիստ, փոխադարձ սիրալիրություններով: Սակայն Վրույր Բալասանը շարունակում է.

— Ես ցանկանում եմ, որ չմոռանանք այս հողի ամենամեծ բանաստեղծ Սամեդ Վուրղունին և այստեղ գտնվող նրա ամենանշանավոր, տաղանդավոր աշակերտներից մեկին...

Նրա խոսքը կիսատ է մնում: Սուլեյման Ռուստամը չի համբերում.

— Ո՞վ է մեզանից նրա աշակերտը...

— Դուք եք, սիրելի Սուլեյման Ռուստամ, մեր տաղանդավոր, անկաշառ բարեկամ...

— Ո՛չ, ո՛չ, ես նրա աշակերտը չեմ, ես նրա բարեկամը չեմ,— թնդում է զայրացած բանաստեղծը, ապա զայրույթով քաշում է սեղանի սրփոցը, շրջում նրա վրայի պարունակությունը,— ինչպես ես կարող եմ լինել այդ նացիոնալիստի, այդ ֆաշիստի աշակերտը: Նրա կենացը դուք խմելու իրավունք չունեք, նա ձեզ՝ հայերիդ ատում էր, նա կխմեր ձեր արյունը, եթե այդ հընարավորությունն ունենար...

Ռուստամը դիվահարի, խելագարի տեսք ունի: Նրա վիճակը փոխանցվում է իր թուրք գործընկերներին, որոնց մեջ, երևում է, մեծ թիվ են կազմում Սամեդ Վուրղունի երկրպագուները: Ծրջվում են սեղանները, իմ կողքը նստած «եղբայրները» կրճտացնում են ատամները, զրնգում են փշրված բաժակներն ու ափսեները: Մի խուսքով, սոդոմ-գոմոր: Փոխադարձ վիրավորանքներն ուղեկցվում են հայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Պարզվում է, որ մեր հյուրընկալները, որոնք գեղգեղում էին եղբայրական երդումներ, ոչ ավելի, ոչ պակաս, մեր երդվյալ թշնամիներն են, որ, չգիտես ինչու, հյուրասիրելու էին գալիս և, իրոք, լավ հյուրասիրեցին, առաջինը՝ խորտիկներով ու խմիչքներով, երկրորդը՝ ճոճուան ճառերով և երրորդը՝ բացահայտված թշնամությամբ:

Ներկարացնենք, քաղցր խոսքերի հետ, օձի լեղի մատուցող ազրթուրքերից կտրվելով, մենք քայլում ենք դեպի օդանավը: Այս անգամ էլ տեղի է ունենում մեկ ուրիշ, ավելի վտանգավոր երևույթ: Երևանի վրա օդանավը կորցնում է ղեկավարությունը, շասսիները չեն բացվում: Այդ մասին մենք ստույգ իմանում ենք հետո, երբ ինքնաթիռը կարողանում է իվերջո վայրէջք կատարել: Իսկ մինչ այդ օդում մենք հանկարծ հայտնվում ենք Արարատ լեռան հետևում, այսինքն, ինչ որ սատանայական հնարքով անցնում ենք նրա հարավային մասը: Իսկ քիչ անց Սաղաթել Հարությունյանը, չգիտեմ տագնապով, թե հիացմունքով, բացականչում է.

— Նայեցեք, ներքևում Վանա լիճն է...

Իսկ ներքևում, իրոք, Վանա լիճն է: Սկզբում ոչ ոք չի հավատում: Ամբողջ Հայաստանը (ներառյալ նաև Արևմտյանը) արևի տակ շողշողում է սպիտակ ձյան մեջ կոլոլված և նրա մեջ մուգ կապույտ լաջվարդ գույնով ծփում է, այո, մեր Վանա ծովակը: Հետո լավում է մի ծանր թխկոց, երևի բացվում են շասսիները և ինքնաթիռն

ասես քսվելով Արարատին, վայրէջք է կատարում:

Միայն օդանավակայանից դեպի ավտոմեքենաները քայլելիս, Թոփչյանի կնոջ, տիկին Գոհարի ձիչը լսելով, տեղեկանում ենք նաև նրա արդեն ուշացած վախի պատճառի մասին: Պարզվում է, որ օդանավի հրամանատարը մոտեցել է մեր պատվիրակության ղեկավարին և շնորհավորել մեզ՝ փրկության համար, որը լսել է տիկին Գոհարը և վախից ճչացել...

Երևանի բոլոր փորձությունները նման բարեհաջող վախճան ունենային և հայրենաբաղձ հայերը գոնե վերևից, գոնե կարճ միջոցով տեսնեին... Էրգիրը...

ԵՐԿՈՒ ՕՐ ՄԱՄԵԴ ՌԱՀԻՄԻ ՀԵՏ

1972 թվականին եկել էր Երևան և ցանկանում էր անպայման լինել Հովհ. Թումանյանի ծննդավայրում, որի ստեղծագործությունների թարգմանիչն էր ազգությունքներեն: Իմանալով, որ նա Թումանյանի և Իսահակյանի թարգմանիչն է, մեղքս ինչ թաքցնեմ, հարգանքով լցվեցի նրա հանդեպ: Գրողների միության առաջին քարտուղար Էդուարդ Թոփչյանի հարցին, թե կցանկանա՞յի ուղեկցել Մամեդ Ռահիմին և տիկնոջը, ես առանց տատանվելու համաձայնվեցի: Գնացինք նախ Ալավերդի, ինչպես ասում են, մի գեղեցիկ օր անցկացրինք այնտեղ և հաջորդ առավոտյան ուղևորվեցինք Դսեղ, շրջանի քարտուղարներից մեկի ուղեկցությամբ: Մեր հյուրը ոգևորված էր, ամբողջ ճանապարհին արտասանում էր Հովհ. Թումանյանի և իր բանաստեղծությունները, որ ես կարողանում էի թուրքերենի իմ վատ իմացությամբ՝ հասկանալ: Դսեղի կենտրոնում, տեսնելով Հովհ. Թումանյանի հուշարձանը, Ռահիմը թռավ պատվանդանին և սկսեց արտասանել «Հին օրհնությունը»: Գյուղացիները ծափահարում էին, իսկ նա արտասանում էր ու արտասանում իր թարգմանությունները մեծ բանաստեղծից: Հիանալի հանդիպում կայացավ միջնակարգ դպրոցի դահլիճում, ուր ծաղիկներ ու նվերներ, համեմված ջերմ խոսքերով, մատուցվեցին Ռահիմին: Այնուհետև նստեցինք քեֆի ճոխ սեղանին և մտերմության և հանդիսավորության տաք մթնոլորտում շարունակեցինք մեր ուրախությունը: Ահա այստեղ կատարվեց մի բան, որի էությունը ես դժվարանում եմ պարզաբանել: Կողքիս նստած Ռահիմը հանկարծ թեքվում է իմ կողմը և փսփսալով խոսում ականջիս.

— Ցոլդաշ Մկրտիչ, ինչո՞վ ես բացատրում այն փաստը, որ ռուս եղբայրները մեզանով ավելի շատ են զբաղվում, քան ձեզանով, հայերով...

Սկզբում հարցի էությունը չհասավ ինձ: Հետո հանկարծ անդրադարձա, արթնացա. ի՞նչ էր ուզում ասել մեր ազգությունք «եղբայրը»: Խնդրեցի, որ նորից կրկնի հարցը: Կրկնեց:

— Մապլում (ուսուցիչ— այդպես էին դիմում Մամեդ Ռահիմին), դուք ունեք տասնչորս զավակ, որոնցից մի քանիսը ծնողասեր, նվիրված ու կանոնավոր որդիներ են, իսկ մի քանիսն էլ ավազակ, խուլիգան, գող ու մարդասպան են, դուք ումով ավելի շատ կզբաղվեիք...

— Իհարկե, նրանցով, ովքեր գող են ու ավազակ, խուլիգան ու մարդասպան...— ասաց Ռահիմը, հարցական նայելով ինձ: Ես, առանց խնայելու իմ հյուրին, պատասխանեցի.

— Նրանք էլ նույնն են անում իրենց անառակ որդիների նկատմամբ...

Լռեց: Հետո հասկացավ ու բռնեց գլուխը.

— Դու սպանեցի՛ր ինձ, սպանեցի՛ր...

Եվ մինչ Երևան ոչ խոսեց, ոչ արտասանեց...

ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Հայաստանի խորհրդայնացման 40-ամյակի առիթով Գրողների միության ղեկավարությունը կազմել էր ստեղծագործական բրիգադներ, որոնք հանրապետության շրջաններում հանդիպում էին աշխատավորության հետ :Ահա այդպիսի մի խմբի ղեկավարն էի ես, որ 1960 թվականի ամռանը Եղեգնաձորում մի շարք հանդիպումներ ունեցավ, եղավ համարյա բոլոր գյուղերում, որ քիչ բան չի տալիս գրողներին, հայրենի երկիրը իմանալու և

նրա ժողովրդի հոգսերն ու կյանքը ճանաչելու համար:

Բայց իմ պատմությունը վերաբերում է Եղեգնաձոր գնալու ճանապարհին կատարված մի դեպքի, որը ունեցավ փոքրիկ դրամատիզմի հետ, ոչ այնքան կոմեդիկ վախճան: Գնում էինք ավտոբուսով, որի վարորդը գյումրեցի, բավական խոսքաշեն, խոշոր, նաև խոժոռ անձնավորություն էր: Արենի գյուղից քիչ անցած Արփա գետի աջ ափին երևացին առվույտի ծաղկած արտեր, որոնց տեսքը խիստ ոգևորեց գրականագետ մեր ընկերոջը՝ Ն. Մ.-ին: Նա նստած էր վարորդի ետևի նստարանին, հետևապես նրա խոսք ու զրույցը ամենայն նրբերանգներով հասնում էր վարորդի լսելիքին:

— Ա՜խ, տղաներ,— իրեն հատուկ հումորով խոսեց Ն.-ը,— երանի մարդ էշ լիներ և ճաշակեր այդ առվույտը...

Չէինք հասցրել մի կարգին ծիծաղել սիրելի մարդու այդ տարօրինակ ցանկության վրա, երբ սաստիկ մի ճռնչոցով արգելակվեց մեքենան և կանգ առավ: Զմոռանամ ասել, որ Ն. Մ.-ի, ինչպես և մյուս տղաների կատարները տաք էին, օդին տաքացրել էր նրանց: Վարորդը շրջվեց, արհամարհանքով նայեց Ն.-ին.

— Գոնե շլյապեդ ամնչե, իշիր, մաշինից իշիր, ես էշ տանել չեմ կրնա, էդիկ ընձի համար մենձ անպատվություն է, իշի՛ր...

— Մարդը կատակ է անում, դու ինչո՞ւ ես խառնվում...

— Էշ դառնալու ցանկությունը հանաքի բան չէ, ասեք թող իջնի...

— Ընկեր վարորդ, մեքենայովդ զբաղվիր, իսկ մեր ընկերը տոմս է վերցրել մինչև Եղեգնաձոր, այս ամայի ձորում տարիքով մարդուն թողնել մենք չենք կարող...

— Եթե չիջնի, ես շարժվողը չեմ, դուք լենինականցի Դև Գևորգին չիդեք, խոսքս օրենքի ուժ ունի, լավ իմացեք...

Ես ջղայնացա, հատել էր նաև տղաների համբերությունը և իմ նշանով նրանք մոտեցան մեքենայի առաջամասին՝ Նանսեն Միքայելյանը, Լյուդվիգ Դուրյանը, հայրենադարձ Ժոզեֆ (Վահրամ) Հաճյանը:

— Լսիր, Դև Գևորգ, թե Սատանա Գևորգ, չը-գիտեմ, եթե հենց հիմա մեքենան չշարժվի դեպի Եղեգնաձոր, տեսնում ես, մենք վեց հոգի ենք, քեզնից Բայազետի քյուֆթա կսարքենք...

Իմ տոնը խիստ էր, կատեգորիկ, մի խոսքով՝ կովի հրավեր.

— Ամա՜ն,— հանկարծ ճչաց Ն-ի կողքին նստած տարիքով գեղջկուհին,— կոիվ են անելու, էս տղերքը հարբած են...

— Էդ խոսքը տղամարդու խոսք էր, գնացի՜ք...— արագ վերակառուցվեց վարորդը: Մեքենան շարժվեց...

ԵՂՆԻԿԻ ՁԱԳԸ

Ամբողջ օրն անցկացրել էինք Գանձասարում: Տղաները վանքի մոտ, անտառափեշին խարույկ էին արել, համովացնում էին խորովածը, իսկ աղբյուրի մոտ սառեցրել էին Գիշու գինին ու Արցախի հռչակավոր թթի օղին: Մինչև ուշ գիշեր նստած սուփրայի առջև ծանր ու թեթև էինք անում այս հայ աշխարհի վիճակը, զմայլվում նրա վիպական գեղեցկությամբ: Եվ երբ կիսվել էր գիշերը, վեր կացանք: Լուսնկա էր: Ճանապարհը ժապավենի նման քանդվում ու բացվում էր մեր առջև: Ճանապարհի մի կողմից ընկերակցում էր անտառը, մյուս կողմից՝ Խաչեն գետը: Այնպիսի տիեզերական խաղաղություն էր, որ ձայները լսվում էին նույնիսկ անծանոթ մանրամասներով: Անտառի խշշոցը սովորական էր, տնքոցը՝ անսովոր: Ջորում խեղդվող գետի հառաչանքը ու զայրույթը սովորական էին, դեպի երկինք նետվող անեծքի ճիչը՝ տակավին անսովոր: Ճանապարհի վայրիվերումներն այնքան էին թոիչքաձև, որ լիաուսինը մերթ մեր գլխավերևում էր, մերթ ընկնում էր ձորը և քիչ էր մնում վթարի ենթարկվեր մեքենայի անիվների տակ: Անիրական գեղեցկություն էր.

— Այս ի՞նչ ձեռք է արարել այս աշխարհը...

— Աստծո...

— Իսկ Գանձասա՞րը...

— Հայի, Աստվածն ու Հայը դաշնակցել են և այդ դաշնությունից ծնվել է Արցախը:

— Եղնիկի ձագը...— Վարորդն էր:

Ծանապարհի մեջտեղն արձանացել էր եղնիկի ձագը և մեքենայի լույսը արագորեն մոտենում էր նրան: Սակայն լույսը չէր վախեցնում նրան: Երևում էր, որ վախենալու ավելի մեծ պատճառ ուներ:

— Կորցրել է մորը և վախենում է գայլերից,— բանաձևեց Համո Սահյանը:

Մեքենան ընդհուպ մոտեցավ նրան: Բացեցի դռնակը և եղնիկի ձագն ուղղակի նետվեց մեքենայի մեջ և ընկավ գիրկս: Մնացածը մեր սիրո ցուցադրությունն էր եղնիկի նկատմամբ: Գրկում, գգվում և համբուրում էինք ձագին: Մորթին թրթռում էր, դողդողում: Վախենում էր երևի: Զգում էի նրա սրտիկի հաճախացած զարկերը: Դնչիկը կաթնահոտ էր, ականջները՝ խլշած, մի խոսքով, եղնիկի ձագը լրացրեց արցախյան աշխարհի գեղեցկությունը: Իսկ մինչ այդ մեզ հասան նաև մյուս մեքենաները: Բագրատ Ուլուբաբյանը մոտեցավ մեր մեքենային.

— Էդ ի՞նչ բանի եք...

— Դու եղնիկի ձագին նայիր, Բագրա՛տ...

— Եղնիկի ձա՞գ, միթե...

Բագրատն անխոս զննում էր եղնիկի ձագին: Հետո շրջվեց մեր կողմը.

— Ձեր եղնիկի ձագը, բարեկամներ, էշի ձագ է...

Բագրատն իրավացի էր...

ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ

Զապաև Մարկոսյանը կոմկուսի շրջկոմի առաջին քարտուղարն է: Կատակասեր է, ուր Զապաև Մարկոսյանն է, ծիծաղն ու ուրախությունը ինքնին հետամուտ են նրան: Այսինքն, ինքը հուսկված չէ զվարճախոսության, նա լրջագույն մի անձ է մինչև բերանը բանալը: Խոսելուն պես պաշտոնը ասես լքում է նրան, և մնում են խոսքն ու զրույցը և պաշտոնաթող լրջությունը: Նա իջնում է մեքենայից, մոտենում մի խումբ մարդկանց, որ եկեղեցու պատի տակ կանգնած խոսում են, վիճում: Զապաևը քաղաքավարությամբ ողջունում է նրանց իր մաքուր հայերենով.

— Բարև ձեզ, իմա՞լ եք, ախպեր տղերք...

Հարգալից առնում են քարտուղարի բարևը.

— Իմալ պիտի էղնինք, քարտուղար ջան, գիշեր չենք քներ, եկեր ենք Հայկոոպի խանութ, որ մի շիշ արաղ առնենք, խմենք, որ աշխատելու ուժ ունենանք. կասեն՝ մաշինեն ճամփին է, կվախանանք շան տղան, Ցախշիբեկը արաղը տեղ չհասցնի...

Զապաև Մարկոսյանը շանթահարվում է.

— Իմալ կեղնի, տեղ չհասցնի, սիմբիրական կանեմ, կքշեմ Կոշի գաղութ: Այ տղա Սարիբե՛կ, գնա միլիցիոն Բախշիբեկին ըսա, որ ես հրամանի կարգով, հրամայում եմ՝ թող մատացիկլետը ընտի ու քշա Սևան, Ցախշիբեկ շանորդում ու արաղը բերման ենթարկա, որ կարողանամ էս

ծանոր սրջանը լենինյան կերպով ղեկավարեմ... Բերանս չորցեր ա, ցամաք ընկած ձկան նման, ադա Վռամբեկ, ծոցդ ուռած ա, միջինն ի՞նչ ա...

— Տնական, սարթ արաղ ա, ընկեր Զապան, խմելը վտանգավոր ա, խմողը թե էսօր չմեռնի, էգուց մեռնելը կա ու կա...

— Տո՛, շանորդի, թույնը ծոցդ դրեր ման կուգաս, որ մարդ սպանես, հլա դու խմա, խմա, տեսնամ թե չես մեռնի, ես էլ բերանս թրջեմ... Թե չէ չոր բերանով իմալ պրոպագանդ էնեմ... Փչացնեմ մարքսիզմ-լենինիզմը, որ սրջվեն ու ինձ էլ փչացնեն... Գործս մարդու գործ չէ, շան գործ է, առավոտ-իրիկուն հաչելով ման էկ, ման էկ, ոչ արաղ, ոչ կայնակ, չէ՛ Հայկոդպը պիտի քանդեմ և նորից սարքեմ, որ գոնե խմիչքն անպակաս լինի ու սրջանս տնտեսական պլանները կատարելու ստիմուլն ունենա...

— Ապրի արնդ, ընկեր Մարկոսյան, որ կասեի, թե՝ Մարկոսյանի ղեկավարությամբ, էդ ի՞նչ էր էդ անտերի անունը, հա կոմունիզմին կհասնենք, չէիք հավտա, հիմա պարզ է, որ կոմունիզմը՝ քո ղեկավարությամբն էդ շոֆերը Ցախշիբեկն էս ա, հա՛, տեղ կհասցնի...

— Այ տղա, Վարդիբեկ, խելքդ տվերիս արաղին ու հակա բաներ կխոսես, կոմունիզմը բերելը Ցախշիբեկի բանը չէ, ուժը չի պատի, էն աշխարհով ենք բերելու...

— Ախպեր, մեռնիմ քե, ուր արաղ, էնտեղ էլ կոմունիզմ...

ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅՈՒՄ

Քննարկվում է Գեղարքունիքի շրջանի հարցը: 1952 թվականն է: Ցրչկոմի հաշվետությունը շրջվում է առաջին քարտուղարի՝ Զապան Մարկոսյանի դեմ: Ելույթ ունեցողները խստորեն քննադատում են նրան, աշխատանքները չկազմակերպելու, շրջանի կուսակցական կազմակերպությունը գլխավորելու նրա անկարողությունը և, իվերջո, հարբեցողության հակվածությունը, որոնց պատճառով շրջանը կանգնել է կոտրած տաշտակի առջև: Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը զայրացած հարց է տալիս Զապան Մարկոսյանին.

— Պատմիր քո հարբեցողության, քո արարքների մասին, թող բոլորը լսեն...

— Տո, իմալ պատմեմ, մեռնիմ քե, Գրիգոր Արտեմիչ ջան, էդ խմելն գիտես ինչո՞ւ համար է, որպես դեղ կխմեմ, էնքան խմա, որ հարբեցող դարձա, մրեն էլա, ընկա մրջուրը... Մեղավոր եմ, ընկեր Գրիգոր Արտեմիչ ջան, մեղավոր եմ, պատժի ինձի, դատիարակի ինձի, բայց գործից մի խանա, ինձի կարդարացնեմ...

— Էս ասացի գործից, այսինքն, քո հարբեցողությունից խոսիր, ինչո՞ւ ես խմում...

— Էդ էի ասում: Ինձի, որ առաջքաշման համար կանչեցին Կենտկոմ, ես հայկինոյի պահեստապետ կաշխատեի և սրտի հիվանդությունս ուներ, սիրտս կցավար: Կվախենայի, սրջանիս տնձեի, սիրտս կցավար: Կվախենայի, սրջանիս տնձ-

ղը բարձր էր, կնիկս ըսավ, Զապան, քու ու մեր ժամանակը եկեր է, համաձայնվի, թե էնտեղ սիրտդ ցավա, այ մարդ, արաղի, կայնակի նման դեղեր կան, կխմես ցավը կանցնի, կերթա... Համաձայնվա, գացի սրջան: Հիմի ձեզի չըսեմ, ում ըսեմ. մե ստաքան արաղը, որ կխմեմ, ցավուծ սիրտս տուկ-տուկ կզարկա, կաշխատա: Երկրորդ ստաքան արաղը, որ կխմեմ, ոնց որ սիրտ չունենամ, տո՛, որ երրորդը կքաշեմ գլխիս ձե չըսեմ, ում ըսեմ, ո՛չ սիրտ ունեմ, ո՛չ խելք... Սաղը օղին հափ-լափ կանե...

* * *

Շրջկոմի քարտուղար Զապան Մարկոսյանը մտնում է շրջկոմի աշխատակից-հրահանգիչ Ադիբեկի աշխատասենյակը.

— Ադիբեկ, ինչա՞ կանես...

— Պրայեկտ եմ գրում, ընկեր Մարկոսյան...

— Գրա՛ գրա՛, ախշատա՛, ախշատանք կապկին մարդ ա դարձրե...— Սրամտում է Զապանը:

ՀԱՇՎԱՊԱՀ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Առանձնասենյակ մտնելուն պես, իմ հետևից ներս մտավ երևի հիսունին մոտ մի անձնավորություն: Եկավ ու անխոս նստեց իմ դիմաց:

— Ձեզ մոտ եմ եկել,— ասացի:

— Լսում եմ ձեզ,— ասացի պատրաստակամ:

— Անմիջապես ասեմ ինչո՞ւ... Բանաստեղծություն եմ բերել տպագրելու... Ճիշտն ասած, ես բանաստեղծություն սկսել եմ գրել միայն վերջերս, մասնագիտությամբ հաշվապահ եմ: Սակայն մի քանի ամիս առաջ ավտովթարից կոտրվեց ձախ կոնքս և ձեռքս: Այդ դեռ ոչինչ... Հաշվապահի գործը հեշտ չէ... Պարզվեց, որ մոռացկոտ եմ դարձել: Դուրս եկա աշխատանքից և թոշակավորվեցի: Թոշակով տուն, ընտանիք չես պահի: Հասկացա, որ առանց լրացուցիչ միջոցների լոլա գնալ չի լինի: Եվ սկսեցի որոնել հեշտ աշխատանք: Եվ գտա, բանաստեղծությունը: Հեշտ և հաճելի աշխատանք է:

— Այո՛,— ծոր տվի ես,— հեշտ և եկամտաբեր: Հաշվապահի համար, որ խաղում է հազարավոր, միլիոնավոր ռուբլիների հետ, բանաստեղծություն հորինելը մի բաժակ ջուր խմելու պես բան է...

Ուշադիր նայում էր ինձ: Մտածեցի, որ հեգնանքը տեղ կհասնի: Բայց ոչ, նման բան տեղի չունեցավ: Ընդհակառակը.

— Ուրախ եմ, որ դուք էլ նույն կարծիքին

եք... Մանավանդ, որ բանաստեղծությունը վարձատրվում է տողով: Ինչքան երկար է բանաստեղծությունը, այնքան շատ է տողավճարը...

— Միանգամայն ճիշտ է,— ասացի,— գուցե ձեր բանաստեղծություններից մի բան կընթերցեք...

— Խնդրեմ,— ասաց և ծոցագրպանից հանեց ձեռագիրը,— իմ կարծիքով լավ է ստացվել «Զանգվի ձորը» բանաստեղծությունը...

Այն Զանգվի ձորն է, ուր հանդիպակաց,
Ժայռերը խորունկ, նոթերը կիտած...

Ու հոսեց Հովհ. Թումանյանի «Լոռեցի Սաքոն» պոեմի Լոռվա ձորի ողջ նկարագրությունն առանց ստորակետի փոփոխության:

— Դուք, որ հյուսում էիք այդ բանաստեղծությունը, գլխի չընկա՞ք, որ կրկնում եք Թումանյանին...

Զարմացած նայեց ինձ.

— Բայց նա գրել է Լոռվա ձորի մասին, իմը՝ Զանգվի ձորի մասին է...

— Իսկապես որ,— խոսեցի ես,— ես խառնեցի ձորերը: Մենք ձորերի մասին բանաստեղծություններ չենք տպագրի, որովհետև նոր ենք տպարգել Գառնո ձորի մասին մեկ ուրիշ բանաստեղծություն... Ես հիմա կվարձատրեմ բանաստեղծության համար, բայց, միաժամանակ, խնդրում եմ այլևս ձորերով չզբաղվել...

Հետո կանչեցի հաշվապահին.

— Խնդրում եմ այս ընկերոջը որպես սկսնակ բանաստեղծի, օգնություն դուրս գրել հիսուն ռուբլի...

Զրուցակցիս դեմքը մթնեց.

— Ընդամենը հիսուն ռուբլի՞, ախր իմ «Զանգեզվի ձորը» բանաստեղծությունն ավելին արժե և երկար է նաև...

ԷԼ ՈՒՐԻԾ ԽՈՒԼԻԳԱՆ ՉԳՏԱ՞Ր

Աղ. Նալբանդյան: Զարմանալի ազնիվ ու միամիտ անձնավորություն է: Այս հատկանիշները գրված են նրա դեմքին ու կեցվածքում: Մեծ ճանապարհ անցած գիտնական է ու մարդ: Ծընունդով Կարսից է, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շրջանավարտներից է: Աշխարհագրական գիտությունների թեկնածու, Խաչ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ամբիոնի վարիչ: Ակտիվ քաղաքացի է: Չի կարող տանել վատ մարդկանց, հակահասարակական արարքներ և միշամտում է հաճախ ընկնելով անհարմար վիճակների մեջ: Եվ պատճառը նրա ակտիվ ռեակցիան է չարագործի, կարգազանցի նկատմամբ և արարքը դրսևորելու միամիտ, մի տեսակ ամաչկոտ, վարանոտ կեցվածքը, որը կարգազանցների կողմից արժանանում է.— Էս հարիֆն ո՞վ է... գնահատականին:

Ինքն է պատմում.

— Գնում էի ինստիտուտ, ճանապարհին, փողոցի մայթին, միլիցիոները բռնել էր մի երիտասարդի և ամենաանպատշաճ ձևով անպատվում և հայհոյում էր նրան: Այո, եթե երիտասարդը կարգազանց էր, ապա միլիցիոները թույլ էր տալիս խուլիգանական արարք, որն անհանդուրժելի էր: Մոտեցա.

— Ինչպես չեք ամաչում, ընկեր միլիցիոներ, ժողովրդի մեջ թույլ եք տալիս հակահասարակական, խուլիգանական արարք: Վերջ տվեք անմիջապես հայհոյանքներին...

Միլիցիոները շրջվեց երիտասարդի կողմը.

— Դու գնա,— ասաց,— իսկ էս հարիֆի ճաշը հիմա կեփեմ...

Եվ ձեռքը գլխարկի շքոցին տանելով, արտասանեց.

— Քաղաքացի, ծառայության պահին ինձ՝ խորհրդային օրենքի պահապանիս, խուլիգան անվանելու և կոպիտ միջամտության պատճառով հանցագործի փախուստին նպաստելու համար քեզ բերման եմ ենթարկում...

— Ո՞ւր պետք է գնանք,— ասացի,— որ ես ստախոսիդ դիմակն էլ պատռեմ:

— Քաղմաս,— հրամայեց,— անցիր առաջ...

Գնացինք: Ճանապարհին զգուշացրի, որ քաղմասում ես երկար մնալ չեմ կարող որովհետև կուշանամ դասից:

— Քեզ արգելվում է խոսել: Քաղմասում

մինչև կողերդ չհաշվեն, դու դասի գնալ չես կարող...

Պարզվեց, որ միլիցիան ու տեղակալը տեղում չեն: Սպասեցինք մեկ ժամ, երկու... Դասերից, իհարկե, ուշացա, իմ խնդրանքները բանի տեղ չանցան: Վերջապես միլիցիան ներս մտավ:

— Հը, ինչ կա, Անտաշյան,— դիմեց միլիցիոներին:

Սա թռավ տեղից և սկսեց զեկուցել.

— Հնգեր պետ, այս ընկերոջ խուլիգանության պատճառով...— Եվ հոսեց թուքումուրը: Միլիցիան կտրեց նրան:

— Լսիր, այ տղա,— հանդիմանեց ժրաջան օրենքի պաշտպանին, անթարթ նայելով ինձ,— էլ խուլիգան չգտար, գնացիր էս հայվանին բերի՞ր...

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԵՏԱԽՈՒՅԶԻ ԴԵՐՈՒՄ

Ամասիայի շրջանից ավտոբուսով գալիս էի Լենինական, և երբ ավտոբուսը հասել էր քաղաքի ծայրամասին, պոլիգոնների մոտ, մեր մեքենան անցագրային պոստի մոտ, ճիշտ կլինի ասել ուղեկալի մոտ, կանգ առավ փաստաթղթերի ստուգման համար: Մինչև 60-ական թվականների ընկիզբը Լենինական սահմանամերձ քաղաքը կարելի էր մտնել միայն անցագրերով: Ես նստած

էի վարորդի հետևի նստարանին, երբ սահմանապահը պահանջեց իմ փաստաթուղթը, ես ցույց տվի Կենտկոմի աշխատողի իմ վկայականը: Սահմանապահը նայեց փաստաթուղթը. «Խնդրեմ ընկեր»— ասաց հարգանքով վերադարձնելով վկայականը: Երևում է, որ վարորդն իր առջևի հայելում տեսել էր այս ամենը, նրա բորբոքված երևակայությունը ինձնից վերստեղծել էր հետախույզի մի տիպ, որը... Սակայն այդ մասին հետո...

Մեքենան կանգ առավ հրապարակ չհասած՝ Բոշի սադի մոտ: Երբ ես փորձեցի իջնել, վարորդը չթողեց.

— Դու ախպերս, մի իջնի, քեզի մինչև վերջ պիտի տանիմ...

— Մինչև հյուրանոց մի քայլ է, ոչինչ, կիջնեմ...

— Մի իջնի, ղուրբանդ էղնիմ, ես գիտեմ դուն վով ես, քեզի կհասցնեմ հյուրանոց՝ իջիր էնտեղ...

Ինչ արած, ենթարկվեցի վարորդի թախանձանքին, հավատալով, որ նա երևի գիտե իմ ով լինելս և հարգանքի սովորական տուրք է մատուցում ՀԿԿ Կենտկոմի աշխատակցիս: Հասանք հյուրանոց, բայց մեքենան կանգ առավ ոչ թե մուտքի առջև, այլ ռեստորանի դռանը: Մեքենան կանգնեցնելուն պես, վարորդը թռավ, դուռը բացեց իմ առջև.

— Դիր, ցավդ տանեմ...— Մինչ ես իջնում էի նա բռնեց իմ թևը,— քեզնեն մի խնդիրքս ունիմ, մենք ախպեր, արի մտնենք ռեստորան, մե թասը դախի խմենք, մե երկու խոսք խոսինք, որ մենք էլ պարծենալու բան ունենանք, որ իմանանք մենք մարդոց հետ լեզու ենք թրջել...

— Բայց, սիրելի վարորդ, նախ ես մեծ մարդ չեմ, այլ շատ սովորական...

Վարորդը կտրեց խոսքս.

— Գիտես, թե չիտեմ վով ես, ծո դու էն մարդն ես, որ պագրանիչնիկը թեթևը փաստաթուղթդ տեսավ թե չէ, զարմանքեն աչքերը ճակատը թռան, որ ոտքերն իրար զարկեց ու պատվի առավ, ծո՛, դու էն մարդն ես, որ Ամսասիայի պագրան զաստավեն կուքաս, ղուրբան քեզի... Շատ կխնդրեմ տաս դոպե ընկերություն անես հետս...

Կամաց գլխի էի ընկնում, որ իմ համեստ անձը այս մարդու աչքին արտակարգ անձնավորության լուսապսակով է երևում և մտածեցի ադրագ վերջ տալ խոսակցությանը, մի կերպ ճողոպրել «Զինուոր» ճաշարանը, հագեցնել քաղցս և ապա հանգստանալ:

— Գիտես ինչ կա, նախ ես հոգնած եմ, շատ հոգնած, երկրորդը՝ խմել չեմ կարող, որովհետև իրավունք չունեմ, և երրորդը՝ իրավունք էլ ունենամ, պետքս վինակը թույլ չի տա խմիչք առնել բերանս...

— Կնասկնամ, կնասկնամ, որ քերզած ես կնասկնամ, որ իրավունք չունիս խմելու, էդ էլ կնասկնամ, բայց արտիդ հիվանդ էղնելուն չեմ հավատա: Էդպես դժվար գործի մարդը քարառողջություն կունենա...

— Դեհ, լավ,— ասացի,— տեսնում եմ, դու ամեն բան հասկանում ես, ուրեմն ընդունիր շնորհակալությունս և ցտեսությունս...

— Ղուրբան քեզի, ես կնավատամ, որ մենք իրար պիտի պատահենք, սարը սարին չի հանդիպի, բայց մարդը՝ մարդուն հանդիպի կը, ցտեսություն, ցավդ տանիմ...

Վարորդը, որի անունը այդպես էլ չիմացա, մարգարեացավ, որովհետև մի ժամ չանցած կրկին հանդիպեցինք, այս անգամ «Զինուոր» ճաշարանում: Նստել ճաշում էի, երբ մատուցողուհին մեծ ակուտեղով քյաբաբ մատուցեց, մեջտեղը կոնյակի շիշը: Իմ հարցին, թե՝ ո՞վ է պատիվ անողը, մատուցողուհին պատասխանեց.

— Հյուրասիրողը չցանկացավ տալ իր անունը:

Նստել ճաշում եմ, փորձում եմ մի կերպ կռահել, թե ով է հյուրասիրողը, չեմ կարողանում: Քաղաքում բանաստեղծ ընկերներ ունեմ՝ Քաջիկ Գրիգորյանը, Շմավոն Թորոսյանը և այլն, գուցե նրանք են ուղարկել, բայց ճաշարանում նրանք չեն երևում: Գուցե մեր խմբի տղաները, նույնպես չեն երևում, չկան: Հետո վերոհիշյալները իրենց հյուրասիրությունը ինչո՞ւ պի-

տի թաքցնեն, խորհրդավոր դարձնեն: Մյուս վարկածն այն էր, որ մատուցողուհին խառնել է, որ հյուրասիրվողն ուրիշ է: Մի խոսքով, ինչպես ասում են, ճաշակեցի այդ բարիքի մի մասը (ուղարկվածը կբավեր մի քանի հոգու) և քայլեցի դեպի ելքը: Դռան աջ և ահյակ կողմերում խնամքով վարագուրված խցիկներ կային, անցնելու պահին ետ է քաշվում դրանցից մեկի վարագույրը և ես տեսնում եմ վարորդին իր ընկերների հետ՝ ոտքի վրա.

— Այ էս ընկերոջ մասին է, որ կխոսիմ կրպարծենամ...

Տղաների ձեռքերին լիքը բաժակներ կան: Մի բաժակ կոնյակ պարզապես խցկում են մատներիս մեջ.

— Կենացդ, մենձ ախպեր, մենք կոլեկտիվ կերպով մատաղ ենք քու ջանիդ...

— Շնորհակալ եմ, տղաներ, շատ շնորհակալ, ես էս բաժակը ուզում եմ խմել ձեզ հետ (ուրիշ հնար չկա), բայց կարծում եմ դուք կներեք և թույլ կտաք գնալու...

— Թույլ կուտանք, ախպեր ջան, բայց լավ կեղներ, եթե դուն, որ մեր էրգրեն կուզաս մե երկու խոսքով ըսեիր, թե էնտեղ ինչ կաչկա: Մեզի էնպես կթվա, թե չոր քարերն անգամ էնտեղ մեր կարոտեն կուլան...

— Հա՛, տղաներ,— ես զգում եմ, որ իմաստ չունի արդեն ժխտելը, որ նրանք արդեն իրենց համար օրինականացրել են իմ հետախույզ լինելը,— չգիտես քարերը կուլային, թե չէ, բայց որ աշխարհի հայությունը էրգրի կարոտով կուլա, այդ մեկը գիտեմ...

— Վա՛հ հոգուդ մեռնիմ, ծո մենձ ախպորս քերնեն լուս մեռոն կթափվի, ծո, ես կուզեմ կուշտըմ լաց էղնիլ...

Ես խմում եմ կոնյակը մինչև մրուր:

— Ոխա՛յ, անո՛ւշ,— ձայնակցեցին:— Սե բանըմ էլ ըսա, էնտեղ զարկիլ-զարկվիլ եղավ-չեղավ...

— Ծո, ձենդ կտրե, էն մարդը իրավունք չունի, էդ իրավունքեն դուրս է, իմացա՞ր...

— Տղաներ, ես պիտի գնամ,— խոսքիս ծանրություն ու լրջություն եմ տալիս ես: Արդեն կարծես հավատում եմ հետախույզ լինելուս հանգամանքին,— միայն ձեզնից խնդրում եմ հանկարծ ինձ ուղեկցելու փորձ չանեք կամ այնպիսի բան, որ ուշադրություն գրավի, եղավ...

— Գնա, քու գալուդ էլ մատաղ էղնինք, գնալուդ էլ...

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ

Գյումրվա փոստի հեռախոսակայանն է: Խուսակցության սպասողները միայն կանայք են, որ անխոս նստած սպասում են իրենց հերթին: Հեռախոսային խցիկները, բացի մեկից, բոլորը դատարկ են, մեկում՝ միջին տարիքի մի կին փորձում է իր կոկորդի զորությունը և այնպիսի բղավոց-ճղավոց է գցել, որ մարդիկ խլանում են:

— Արթիկ, աղջի, Արթիկն է: Աղջի, գետինը մտած, Արթի՞կն է... Հա, մե Հոռոմ կանչե, ըսելս էդ է՝ Հոռոմ կանչե... Աղջի, ժած-մած արի, ընչի ես մեռե... Չես մեռե, ավելի լավ է, որ չես մեռե, Հոռոմ կանչե... Էդ ինչ նեժնի ես, որ ես Լենինական կխոսիմ, դու Արթիկին մեջ կխլանաս... Վայ, հոգիս կերար, Հոռոմ կանչե...

Այդ պահին ներս է մտնում մի գեղեցիկ երիտասարդ: Արհամարհանքով, մի տեսակ վերևից նայում է սպասող կանանց, լսում է կոկորդ պատռող կնոջը, ապա մոտենում է ինձ: Թեթև խմած է.

— Բարև, ախպեր ջան...

— Բարև...

— Կերևա, որ էստեղացի չես...

— Չէ՛, էստեղացի չեմ...

— Էդպես էլ գիտեի... Էս կնիկներուն կը-տեսնիս, որ պատի տակ հավկթի պես շարված են, էդոնց էդպես խեղճ չիմանաս... էդոնք էլ.

որ բուդկեն մտնին էդ կնկա պես պիտի կատ-
ղին ու լրբանան...

Ասաց ու գնաց: Իսկ խցիկը պայթում էր
կնոջ ծղրտոցից.

— Արթիկ, Արթիկ, աղջի, Հոռոմ կանչե...

ԴՈՒՔ ՃԱՆԱՉՈ՞ՒՄ ԵՔ ՄԱՅՈՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ

Առանց անցագրի Լենինականի կայարան ոչ
կարող ես մտնել, ոչ էլ դուրս գալ: Հերթապահ
սահմանապահը քեզ կտանի պարետատուն,
կընկնես գլխացավանքի մեջ: Իսկ ես ուսանող
եմ և տարեկան մի քանի անգամ Լենինականով
գնում եմ Ջավախք: Միշտ չէ, որ հաջողվում է
հեշտությամբ անցագիր հանել: Այս անգամ ամ-
ռան արձակուրդներին գնում ենք տուն, երեք
հոգի ենք՝ երկու աղջիկ և ես: Այս անիծված աղ-
ջիկներն էլ թարսի նման շատ սիրունիկ են,
ինչպես մեզ մոտ են ասում՝ աչք բրո-
նող, այնպես որ պատահականությունից
խուսափելու համար, հարկավոր է աչք
պահել նրանց վրա: Ես հագած եմ զինվորական
համազգեստ, ինարկե առանց ուսադիրների,
վիրավոր ձեռքս տակավին վիրակապի մեջ է: Իմ
այս վիճակն ինքնին համազոր է անցագրի, իսկ
աղջիկներն անցագիր չունեն: Գնացքից իջանք
և շարժվեցինք դեպի ելք: Աղջիկներին սահմա-

նապահներն անմիջապես չանթեցին և տարան
պարետատուն: Ես հետևեցի նրանց: Պարետա-
տանը բավական թվով բերման ենթարկվածներ
կային, որոնք հսկողության ներքո սպասում էին
պարետի ժամանելուն: Վերջապես եկավ պարե-
տը: Ծքանշաններով և մեդալներով զարդարված
կրծքով, ոչ թե ատրճանակը, այլ մաուզերը կող-
քից կախ, որ կրողի կարճ հասակի պատճառով
քիչ էր մնում քսվեր գետնին: Եկավ, նստեց գը-
րասեղանի առջև: Առանց ժամանակ կորցնելու
ես մոտեցա նրան, ներկայացա և խնդրեցի, որ
իմ բարեկամուհիներին մի քիչ շուտ հարցաքըն-
նի, որպեսզի չուշանանք Ջավախք մեկնող ավ-
տոբուսից: Ծակող հայացքով նայում էր ինձ, իսկ
երբ տեսավ մեր աղջիկներին, ասես փոխեցին
այդ կարճահասակ մարդուն: Բարձրացավ տե-
ղից, դուրս ցցեց շքանշաններով զարդարված
կուրծքը և սկսեց ձեղ սենյակում քայլել ետու-
առաջ, աչքելով աղջիկներին: Հետո կանգնելով
իմ առջև.

— Երիտասարդ, դուք ճանաչում եք մայոր
Մնացականյանին...

— Ոչ, ընկեր մայոր, չեմ ճանաչում...

— Ձեղա՞վ,— ծոր տվեց նա,— ինչպե՞ս թե
չեք ճանաչում...

— Նա մեր գործի հետ կապ ունի՞...

— Անմիջական, նրանից է կախված ձեր խնդ-
դիրքի կատարումը...

Ես գլխի էի ընկել, որ մայոր Մնացականյանն

ինքն է, երևի քաջակորով զինվորական, մարտերում աչքի ընկած անձնավորություն, բայց ներքին մի ձայն հուշում էր ինձ, որ ես ինձ անգետի տեղ դնեմ և մի քիչ նրա հոգու հետ խաղամ: Իսկ մայորի հայացքը հալվում էր մեր աղջիկների վրա, որոնց առջև շորորում էր զարդարված սիրամարգի նման:

— Դուք պարտավոր եք ճանաչել մայոր Մնացականյանին...

— Ինչո՞ւ...

— Պարտավո՛ր եք...

— Լսեք ընկեր մայոր, մենք ուշանում ենք, եկեք վերջ տանք կոմեդիային...

— Եթե քաջ ռազմիկին ճանաչելը համարում եք կոմեդիա, ուրեմն, ո՛չ դուք, ո՛չ ձեր ընկերուհիներն այստեղից դուրս չեք գա...

— Իսկ մայոր Մնացականյանը ճանաչում է ինձ՝ քաջ ռազմիկ, լեյտենանտ Սարգսյանին...

Մայորը կարկամեց, բայց չնահանջեց.

— Իսկ ձեր մասին գրքերում գրվա՞ծ է...

— Այո,— ասեցի ես:

— Այդ դեպքում ծանոթանանք՝ մայոր Մնացականյան...

— Սկզբից կասեիք,— խոսեցի ես և թոթվեցի նրա ձեռքը:

— Մինչև ժամը տասը, պահանջում եմ ազատել սահմանային քաղաք Լենինականը...

* * *

Պատահեց այնպես, որ մեկ-երկու ամսից հետո իմ ընկերոջ, իրավաբանական ֆակուլտետի ուսանող Հովիկ Զոլախյանի հետ նորից անցանք Լենինականի կայարանով: Ես անցա պոստից: Հովիկին, որին պատմել էի այս պատմությունը տարան մայորի մոտ՝ պարետատուն: Նրա հետ նաև երեք ռուս կանանց: Ի զարմանս և հուրախություն ինձ, հինգ-տաս րոպե չանցած Հովիկը դուրս եկավ պարետատնից: Պատմեց եղելությունը, իսկ սցենարը նույնն է եղել.

— Երիտասարդ, դուք ճանաչո՞ւմ եք մայոր Մնացականյանին...

— Այո,— ճանաչում եմ, ասել է Հովիկը,— նա ֆաշիզմին հաղթող հերոսներից է...

— Ապրե՛ս,— ասել է մայորը,— դու ազատ ես...

... Երկար ժամանակ մերոնք, մինչև պարետի փոխվելը անցագրի կարիք չունեին: Անցագիրը մայոր Մնացականյանի հերոսության ճանաչումն էր...

ԼԱՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԸ

— Փրկիր ինձ խայտառակվելուց,— «Մոսկվա» հյուրանոցի իմ համարը մտնելով, հևալով խոսում է Ա. Պ.-ը, չես կարող պատկերացնել, թե ինչ վիճակի մեջ եմ: Նորապսակ աղջիկս ու փեսաս, որ դուրս են եկել ամուսնական ճանապարհորդության, հիմա իմ համարում են: Եվ պատկերացրու, Նատաշան, նա, իմ յարը, նույնպես եկել է... Ամոթից չգիտեմ ինչ անել, փրկիր ինձ, արի Նատաշայի սիրեկանի դերը վերցրու քեզ վրա, այլապես...

— Լավ,— ասացի ու վեր կացա:

Իմանալով կնոջ նաև հայրանունը, համարձակ մտա Ա.-ի հյուրանոցի համարը, թեթև բարևելով, մոտեցա Նատաշային.

— Նատաշա, թանկագինս, դուք իմ և ընկերոջս համարները խառնել եք... Գնանք ինձ մոտ,— նախօրոք այս համարը զբաղեցնող իմ ընկերոջից ներողություն խնդրելով...

Նատաշա կոչեցյալ գեղեցիկ կինն անխոս բարձրացավ և մտավ իմ թևը: Քայլեցինք դեպի դուռը: Նատաշան հասկացել էր ամեն բան: Երբ դուրս էինք գալիս սենյակից, լսվեց նորահարսի, ընկերոջս աղջկա բարձրաձայն խոսքը.

— Զզվում եմ մեր հայ տղամարդկանցից: Ոտքերը Մոսկվա դնելուն պես, անմիջապես ելնում

են կանանց որսի, ընկնում պատահական շրջազգեստի ետևից, թքում ընտանեկան սրբությունների վրա, թյո՛ւ...

Լավ պրծա: Լավ էր երեսիս չթքեց:

ԽԱՇԻՑ ՀԵՏՈ

Հենրիկ Թումանյանի տանը հավաքվել են Հովհ. Ծիրազը, Համո Սահյանը, Արամ Արմանը, բարեկամներ ու ծանոթներ: Ճաշակեցինք խաշը, Հովհ. Ծիրազի սրախոսությունները և արդեն կեսօր էր, երբ լքեցինք հյուրընկալներին: Համո Սահյանը, Արամ Արմանը և ես որոշեցինք մտնել Սիլվա Կապուտիկյանի բնակարանը: Խոսեցինք դեսից-դենից, պոեզիայից, հայոց հարցից և ես, որ նստել էի, (իհարկե, տիրոջ թույլտվությամբ), Սիլվայի մահճակալին, խաշի քնաբեր ազդեցության տակ, քնել էի անխոով ու հանգիստ, առանց իմանալու, որ մեր տանեցիներն անհանգստացած զանգահարել էին Հենրիկ Թումանյանին, հարցրել, թե որտեղ կարող եմ լինել և ստանալով պատասխանը կինս զանգահարել է Սիլվային: Կոմեդիան սկսվել է այստեղից.

— Տիկին Սիլվա, Մկրտչի կինն է, Ելենան, Մկրտիչը ձեզ մո՞տ է...

— Իհարկե, էս է կողքիս պառկած է անկողնում...— Ես չգիտեմ ի՞նչ է զգացել կինս, լսելով

Սիլվային, որ ամուսինը պառկած է Սիլվայի կողքին և այդ լուրը լսում է ոչ թե երրորդի կողմից, այլ հենց Սիլվայի բերանից: Բայց Սիլվան զգալով իր սխալը, անմիջապես փորձում է ուղղել.

— Ավելի լավ է, Ելենա, Համոն թող ասի...

ՊՐՈՎՈԿԱՏՈՐԸ

1976-ի ամռանն էր: Արցախը փոքր ինչ ուշացումով նշում էր Սերո Խանզադյանի ծննդյան 60-ամյակը: Մարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կևորկովն այս հոբելյանով արցախյան հայ մտավորականությանը ջարդելու և ոմանց Արցախից հալածելու համար իր «մեղքը քավելու» անհաջող փորձեր էր անում: Սակայն այս հարցում խորանալը մեզ հեռու կտանի: Մեր խոսքը ոչ այն է զավեշտական, ոչ այն է դրամատիկ մի երևույթի մասին է, որ փայլուն ձևով է ցուցադրում Արցախի այն ժամանակվա քաղաքական և բռնապետական իրավիճակը:

Հոբելյանական հանդիսավոր երեկոյից հետո, մարզային ամառանոցում, այսպես կոչված դաչայում, տեղի ունեցավ բանկետ-խնջույք, որը տևեց մինչև գիշերվա ժամը 2-ը: Հյուրերը (Բաքվից, Երևանից), տանտերերը ցրվեցին բարձր տրամադրությամբ, քիչ չէին հարբածները, որոնց թվում էր նաև մեր հոբելյարը, որ հյուրերի հեռանալուց հետո գլուխը սեղանին խոմփացնում

էր: Սեղանի շուրջը քնած Սերոն էր, արթուն՝ Նաիրին՝ Սերոյի որդին, իսկ Սերոյի կինը՝ Ժենյան ներս ու դուրս էր անում, որ ամուսնուն տանի ննջարան քնելու: Թեյում էինք, երբ հանկարծ ներս մտավ անծանոթ մեկը, որին չէինք տեսել հոբելյանական երեկոյին, ոչ էլ խնջույքին: Շատ զարմացա անծանոթի հայտնվելով, որովհետև գիտեի, որ Կևորկովի «ռեզիդենցիան» առանց նրա թույլտվության ո՛չ հավքն իր թևով, ո՛չ օձն իր պորտով մուտք չեն կարող գործել: Անծանոթի ձիու նմանություն ունեցող դեմքը շարժվեց, ցուցադրելով ժանգոտ նոսր ատամնաշարը.

— Բարև, հայ գրողներին...

— Բարև,— առանք բարևը:

— Ոնց եք ձեր ցավը տանեմ,— չարչարվում էր հարբած երևալ անծանոթը: Երևի չկասկածելով, որ դիմացը նստողները խմած, բայց հարբած չեն:

— Լավ ենք,— ասացի, — բայց այս ուշ ժամին դուք ինչ գործ ունեք այստեղ...

— Մոտիկում եմ ապրում,— խոսեց շփոթված աչք հածելով չորս կողմը: Իմ հարցը ակնհայտորեն վախեցրել էր նրան,— ասի՝ գնամ մեր գրողներին տեսնեմ: Ախր, ձեր ցավը տանեմ, գիտեմ, որ էստեղ ձեզ լավ չեք զգում... Ծների հետ ինչ քեֆ, ինչ ուրախություն...

— Ծներն ովքե՞ր են,— այս անգամ զգաստացանք մենք:

— Թուրքերը, էլ ո՞վ...— Պատասխանեց անվարան:

— Թուրքերը մեր եղբայրներն են,— ասացինք,— ինչո՞ւ եք հայհոյում մեր բարեկամներին...

Պատասխանը երևի անսպասելի էր և անծանոթը բացվեց.

— Ձեք նեղանա, եթե ասեմ, ես թքել եմ ձեր եղբայրների վրա, ես նրանց մերը...

— Լսի՛ր,— ասացի,— ճիշտն ասա, ո՞վ ես դու, ինչո՞ւ ես եկել այստեղ, ի՞նչն է քո կեսգիշերային այցելության նպատակը: Եվ հետո վերջ տուր հայհոյանքներիդ, փակ պահիր քո բերանը...

Նաիրին ձեռքը երկարել էր գինու դատարկ շշին: Սերոն մոլտում էր, ուզում էր արթնանալ: Անծանոթը կծկվել էր ոգնու նման:

— Գնա՛, գնա՛,— ասացի,— գնա, քեզ ուղարկողին ասա, որ բռնվել ես հանցանքի մեջ, որ բացահայտված և շատ վատ պրովոկատոր ես...

— Մկրտիչ հոպար, ես դրան կսպանեմ,— Նաիրին շիշը պտտեցնում էր անծանոթի գլխավերևում:

— Սպասիր, Նաիրի, շիշը դիր ներքև, շիշը կսպանի այս սրիկային... Այ, մենք հիմա սրան այնպես կշարդենք, որ եկած ճանապարհը մոռանա...

Սերոն արթնացավ.

— Հով է, հինչ կա... Ասեք թող թեյ բերեն...

— Ո՞ւր կորավ սրիկան,— գոռաց Նաիրին ու թռավ տեղից:

— Արա՛գ, արա՛գ,— ասացի,— չթողնենք փախչի...

Վազեցինք: Դուրս թռանք, շենքը շրջապատող այգին լուռ էր: Երեքով լայնքով ու երկայնքով չափչփեցինք այգին, զննեցինք յուրաքանչյուր թուփ ու ծառ, բայց ասես գետնի տակն էր անցել անծանոթը: Մոտեցանք այգու մուտքը հսկող միլիցիոներին.

— Մեկը դուրս եկավ շենքից, ուր գնաց չտեսա՞ք...

— Ոչ ոքի չեմ տեսել,— ասաց միլիցիոնները:— Ոչ ներս մտնող, ոչ դուրս եկող...

Փախավ:

* * *

Օրեր անց լսում էի այս պատմությունը գրողների միության բարում: Եվ պատմողը Սերոն էր:

— Համա թե տուր տվինք սրիկային: Մկրտիչը դրան որ չտվեց... Լոշը փոեց, էնտեղից մեր Նաիրին չոքեց բկին: Մի երկու հատ էլ ես հասցրի, համա չուզեցի, որ էդ սրիկան սատկեր, բաց թողի, գնաց... Հրաշք գործ էր:

Երբ մենակ մնացինք.

— Սերո,— ասացի,— ախր, էդ սրիկային իս-

կի ձեռք էլ չտվինք, պե՞տք էր սուտ ու ճիշտ խառնել իրար...

— Պետք էր, շատ էր պետք,— ասաց,— թող իմանան մենք ովքեր ենք, ում հետ գործ ունեն...

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԺԱՄԱՑՈՒՅՑԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Սերո Խանզադյանին և ինձ հրավիրել են ժամացույցի գործարան: Նախ պիտի որոշենք ով է առաջինը ելույթ ունենալու: Սերոն նայեց ինձ.

— Դու ելույթ ունեցիր սկզբից,— ասացի ընդրան, գլխի ընկնելով, թե ինչ է ուզում:

— Ճիշտ ես ասում,— ուրախացավ նա,— ես կխոսեմ առաջինը, թե ժամանակ մնաց կխոսես նաև դու...

Երեկոն անցավ բավական հետաքրքիր: Եթե չեմ սխալվում 83 կամ 84 թվականը պիտի լիներ: Սերո Խանզադյանը նամակ էր գրել Լ. Ի. Բրեժնևին. Ղարաբաղի հայության անտանելի վիճակի մասին, խնդրել էր գլխավոր քարտուղարին լուծել Ղարաբաղը իսկական տիրոջը վերադարձնելու հարցը: Նամակն ինչ որ սատանայական ճանապարհով ընկել էր արտասահման, նախ, հայ մամուլի գյուտն էր դարձել և այնուհետև, տպագրվել էր «Նյու Յորք թայմս» ամերիկյան թերթում, բավական աղմուկ հանելով

Արևմուտքում: Եվ բնավ էլ զարմանալի չէր, որ ունկնդիրները հարցեր տեղացին հենց այդ թեմայով.

— Ընկեր Խանզադյան, արտասահմանում տպագրվող այդ հոդվածի համար ձեզ պատասխանատվության չենթարկեցի՞ն...

Սերոն երևի սպասում էր նման հարցի: Նրա սրտովն էր այդ հարցը: Կարող էր ծավալվել ցանկացածի պես, չխորշելով ցանկացածը իրականի ձևով ներկայացնելուց:

— Փորձեցին, բայց բան դուրս չեկավ,— և ձեռքը մեկնեց իմ կողմը,— ախպերս (այսինքն՝ ես) չթողեց...

Այդ պահին, թեև դահլիճում շոգ չէր, ես քրտնեցի: Ստում էր, անաստված ձևով ստում էր Սերոն: Ես գրողների միությունում զբաղեցնում էի վարչության քարտուղարի և կուսբյուրոյի քարտուղարի պաշտոնները: Սերոյի ասելով ես կարողացել էի նրան փրկել իշխանությունների պրեսինգից: Դա ասելուց հետո «վերակառուցեց, ճշտեց» իր ելույթը: Ինձ ներկայացնելով որպես իր փրկարարը, նա երևի մտածեց, որ գերագնահատել է իմ համեստ հնարավորությունները և շարունակեց.

— Մեկ էլ իմ հին, լավ բարեկամ Ալեքսեյ Կոսիգինը ինձնով զբաղվող որոշ ղեկավար մարդկանց ասել էր. չլինեմ, չիմանամ, որ այդ տղի (այսինքն՝ իմ) խաթրին դիպչեք, նա Վոլխով գետի համար կռվողների մեջ ամենաքաջն

էր պատերազմի ժամանակ, ձեռք չտաք նրան, հա՜...

Բռնկվում են ծափահարություններ: Ես ամաչում եմ ատի այս չափից: Ցանկանում եմ վերկենալ և ասել, թե՝ ա՛յ մարդիկ, Սերոյի ասածը հալած յուղի տեղ միք դնի, Սերոն կատակ է անում: Ցանկանում եմ ասել, որ Սերոյի նամակը քննարկման չի արժանացել և ես էլ առիթ չեմ ունեցել պաշտպանելու, փրկելու նրան: Այնպես, որ թաց ու չորը մի խառնեք իրար...

Երեկոն ավարտվեց: Ճանապարհին ես կքննարկեցի Սերոյի ինքնասիրությունը.

— Սերո, ստելուց չե՞ս ամաչում...

— Չեմ ստում, իմացի՛ր, ստեղծագործում եմ...— Եվ նորից,— թող իմանան, թե ովքեր ենք մենք...

ՍԽԱԼ ՏԵՂ ԵՔ ԼԱՑ ԵՂԵԼ

Առավոտյան արթնանում եմ հեռախոսի անընդմեջ հրամայող զրնգոցից: Վերցնում եմ ընկալուչը:

— Ես եմ, Սերոն է: Շալվարդ ոտներդ գցիր ու դուրս եկ...

— Ինչո՞ւ...

— Շալվարդ ոտներդ գցիր ու դուրս եկ...— երևում է խմած է:

— Ախր, ինչու դուրս գամ, Սերո...

— Շալվարդ ոտներդ գցիր ու դուրս եկ, հրես, Հրաչիկն էլ կողքիս կանգնած:— Իսկ ընկալուչում լավում են Հրաչյայի ներկայությունը հաստատող խռպոտ ձայներ, մռլտոց և այլն:

— Որտե՞ղ եք,— հարցնում եմ, որովհետև հասկանում եմ, որ մինչև այն է, անհնար է օձիքս ազատելը, պիտի գնամ...

— Ձեր շենքի առջև, տաքսաֆոնի խցիկի մոտ, շալվարդ ոտներդ գցիր ու դուրս եկ...

Իսկապես, իմ ընկերները կանգնած են հեռախոսային խցիկների առջև, լուլ են, խմած, կանգնած են կուվող ցուլերի նման ճակատներով իրար հենված, այդ ձևով են պահում իրար, որ չընկնեն...

— Դե, գնացինք,— ինձ տեսնելով ասում է Սերոն, և մենք երեքով բարձրանում ենք ժամացույցի գործարան տանող վերելքը, այժմյան Ամերիկյան համալսարանի տարածքով և կանգ առնում նորատունկ պուրակի ծառերից մեկի տակ, ուր փոսի մեջ մի շիշ օղի և ուտելիք է դրված:

— Այստեղ է,— ասում է Սերոն ու բացում օղու շիշը:

— Ի՞նչ տեղ է, —հարցնում եմ:

— Աղասի Խանջյանի գերեզմանն է,— ասում է Սերոն, իսկ Հրաչյան, անկարող զսպելու իրեն, պարզապես պոռթկում է, լալիս է բարձրաձայն, գովում է հանգուցյալին:

— Խմենք, խմենք, մեծ մարդու, մեծ զոհի ո-

ղորմաթասը,— արցունքների միջից խոսում է նա:

Եկուսով լալիս են, իսկ ես պարզապես լաց լինել չեմ կարող, խմած չեմ, տրամադրված չեմ: Սերոն հասկանում է ինձ.

— Խմիր, սիրտդ թեթևացրու,— ասում է նա, թեյի բաժակով օղին գլխին քաշելով:

Ես էլ եմ ցանկանում լաց լինել և նույն բաժակով օղին քաշում եմ գլուխս: Սոված, քնահարամ մարդ և թեյի բաժակով օղի: Անմիջապես օղին խփում է գլխիս: Իսկ լացն ասես գրպանս դրած լինի, բարձրանում և բռնում է կոկորդս և ես լալիս եմ, այնպիսի վայնասուն բարձրացնում, որ խմած ընկերներս անգամ զարմանում են արտասվելու իմ եռանդի վրա.

— Քեզ ինչ պատահեց, տո՛, մի սպանիր քեզ, հանգստացիր,— Սերոն արդեն մխիթարում է ինձ, իսկ Հրաչյան հանգուցյալի և իր մեջ նմանություններ է գտել.

— Ինձ նման էլ գանգրահեր է եղել, մեռնեմ իրեն:

Այդ պահին Սերոն ինչ-որ անհանգստության նշաններ է ցույց տալիս: Դադարել է արտասվելուց, դեսուդեն է նայում: Եվ հետո..

— Այստեղ, սպասեք, սխալ տեղ ենք լաց եղել, այ էն ծառի տակ է թաղված, էնտեղ պիտի լայինք...

ՓՈՐՁԱՆՔ

— Մարդ չես,— օդու հոտը փչելով դեմքիս խոսում է ընկերս,— ինչո՞ւ չես գնում քո հայրենակցի շիրմին մի կուշտ լաց լինես...

— Ո՞ւմ նկատի ունես,— ասում եմ նրան:

— Դեմիրճյանին, էլ ում... Արժե, որ հիմա գնանք ու մի բաժակ օղիով թրջենք նրա շիրիմը և արտասուքով էլ մեր աչքերը...

— Լսիր,— ընդհատում եմ նրան,— ինչու պիտի լաց լինեմ նրա շիրմին, էն էլ ուշացումով: Մարդն ապրեց համարյա 80 տարի, ապրեց փառքի ու սիրո պայմաններում, ես լաց լինելու պատճառ չեմ գտնում... Հետո արդեն գիշեր է, ժամը 11-ը, մոայլ բան է այդ ժամին հանգստարան այցելելը...

— Ուրեմն, մարդ չես,— նորից իրենն է կրկնում իմ ընկերը:

Վերջը համոզում է ինձ և հրում դեպի ծառայողական ավտոմեքենայի կողմը:

— Վարդգես, քշիր Թոխմախ...

Քայլում ենք գերեզմանատան միջով: Ամայի լռության մեջ, մեր քայլերը դղրդոցով թակում են ասֆալտը և պայթեցնում լռությունն ու երկար արձագանքում: Լուսնկա է: Գերեզմանաքարերի և խաչքարերի ստվերները լեզու հանած ասես հետևում են մեզ: Գիշերը, այն էլ լուսնկա, գերեզմանատունը դարձնում է անավոր, դժվար է հիմա հավատալ, որ ոչ այնքան հեռվում եռում

է միլիոնանոց քաղաքը: Ես իմ ընկերոջ չափ խմած չեմ և այս գերեզմանոցն ինձ թվում է մահվան տրիումֆը, մեռելային լռությունը՝ անսահման ու հավերժական: Չենք խոսում, ունկընդիր մեր պայթուցիկ քայլերին ընթանում ենք դեպի պանթեոն: Սակայն փորձանքը դեռ մեր առջևում է: Մենք չգիտենք, որ վերջերս **ԽՄԿԿ** Կենտկոմի պլենումում Բերիայի քննադատությունը, որն Աղասի Խանջյանին գնդակահարել է իր ձեռքով՝ Թիֆլիսում, վրացի որոշ ազգայնամոլների դրդել է հակահայկական գործողություններ և այդ թափթփուկներից մեկը եկել է Երևան և ատրճանակի կրակոցներով փչացրել Խանջյանի գերեզմանին կանգնեցված կիսանդրին: Հետագա պրովոկացիաներից խուսափելու և հուշարձանը կարգավորելու համար, այստեղ նշանակված է զինված հսկողություն, որի մասին մենք անտեղյակ ենք և քայլում ենք ստույգ դեպի մահ: Պանթեոն ոտք դնելուն պես, հանկարծ, ասես մեր ոտքերի տակից լսվում է հրամանը.

— Կանգնիր, ո՞վ է եկողը...— և լսվում է փակաղակի չրխկոցը: Մեխվում ենք: Իսկ հրամանի արձագանքը թափառում է գերեզմանոցում և գնալով անհագանում:

— Լսի՛ր, այդ ո՞վ էր,— փաթաթվում է ինձ ընկերս,— ես վախենում եմ...

— Ես էլ եմ վախենում,— կպչում եմ ես էլ նրան:

Վայրկյան չանցած գիշերն ու լռությունը մեկեն պայթում են ավտոմատ զենքի կրակոցներից

և լուսածիր գնդակների պարսը մեր վերևում սուրում է դեպի երկինք:

— Փախչենք,— ձայնում ենք իրար և փախչում ոչ թե եկած ճանապարհով, այլ գերեզմանների միջով: Հալածված չորքոտանու նման փախչում ենք՝ բախվելով շիրմաքարերին, ընկնելով և բարձրանալով: Մետաղյա պսակները քրքրում են մեր տաբատների փողքերը, ոտքերը: Կրակոցը երկու անգամ կրկնվում է ու մարում:

Հոգնած, քրտնած և ավելի շատ վախեցած, դուրս ենք նետվում գերեզմանոցից: Դռանը որսորդական հրացանը ծնկներին նստել է պահակը.

— Ձեր վրա էր կրակը՞մ...

— Հա՛, ինչո՞ւ չզգուշացրեցիր, այ մարդ... Սպանում էր, ա՞խր...

— Իզո՞ւր եք վախել, սալդաթը վախից էր կրակում, մեռելներից վախում է, կրակում է, որ չվախենա...

— Այ մարդ, ինչ նշանակություն ունի՝ վախից է կրակում, թե քաջությունից...

Մեր վարորդը՝ Վարդգեսն ավելի շատ էր վախեցել, քան մենք.

—Կարծեցի արդեն ձեռքից գնացել եք, եթե քիչ էլ ուշանայիք, գնալու էի միլիցիայի վարչություն...— Եվ միացրեց մոտորը:

ՊՈԵՏՆ ՈՒ «ԹԱԳԱՎՈՐԸ»

Ինձ ընդունում էին Հայաստանի կոմկուսի կենտկոմի մամուլի և հրատարակչության սեկտորում աշխատանքի: Բյուրոն պետք է հաստատեր: Կենտկոմի համապատասխան գծով քարտուղարը զեկուցեց, և իմ առավելությունները թվարկելիս իմիջիայլոց նշեց նաև իմ հակումը բանաստեղծական խոսքի նկատմամբ: Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը լսելով այդ մասին, անմիջապես շրջվեց իմ կողմը.

— Ընկեր Սարգսյան, չլինի՞ բանաստեղծ եք...

Մեկը իմ հետևից հուշեց.

— Ասա՝ ոչ, բանաստեղծ չես... Չի սիրում բանաստեղծներին:

Ես չցանկացա ստել, քանի որ հանրապետության մամուլում արդեն երևացել էին իմ մի քանի բանաստեղծությունները և պատասխանեցի.

— Այո՛,— ասացի,— երբեմն գրում եմ...

— Смотрите, товорищ Саркисян,— շարունակեց առաջին քարտուղարը ռուսերենով,— для поэта аппарат ЦК слишком серезное место...

Եվ ծիծաղեց: Ծիծաղեցին նաև մյուսները:

Իսկ ես տխրեցի: Աշխարհի ամենաաստվածային մասնագիտությունը ստորադասվել էր կենտկոմին, կատարվել էր սրբապղծության նման մի բան...

ԱՍՔԱՆԱԶ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԸ

Հայրենական պատերազմի ծանր օրերին ընկերս դժվարին մի սխրանք էր կատարել՝ չանթել էր ֆաշիստական ապային բլինդաժից, տարել գնդի շտաբ և, փաստորեն՝ «լեզուն» հանդիսավորությամբ հանձնել տանկային գնդի հրամանատար , այն ժամանակ դեռևս գնդապետ, Ասքանազ Կարապետյանին: Գնդի հրամանատարը գրկել ու համբուրել էր հերոսացած մարտիկին, հետո բացել գրասեղանի դարակներից մեկը և սեղանին դրել հայկական մի քանի շիշ կոնյակ. «Նման քաջագործության համար, սերժա՛նտ, քեզ հայկական կոնյակ է վայել: Խմի՛ր, կարոտած կլինես...»: Սերժանտն իհարկե խմել է, շնորհակալություն հայտնել և կոնյակի շշերից մեկը սահեցնելով շինելի գրպանը սուսուփուս դուրս եկել շտաբից:

Ինքն է պատմում. «Սիրելի Մկրտիչ,— ասում է,— կարոտից գողացա, հավատա, կարոտից: Մեր արևի համն ու հոտն ուներ: Կամքս թուլացել էր՝ չդիմացա և կոնյակը սահեցրի գրպանս: Գալիս եմ զորամաս, մեկ էլ հրամանատարի «Վիլիսը» ճանապարհս կտրեց: «Բռնվեցիր, անամոթ, խայտառակ եղար...»,— ասացի մրտքումս և, ճարս ի՞նչ, կանգ առա: Մեքենան կանգնեց, գնդապետի համհարզն իջավ մեքենայից, ձեռքին մի ծանր ծրար, մեջն էլ մի բոքոն հաց և ամերիկյան երկու տուփ պահածո: «Էս ի՞նչ է»,— հարցրի շվարած: «Գնդապետը հրամայեց հանձնել ձեզ, ասաց՝ «Սերժանտն շտապելուց զակուսկան մոռացել է...» Էսպես եղավ բանը»:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

60-ական թվականների կեսերին Թուրքիա ուղևորվող ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահ Ալեքսեյ Կոսիգինը կանգ առավ Երևանում: Կարճ հանգիստը բարձրաստիճան հյուրը ցանկացավ հատկացնել Մարտիրոս Սարյանի պատկերասրահը դիտելուն: Այստեղ նրան ընդունեց մեծ նկարիչը, որը հյուրին պատվիրանի ձևով երկու առաջարկություն արեց.

— Մեծարգո ընկեր Կոսիգին, ես հարգում եմ Լենինին,— ասաց նա,— նրա անունով կոչեցեք Ռուսաստանի որ քաղաքն ուզում եք, թեկուզ Մոսկվան, սակայն պատմական, մանավանդ



բարոյական ճշմարտությունը պահանջում է, որ Լենինգրադը անվանվի Սանկտ Պետերբուրգ... Վերականգնվի արդարությունը...

Հետո նկարիչը հյուրին նվիրեց իր «Արարատ» յուղանկարը.

— Նայեցեք, Ալեքսեյ Նիկոլաևիչ, մեր Արարատին, նայեցեք և, եթե կհավանեք ձեռք բերեք օրիգինալը, ահա իմ խնդիրքը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 2
Ավ. Իսահակյանը Դեր. Դեմիրճյանի մասին . . 3
Ավ. Իսահակյանը Հովհ. Թումանյանի մասին . 6
Ավ. Իսահակյան և Եղ. Չարենց . . . 8
Ավ. Իսահակյանը Ախալցխայում . . . 10
Բժշկի մոտ 11
Կեր, տղա ջան 12
Կին և տղամարդ 13
Երջանկության բանաձևը 15
Զրույց . . 15
Դեր. Դեմիրճյանը՝ պարտատեր 17
Մեծերի կռիվը 22
Վ. Անանյանը՝ զրուցընկեր 25
Հովհ. Շիրազ և Հրաչյա Քոչար . . . 27
Շիրազը և Նունիկը 30
Կուսքաղկոմի տարօրինակ քարտուղարը . . 31
Ծո՛, Էդիկ ընձնեն խելառ է 33
Երջանկությունն և դժբախտությունն . . . 36
Մարիետա Շահինյանը և երկրի ղեկավարները . 37
Արման Կոթիկյանի տարակուսանքը . . . 41
Արման Կոթիկյանը տիեզերագնաց է դառնում . 42
Հոնորարը 44
Կոթիկյանի հաղթական բանավեճը . . 44
Երիտդաշնակ Արման Կոթիկյան . . . 47
Կառավարական մակարդակով ճանապարհորդող իշուկը 51
Ինքնանկարը 54
Ի պաշտպանություն ֆորմալիզմի . . . 56
Ավարտվեց թեթև կամթոցով 58
Գիրքը փրկվեց 63
Արձանագրություն 65
«Անհիծորը» կենտկոմի բյուրոյում . . . 70
ՀԳՄ կուսժողովում 73
Ինչպես դարձա պենտագոնի գործակալ . . 76
Իրեն հարցրեք 90
Աշոտ Գրաշին՝ հոնտոր 91
Կալսին Կուլիևի ելույթը 94
Կոնստանտինե Գամսախուրդիայի ճառը . . . 95
Ամեն ժողովուրդ գովում է իր չունեցածը . . . 96
Սուտը բռնվեց 98
Բաքվի օդանավակայանի ռեստորանում . . . 100
Երկու օր Մամեդ Ռահիմի հետ 104
Եղեգնաձորի ճանապարհին 106
Եղնիկի ձագը 109
Կոմունիստները 111
Կենտկոմի բյուրոյում 113
Հաշվապահ բանաստեղծը 115
Էլ ուրիշ խուլիգան չգտա՞ր 118
Խորհրդաշին հետախույզի դերում 120
Հեռախոսազրույց 126
Դուք ճանաչո՞ւմ եք մայոր Մնացականյանին . . 128
Լավության վարձը 132
Խաշից հետո 133
Պրովոկատորը 134
Հանդիպում ժամացույցի գործարանում . . . 139
Սխալ տեղ եք լաց եղել 141
Փորձանք 144
Պոետն ու «թագավորը» 147
Ասքանազ Կարապետյանի կոնյակը 148
Մարտիրոս Սարյանի պատվիրանները . . . 149

Սարգսյան Մկրտիչ Դիվինի

ԱԿԱՄԱ ԵՐԳԻԾԱԲԱՆՆԵՐ

(Երգիծական մանրապատումներ)

Саркисян Мкртич Дивинович

ЮМОРИСТЫ ПОНЕВОЛЕ

(На армянском языке)

Խմբագիր՝ Վ. Մ. Սարգսյան
Նկարիչ՝ Գ. Յա. Յարալյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Մ. Բլբուլյան

Հանձնված է շարվածքի՝ 5.04.93 թ.: Ստորագրված է տպագրության՝ 28.04.94 թ.: Ֆորմատ՝ 70×90¹/₃₂: Տառատեսակ՝ «Նորք», թուղթ № 2: Տպաքանակ՝ 10.000: Գինը՝ պայմանագրային: Պատեր՝ № 651:
«Գիր գրոց» հրատարակչություն. Երևան-19, Գորշյան 1/27:
ՀՀ կառավարության առընթեր հրատարակչական գործերի վարչության Արտաշատի շրջանային տպարան, Մանուշյան 7



«ԳԻՐ ԳՐՈՑ»